

ISSN 1829-4375

Արցախի պետական համալսարան

Арцахский государственный университет

Artsakh State University

**Արցախի պետական համալսարանի
ԳԻՏԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

УЧЕНЫЕ ЗАПИСКИ
Арцахского государственного университета

Artsakh State University
PROCEEDINGS



ՊԲԿ 1 TOM 1 VOLUME 1

2021

Ստեփանակերտ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

СОЦИАЛЬНЫЕ НАУКИ

SOCIAL SCIENCES

Հրատարակվում է 1998թ-ից.
Պարբերականությունը՝ տարեկան երկու անգամ
Издается с 1998г. Периодичность – дважды в год
Issued since 1998. Frequency – twice a year

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
Публикуется по решению ученого совета Арцахского государственного университета.
Published by the Decree of the Academic Council of the Artsakh State University.
Խմբագրական խորհրդի նախագահ՝ ր.գ.թ. Մարգարյան Ա.Յու.
Председатель редакционного совета: к.ф.н. Саргсян А.Ю.
Chairman of the Editorial Board: Ph. D. in Philology Sargsyan A.Yu.
Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ. Ավանեսյան Վ.Մ.
Главный редактор: д.и.н. Аванесян В.М.
Editor-in-chief: Doctor of History Avanesyan V.M.
Խմբագրական կոլեգիա
Редакционная коллегия
Editorial board

Հասարակական գիտություններ

1. Սուվարյան Յու.Մ., տ.գ.դ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս –Суварян Ю. М., д.э.н., академик НАН РА - Suvaryan Yu.M., Doctor of Economics, Academician of NAS RA
2. Ղազինյան Գ.Ս., ի.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս – Газинян Г.С., д.ю.н., академик НАН РА - Ghazinyan G.S. . Doctor of Law, Academician of NAS RA
3. Մանասերյան Թ.Ն., տ.գ.դ., պրոֆեսոր – Манасерян Т.Н., д.э.н., профессор – Manaseryan T.N., Doctor of Economics, Professor
4. Ասրյան Շ.Շ., տ.գ.թ. - Асрян Ш.Ш., к.э.н. –Asryan Sh.Sh., Ph.D. in Economics
5. Բալայան Վ.Ռ., պ.գ.դ. - Балаян В. Р., д.и.н. – Balayan V.R., Doctor of History
6. Ղազարյան Հ.Ս., ր.գ.թ. – Газарян А.С., к.ф.н. –Ghazaryan H.S., Ph.D. of Philology
7. Ենգոյան Ա.Փ., ր.գ.դ.- Енгоян А.П., д.п.н. – Engoyan A.P., Doctor of Political science
8. Հարությունյան Վ.Ն., ր.գ.դ., Арутюнян В.Н ., д.ф.н. – Harutyunyan V.N., Doctor of Philology
9. Խանյան Ս.Ա., ր.գ.դ.- Ханян С.А. д.ф.н. – Khanyan S.A., Doctor of Philology
10. Կարապետյան Ի.Կ., մ.գ.դ.- Карапетян И.К., д.п.н. - Karapetyan I.K., Doctor of Pedagogics
11. Կարապետյան Վ.Ս., հ.գ.դ., պրոֆեսոր –Карапетян В.С., д.п.н., профессор - Karapetyan V.S., Doctor of Psychology , Professor
13. Հովհաննիսյան Լ.Շ., ր.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Ованнисян Л.Ш., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Hovhannisyann L.Sh., Doctor of Philology, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences.
14. Մանասյան Ա.Ս., փ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Манасян А. С., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Manasyan A.S., Doctor of Philosophy, Corresponding Member of the Armenian Natioanl Academy of Sciences

15. Մարգարյան Գ.Գ. Կ.գ.թ., /գիտ.քարտուղար/–Մարգարյան Գ. Գ., к.б.н., ученый секретарь – Margaryan G.G., Ph. D. in Biology, Scientific Secretary
16. Մխիթարյան Ա.Մ., հ.գ.թ. - Мхитарян А.М., к.п.н. – Mkhitaryan A.M., Ph. D. in Psychology
17. Մուսայելյան Ն.Գ., ք.գ.դ.– Мусаелян О. Г., д.ф.н.– Musaelyan H.G., Doctor of Philology
18. Յարամիշյան Վ.Բ., հ.գ.թ. - Ярамишян В.Б. –к.п.н. - Yaramishyan V.B., Ph. D. in Psychology
19. Մուրադյան Դ.Է., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Мурадян Д.Э. – заслуженный деятель искусств Армении – Muradyan D.E., Honored Artist of Armenia
20. Հակոբյան Ե.Ս., մ.գ.դ. - Акопян Е.С., д.п.н. – Hakobyan E.S., Doctor of Pedagogics
21. Թադևոսյան Ա.Վ., մ.գ.թ. – Тадевосян А.В., к.п.н. – Tadevosyan A.V., Ph.D. in Pedagogics

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

«ՆՈՒՅՆԱՀԻՄՔՈՒԹՅՈՒՆ» ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՅԻ
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱԿՅՄԱՆ ՁԵՎՈՒՅԹԱՅԻՆ
ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱՉԻ ՆՈՐ ՏՊԱԳՐՎԱԾ
«ՀՈՒՇԱՐՉԱՆ ՀԱՅՐԻԿԻՍ» ԳԻՐՔ- ՊՈԵՄՈՒՄ

6

Մ. ՔՈՒՄՈՒՆՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՉ

14

Լ. ԼՈՌԵՅՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ
ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ

22

Չ.ՍԱՌԱՋՅԱՆ

ԱՐՑԱԽԱՀԱՅՏԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ
ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ՝ ԸՍՏ ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆԻ
«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ՎԵՊԻ. ԿԵՐԱՊԱՐՆԵՐԸ

32

ՌՈՒՍԱՅ ԼԵԶՈՒ

Ս.ՄԿՐՏԻՉՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԲՈՒՀ-ՈՒՄ
ՌՈՒՄԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԵՉ (Մ. ՄԱՏՈՒՍՈՎՍԿՈՒ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՆՅՈՒԹԻ ՎՐԱ)

42

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ.ՓԱՇԱՅԱՆ

ՄԵԾ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

51

Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՕՐԵՆՍԴԱՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ, ՖՐԱՆՍԻԱՅԻ ՍԵՆԱՏԸ ԵՎ

ՄԵՔՍԻԿԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՈՒՄԲԸ (ՄԿԶԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ)

61

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ս. ՉԱՔԱՐՅԱՆ

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴԻՐ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

76

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Թ. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՅՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՆՈՐ
ՄԵԹՈԴՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՅՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

89

Հ.ՈՒՌՈՒՄՅԱՆ, Ա.ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ**

98

Շ.ԱՍՐՅԱՆ, Ս.ԱՍՐՅԱՆ

**ԱՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՐՈՇ ԿՈՂՄԵՐՆ ԱՐԴԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

110

Ի.ԻՇԽԱՆՅԱՆ

**ԱՐՅԱԽԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԵՎ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ**

121

Միլվա ՄԻՆԱՍՅԱՆ

ԱրՊՀ, ք.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail: silvaminasyan50@mail.ru

**«ՆՈՒՅՆԱՀԻՄՔՈՒԹՅՈՒՆ»
ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱԿՑՄԱՆ
ՁԵՎՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱՋԻ ՆՈՐ ՏՊԱԳՐՎԱԾ
«ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀԱՅՐԻԿԻՍ» ԳԻՐՔ-
ՊՈԵՄՈՒՄ¹**

Հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Շիրազի (Կարապետյան) վերջերս հրատարակված գրքերից մեկը բովանդակում է հայրապատում շարքի չհրատարակված բանաստեղծությունները:

Հոդվածում քննել ենք այդ բանաստեղծությունների «նույնարմատություն» արտահայտչամիջոցի միավորների ձևային կաղապարները: Առանձնացրել ենք երկու հարյուր հիսունից ավելի միավորներ, որոնք նույն կամ հարևան տողերում են և ապահովում են իմաստաբանական խորացումները:

Նույնարմատության միավորները համադրվել են երեսունից ավելի կառուցվածքային տիպերով՝ նույն տողում, քսաներկուսն էլ՝ հարևան տողերում, որոնք իմաստաբանական յուրատիպ խտացումներ են ապահովել: Քննված կաղապարները հավաստում են նույնարմատության հարուստ դրսևորումները տաղանդավոր գրողի չափածոյում:

¹. Շիրազ Հովհաննես, Հուշարձան հայրիկիս, Հայրապետ հրտկչ., 2017 թ. 240 էջ:

Բանալի բառեր՝ ածանց, անտիպ բանաստեղծություն, իմաստային խտացում, կառուցվածքային տիպ, հարակրկնություն, հիմնական ձևույթ, ձևային կաղապար, կրկնաբերություն, նախածանցավոր կաղապար, նույնահիմքություն, նույնարմատ, շղթայակցում, չափածո:

С.МИНАСЯН
МОРФЕМНЫЕ МОДЕЛИ ЕДИНИЦ И ИХ СОПОСТОВЛЕНИЙ
ЭКСПРЕССИВНОГО СРЕДСТВА «ՆՈՒՅՆԱՀԻՄՔՈՒԹՅՈՒՆ»
(ИДЕНТИЧНОСТЬ. ОДНОКОРЕННОЙ) В НЕДАВНО
ОПУБЛИКОВАННОЙ КНИГЕ ОВАНЕСА ШИРАЗА
«ՄՄԱՐԴՅԱՆ ԱՅՐԻԿԻՍ»

В статье рассмотрены морфемные модели экспрессивного средства «նույնահիմքություն» (идентичность) и его единиц в недавно опубликованной книге Ов. Шираза «Մարդան աիրիկիս». В сборнике включены стихи, которые не были изданы при жизни талантливого поэта и делают целостным ряд стихотворений об отце.

Нами были отделены 250 морфемных моделей единиц вышеупомянутого экспрессивного средства. Они сопоставлены парами, которые встречаются в одной и той же строке 30 структурными видами, а в разных строках- 22 видами.

Сопоставление однокоренных единиц и создание вышеупомянутого экспрессивного средства свойственны стилю классиков XX века. Ов. Шираз этим средством выразил глубокие чувства патриотизма и любви к отцу.

Ключевые слова: анафора, аффикс, морфемная модель, неизданные стихи, однокоренное, основная морфема, префиксальная модель, реприза, структурный тип, экспрессивное средство.

S.MINASYAN
MORPHEMIC TYPES OF EXPRESSIVE MEANS
«ՆՈՒՅՆԱՀԻՄՔՈՒԹՅՈՒՆ» (IDENTITY) IN THE HOVHANNES
SHIRAZ'S RECENTLY PUBLISHED BOOK «HUSHARDZAN
HAIRIKIS»

The article deals morphemic types of units of expressive means «նույնահիմքություն» (identity) in the Hovhannes Shiraz's recently published book «Hushardzan hayrikis». It contains poems which complete collection on fatherhood.

We have separate 250 morphemic types of units. There are in same or adjacent lines. This units are combined in 30 structural types.

The examined types are create the expressive means identity. This is characteristic not only of Shiraz, but also of poets of the XX century.

Key words: affix, anaphora, expressive means, morphemic type, prefixed type, redublication, root, single-root, structural type, unpublished poem.

*Ի՞նչ ավանդեմ, ա՛զգ իմ, ես քեզ, ի՛նչ պատգամեմ վերջին շնչով,
Որ խենթ սերս իրավ դառնա նոր իմաստունն Հայաստանի:
(Անտիպ էջեր, հ. I, 2018 թ., էջ 204)*

Հայ գեղարվեստական մտքի անմահ անուն Հովհաննես Թադևոսի Կարապետյանը՝ Շիրազը (Շիր/ակ+ազ/ն), յուրատիպ մտածողությամբ մեր գեղագիտական միտքը հարստացրել է նաև հայրակարոտ հոգու գեղումներով, որոնք փոխկապակցվում են հայրենասիրության, ընտանիքի ամբողջության ջերմ ապրումներին: Հեղինակի հայրապատում գործերի մեկ երրորդը լույս էր տեսել մայրապատումի¹ հետ, իսկ մնացած անտիպները նոր են հասարակությանը մատուցվում. կան նաև կրկնված բանաստեղծություններ, որոնք սակավ են:

Մեծանուն գրող Հ. Շիրազի հայրապատում գործերը ևս առատ են կրկնաբերություններով, որոնցից յուրատիպ է բառայինը (հատկապես՝ արմատականը): Հոդվածում քննել ենք բառերի նույնարմատության (նույնահիմքության)² դրսևորումները՝ կաղապարների տեսակետից (երբեմն կրկնվողն ածանցավոր կամ այլ կառուցվածքի է լինում, էականն արմատն է. Ա. Կարապետյանը Պ. Պողոսյանի նման *նույնահիմքություն* կամ *նույնարմատություն* գիտաբառերն է (եզր//տերմին) գործածել՝ գերապատվությունը տալով *նույնահիմքությանը*³), կարծում ենք, գերադասելի է *նույնարմատությունը*: Մեր ուշադրության կենտրոնում նույն կամ կից տողերի նույն նախադասությունում (պարզ՝ ասույթ⁴ և բարդ՝ լիասույթ⁵) արտահայտվածներն են, որոնք երկու հարյուրից ավելին են: Կից քառատողերի նույնարմատ կրկնությունները հանդիպում են նաև նախորդի IV և հաջորդի I

¹ *Շիրազ Հովհաննես*, Երկեր, հ. 4, Եր., Սովետական գրող հրտկ., 1986 թ., 312 էջ, հայրապատումը՝ էջ 212-301:

² Պ. Պողոսյանը նշված արտահայտչամիջոցը համարել է «միևնույն հիմքից կամ արմատից կազմված արվեստավոր գործածությամբ առաջացող ձև»՝ էջ 155 (Պողոսյան Պ., *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ*, Եր., հ. 2, 1991 թ. 338 էջ):

³ *Կարապետյան Ա.*, *Կրկնությունը և գեղյունը ժամանակակից հայերենում (գիրք Ա, Կրկնաբերություն)*, Եր., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրտկ., 2016 թ., 608 էջ:

⁴ *Ջանուկյան Գ. Բ.*, *Շարահյուսական ուսումնասիրություններ*, էջ 12, Ե., Ասողիկ հրտկ., 2003 թ., 165 էջ:

⁵ Ն. տ.:

տողերում, որոնք սակավ են: Սրանցում համադրվում են նույնարմատության և շղթայակցման դրսևորումները. օրինակ՝ *Անմահական* հոր ու մորից *անմահությունն* է միշտ ծնվում,

Մայրդ՝ Արաքս, Մասիսը՝ հայրդ, որ հավերժ ես *ծիածանվում*:

Բայց *ծիածանն* ի՞նչ է, ա՛զգ իմ, երբ Մասիսն է քեզ ողնաշար,

Դու չքնաղ ես ծիածանից, դու իմ քույրն ես սրբանշխար,

Բայց նա ծաղիկ է անցողիկ, և դավում է քույրն էլ մեկ-մեկ,

Հապա ո՞ւմ հետ քեզ բաղդատեմ, որ չմնամ դեռ սրտաբեկ (231):

Նույն նախադասության մեջ նույնահիմքության միավորների տարածված տիպն է՝ Ա+Աա (ձևությային կաղապարների համար մասնակի տարբերակով գործածել ենք էդ. Աղայանի առաջարկած հայատառ խորհրդանիշերը¹):

Ինչպես նշվել է, քննել ենք տողային ու կից տողային կաղապարային զուգադրությունները: Այս պարագայում սուր է ընդգծվում ու զգացվում հեղինակի կրկնաբերած հիմնական ձևությի բառափմաստային կարևորության արժեքը՝ գեղագիտական իմացաբանական նպատակը:

Կրկնաբերվող տարակառույց միավորների և կրկնության տարբեր դրսևորումների համակցումները Հովհ. Շիրազի ոճի արտահայտություններից են: Օրինակ՝ «Դիոգենեսի փնտրած մարդը» բանաստեղծության երկու քառատողում յուրատիպ հաճախականություն ունի *մարդ* բառի հարակրկնությունը՝ նույնասկիզբ կրկնությունը (հնագույնից եկած պարզ բանադարձում) և նույնարմատությունը՝ նույնահիմքությունը.

Կմարդանա մարդուն էլ, երբ քեզ նմանն հայտնվի,

Մարդ, որ հոր չի փորելու իր նմանի ոտքի տակ,

Մարդ, որ իր ծով ցավով էլ այլոց ցավով կցավի,

Մարդ, որ հենակ է մրջնին և թե արծվին անհենակ:

Մարդ, որ ոչ մի սուրբ գլխից ոչ մի մազ էլ չի պոկի,

Մարդ, որ սիրով ամոքի անամոքին ամենուր,

Մարդ, որ մեղսավոր ոսոխին էլ ամոքի,-

Մարդ, որ մարդ է հորս պես, մարդ, որ վարդ է *մարդաբույր* (157):

Մարդ հասկացության երազային դրականը մեծ հեղինակը համարել է իր հորը. Դիոգենեսն այսօր էլ մարդ է փնտրում՝ սուրբ լամպով:// Կհայտնվի մարդը սուրբ, երբ հայրիկս հայտնվի (157): Հուզառատ է հեղինակի մտքի կենտրոնացումը կյանքի կարևոր հարցերի վրա: Նա հոր մարդկային հատկանիշներն աստվածացրել է, դրանք արտահայտել զանազան լեզվական միջոցներով (հայրակարոտ զավակը հոգու պարտք է գեղել): Այսպիսի գեղագիտական աշխատանքը նաև բառային նորակազմությունների է մղել մեծ հեղինակին: Օրինակ՝ Շարայի *շատակեր* մակդիրի համաբանությամբ ստեղծել է երգող

¹ Էջ 146-148, **Աղայան Է. Բ.**, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը* (կառուցվածքային վերլուծություն), Ե., ՄՄՀ ԳԱ հրտկչ., 1967 թ., 404 էջ:

հողագործ հորը բնութագրող *շատաւերգ* նորակազմությունը (երգասաց ու հյուրասեր հորը հղել է Շիլլերի տողը՝ *Չար մարդիկ երգ չունեն*)։

Օ՛, *շատակեր* Շարան չէր հայրս՝ հույսն էր մեր անսուգ,

Նա *շատաւերգ* Շարան էր, բանաստեղծն էր մայր հողի (118)։

Նույնարմատության միավորները կարող են լինել նույն և կից տողերում (առավել հեռու տողերինը մեծ մասամբ կորցնում են հնչեղությունը)։

I. *Նույն տողում* կրկնաբերված հիմնական ձևույթներով երեսունհինգ տիպի կադապարային գուգորդումներ ենք առանձնացրել (նախաձանցավոր կադապարներում իշխում է *ան-* բառակազմական II-ական ձևույթը)։

1. Ա+Աա՝ Աստված-անաստված (155), աստղ-աստղիկ (219), բույր-բուրել (62, 163), գիր-գրել (165), լիր-լրումն (217), հայ-հայոց (46), մայր-մայրիկ (232), ուտ-ուտք (47), ցավ-ցավել (157)։

2. Ա+աԱ՝ Աստված-անաստված (227), հույս-անհույս (71), մահ-անմահ (40), սիրտ-անսիրտ (173)։

3. Ա+ահԱ՝ սուրբ-ամենասուրբ (171)։

4. Ա+Աաա՝ արքա-արքայանալ (75), գլուխ-գլխանի (47), ծաղիկ-ծաղկունք (42), հայր-հայրանալ (13), հայր-հայրենի (13), հուշ-հուշարար (94), մարդ-մարդանալ (111), սուրբ-սրբանալ (222), տուն-տանիք (77)։

5. Ա+Աաաա՝ հայր-հայրենիք (62)։

6. Աա+աԱ՝ ամոքել-անամոք (43, 157), նվաճում-աննվաճ (53)։

7. Աա+Աա՝ անեծք-անիծել (220), աչք-աչիկ (221), աստղե-աստղիկ (221)։

8. Աա+Աաա՝ բերան¹-բերանիկ (221), հայրիկ-հայրենյաց (12), հոնք-հոնքիկ (221), մարդուկ-մարդանալ (157)։

9. Աա+աԱա՝ բերան-անբերան (141), հենակ-անհենակ (157), հետք-անհետել (138), պահակ-անպահակ (45)։

10. Աաա+Աաաա՝ մանկուց// մանկություն (227)։

11. Աաաա+Աաաա՝ հառաչել-հառաչանք (161)։

12. Ահա+աԱաա՝ բախտավոր-անբախտանալ (200)։

13. աԱ+ Ահա՝ անմեղ-մեղավոր (140), աննվաճ-նվաճում (53)։

14. աԱ+ Աաա՝ անխտոր-խտորանք (52)։

15. ահԱա+ ահԱա՝ վերածնել-վերածնունդ (221)։

16. աԱհա+ աԱաա՝ անմահական-անմահություն (231)։

17. աԱ+աԱաա՝ անխտոր-խտորանք (52)։

18. Աաա+Աաա՝ նեղվել-նեղիկ (52)։

19. Ա+ԱԱ՝ ձյուն-ձնծաղիկ (218), չոր-չորթան (47)։

¹. Էջ 441-442, *Աճառյան Հր.*, *Հայերեն արմատական բառարան (վրիթ.)* հ. Ա, Եր., ԵՊՀ հրտկչ., 1971 թ., 700 էջ։

20. Ա+ԱհԱ՝ խունկ-խնկահամ (117), ծուխ-ծխամորճ¹ (78), հայր-հայրամոռ (105), ճակատ-ճակատագիր (215), մարդ-մարդաբույր (157), շունչ-օրինաշունչ (221):
21. Ա+ԱԱա՝ հողմ-հողմադաց (180):
22. Ա+ԱհԱա՝ հայր-հայրագիրք (105):
23. Ա+ ԱհաԱ՝ մահ-մահասփյուռ (140):
24. Ա+ԱհաԱաա՝ ոսկի-ոսկեգոծվել (62):
25. Աա+ԱհԱ՝ ամպ-ամպադեմ (163):
26. Աա+ԱահԱ՝ աչք-աչքակույր (146), մեկ-մեկուճար (50, 63):
27. Աաա+ԱաԱ՝ լուսված-լուսնկա (72):
28. Ա+Ա Աա՝ գլուխ-գլուխ հանել (157):
29. ԱԱ+ԱԱ՝ հուշերգ-հուշադրյուր (105):
30. ԱհԱ+ ԱհԱ՝ ծաղկաշոր-ծաղկածով (29):
31. ԱհԱ+ԱահԱ՝ արևահամ-լուսնահամ (82):
32. ԱհԱ+ԱհԱաա՝ արշալույս-վերջալուսվել (200):
33. աԱԱ+ԱԱա՝ անտեր²-տիրուհի (190):
34. ԱԱա+ԱաԱա՝ շշուկ-շրշալ³ (94):
35. ԱհԱ+ԱԱաԱ՝ շիրմաքար-ջաղացքար (173):

II. Հովհ. Շիրազի *Հուշարձան հայրիկիս* գրքի՝ կից (իրար հաջորդող) տողերում կրկնաբերված հիմնական ձևություններով 124 կադապարներ են ձևավորվել, որոնք 26 տիպի զուգորդումներով են ներկայանում.

1. Ա+Աա՝ ախպեր// ախպերիկ (162), Աստված// անաստված (219), բոստան// բոստանչի (35, 168), գառ// գառնուկ (30, 132), գմրուխտ// գմրուխտել (170), թուրթ// թթենի (181), ծեծ// ծեծել (204), հայ// հայոց (222), հայր// հայրիկ (30, 62, 215, 222), մայր// մայրիկ (222), մատաղ-մատղել (30), մարդ// մարդուկ (157):
2. Ա+Աաա՝ Աստված// Աստվածություն (215), թուրք// թուրքանալ (204), ծաղիկ// ծաղկունք (12, 205), հայր// հայրանալ (217), հավատ// հավատամք (207), հարս// հարսնացու (85), մարդ// մարդանալ (157):
3. Աա+Աա՝ դալկել// դալուկ (217), լաց// լալ (220), կորչել// կորուստ (222):
4. Աա+աԱ՝ ամոքել// անամոք (157):
5. աԱ+Ահաա՝ անբախտ// բախտավորվել (9):
6. Աաա+Աաաա՝ վարդենիք// վարդանոցվել (37):
7. Ա+ԱԱ՝ բույր// համբույր (82), հուշ// հուշաշխարհ (217):
8. Ա+ԱհԱ՝ այլուր// այլափոշի (173), գայլ// գայլապաշտ (11), լեզու// լեզվաթուր (150), ծաղիկ// ծաղկեծաղիկ (37), հայր// հայրահող (152), հայր// հայրամոռ (105),

¹ Մորճ/չ-դալար ոստ, ճյուղ, էջ 349, **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան (վրհր.), հ Գ, Ե., ԵՊՀ հրտկչ., 1977 թ., 636 էջ:

² էջ 401, **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան (վրհր.) հ. Դ, Եր., ԵՊՀ հրտկչ., 1982 թ., 674 էջ:

³ էջ 401, **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան (վրհր.) հ. Գ, Եր., ԵՊՀ հրտկչ., 1977 թ., 636 էջ:

հող// վշտահող (192), յոթ// յոթնահող (44), ոսկի// ոսկեդար (62), սուրբ//հայրասուրբ (128), ցեղ// ծաղկացել (53), փոշի// ալրափոշի (173):

9. Ա+ ԱհԱ՝ մահ// մահասփյուռ (140):

10. Ա+Ա Ա՝ այգի// այգի-բոստան (37):

11. Ա+ԱհԱ՝ ծաղիկ// ծաղկացել (53):

12. Ա+ԱհԱա՝ գառ // գառնամայել (181), հայր// հայրագիրք (105):

13. Ա+ԱԱաԱ՝ ջուր// ջաղացքար (173):

14. Ա+ԱհԱ՝ ծաղկել// ծաղկեծաղիկ (37), ծխել // ծխախոտ (49):

15. Ա+ԱհԱա՝ հայրիկ // հայրախոսիկ (105)

16. Ա+Ա հ Աա՝ մեկ// հազար ու մեկ (35):

17. Աաա+ԱհԱ՝ ծաղկունք// ծաղկեփունջ (171), մայրանալ// մայրամոռ (75):

18. ԱհԱ+ԱհԱ՝ ալրափոշի// ալրաբույր (173), շատակեր-շատաերգ (118):

19. Ա+ԱհԱ+ԱհաԱաա՝ ոսկի/ոսկեդար// ոսկեգոծվել (62):

20. ԱահԱ+ԱահԱ՝ մեղրածոր// Մեղրագետ (209):

21. Ա+աԱ+ԱհԱա՝ ծաղիկ// անծաղիկ// ծաղկացել (53):

22. Ա+Աա+ԱհԱա+ԱհԱա՝ հայր// հայրիկ// հայրանալ// հայրագիրք (105):

Այսպիսով՝ նույնարմատության (նույնահիմքություն) միավորները, որոնք տարաբնույթ կառուցվածքային տիպերով են ներկայանում, իրենց հերթին ստեղծում են խմբեր, որոնք շատ են, և ուշադրության կենտրոն արմատները հուզարտահայտչական երանգով արժևորվող իմաստաբանական հզոր միավորներ են դառնում: Նրանք հիմնականում կատարում են հակադրության դեր (այս պարագայում հիմնականում ստեղծվում են *պարզ-ժխտական ածանցով* միավորների զուգադրություններ) և աստիճանավորման դեր (միավորները հիմնականում ներկայանում են *պարզ և համադրական* բաղադրություն տիպերով):

Գրականություն

1. Աղայան Է. Բ., *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը* (կառուցվածքային վերլուծություն), Ե., ՍՍՀ ԳԱ հրկչ., 1967 թ., 404 էջ:

2. Աճառյան Հր. Հ., *Հայերեն արմատական բառարան* (վրիհր.) հ. Ա, Եր., ԵՊՀ հրտկչ., 1971 թ., 700 էջ:

3. Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան* (վրիհր.) հ. Գ, Եր., ԵՊՀ հրտկչ., 1977 թ., 636 էջ:

4. Աճառյան Հր. Հ., *Հայերեն արմատական բառարան* (վրիհր.) հ. Դ, Եր., ԵՊՀ հրտկչ., 1982 թ., 674 էջ:.

5. Կարապետյան Ա. Ս., *Կրկնությունը և զեղչումը ժամանակակից հայերենում* (Կրկնություն), գիրք Ա, Ե., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրտկչ., 2016 թ., 608 էջ:
6. Շիրազ Հովհ. Թ., *Հուշարձան հայրիկիս*, Հայրապետ հրտկչ., Եր., 2017, 240 էջ:
7. Պողոսյան Պ. Ս., *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները*, Եր., հ.2, 1991, 338 էջ:
8. Զահուկյան Գ. Բ., *Շարահյուսական ուսումնասիրություններ*, Ե., Ասողիկ հրտկչ., 2003 թ., 165 էջ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ր.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

Մ. ՔՈՒՄՈՒՆՅ

բ.գ.թ., դոցենտ (Գորիս)

E-mail: prof1972@mail.ru

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

(Վիճահարույց ստուգաբանություններ,
բնիկ և օտար բառային
ընդհանրություններ կամ
հանդիպադրումներ)

Սյունիք-Արցախ բարբառախմբում 90-ից ավելի բառեր կան, որ արտահայտում են տարածական հարաբերություններ, ծագմամբ ընդհանրություններ ունեն հնդեվրոպական լեզուների հետ: Այդ բառերից են՝ **կէտ (кет)**, **քաշ (каш)**, **զէի (зей)**, **դօլ (дол)**, **կոդ-մ (кох-м)**, **քիփ (кип)**, **ձօնդ (чонд)**, **ծիպ-լի (ципли)**, որոնք լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների ազդեցությամբ բարբառախմբում ձևով և իմաստով փոփոխություններ են կրել: Այս բառերի շուրջ անցկացված բառաքննական փորձերը կարող են օգտակար լինել հայոց լեզվի պատմության, համեմատական լեզվաբանության և հայ բարբառագիտության բնագավառների համար:

Բանալի բառեր՝ Սյունիք-Արցախ, բարբառ, բառապաշար, հնդեվրոպական, ստուգաբանություն, փոխառություն, բառիմաստ, տարածական հարաբերություն:

М. КУМУНЦ

**О НЕКОТОРЫХ ДИАЛЕКТИЧЕСКИХ
АРХАИЗМАХ, ВЫРАЖАЮЩИХ
ПРОСТРАНСТВЕННЫЕ ОТНОШЕНИЯ
(Спорные этимологии, общность родных и
иностранных слов или встреча слов)**

Сюникско-арцахская диалектная группа насчитывает более 90 слов, которые выражают пространственные отношения и имеют сходство с индоевропейскими языками. Примеры этих слов: կէտ (кет), քաշ (каш), զէհ (зей), ղօլ (хол), կողմ (кох-м), քիփ (кип), ձօնդ (чонд), ծիպ-լի (ципли), которые под влиянием внешних и внутренних факторов развития языка претерпели изменения по форме и значению в диалектной группе. Эксперименты по изучению этих слов могут быть полезны в области истории армянского языка, сравнительного языкознания и армянской диалектологии.

Ключевые слова: Сюник-Арцах, диалект, лексика, индоевропейский язык, этимология, заимствования, значение слова, пространственные отношения.

M. KUMUNTS

**ABOUT A FEW DIALECTICAL ARCHAEOLOGIES
EXPRESSING EXPANDING RELATIONS
(Controversial etymologies, native and foreign word
similarities or encounters)**

There are more than 90 words in Syunik-Artsakh dialectal group, which express expanding relations and have similarities with Indo-European languages. For example կէտ (ket), քաշ (qash), զէհ (zeh), ղօլ (ghol), կողմ (kogh-m), քիփ (qiph), ձօնդ (tchond), ծիպ-լի (tsip-li), which have undergone changes under the influence of external and internal factors of language development in the dialectal group in their meaning and shape. The lexical experiments conducted around these words can be useful for the fields of the history of the Armenian language, for comparative linguistics and Armenian dialectology.

Key words: Syunik-Artsakh, dialect, vocabulary, Indo-European, etymology, borrowing, literal, spatial relationship.

Մյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում բավականին շատ են այն բառերը, որոնց զուգահեռները գտնում ենք ոչ միայն հայ մատենագրության մեջ, այլև հայերենի հետ հնագույն շրջանում հնարավոր ընդհանրություններ ունեցող լեզուներում: Ժամանակի ընթացքում լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների (ժողովուրդների տեղաշարժեր,

քոչվոր ցեղերի մուտքը պատմական Հայաստան և այլն) ազդեցությամբ շատ բառեր ձևով և իմաստով բազմապիսի փոփոխություններ են կրել: Այդուհանդերձ, պատմահամեմատական լեզվաբանության առաջադրած ուսումնասիրության մեթոդների շնորհիվ փորձեր են արվում վերականգնելու նախնական ձևերը, որոշելու ծագումնաբանական հարցեր, առանձնացնելու ազդեցությունները:

Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի՝ տարածական հարաբերություններ արտահայտող բառերը բավականին շատ են. դրանցից փորձել ենք քննել այնպիսիք, որոնք լեզվաբանության տարբեր տեսանկյուններից խնդրահարույց են:

Հ.-ե. ***geid-** «խողտացնել, խողտալ, խոցել, մեխել, կպցնել, հաստատել, անցնել, շարել, շփոթեցնել, շփոթել» արմատից հայերենում բավական անվանումներ են ձևավորվել: Արդյունքում հարստացել է համանունների շարքը: Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում պահպանվել են իմաստներ, որ չկան կամ նվազ տարածում ունեն հայերենի մյուս տարբերակներում¹: Այսպես՝ **կէտ** «կետ, նշանակետ» իմաստից բացի կան՝ 1. **կէտ** «շնաճանձ», 2. **կէտ** (-անել, կէտել) «1. երբ հորթերը միանգամից ծառս են լինում և փախչում, պոչները բարձրացրած այսուայնկողմ վազվզում», 2. **կէտ** «կետ, նշան», 3. Արց. **կէտ** «արգելք, դժվարություն», որոնք, կարծում ենք, բոլորն էլ ծագում են նախաձևից և պահպանվում են բարբառախմբում (հմմտ. վերոնշյալ իմաստները):

Եզր բառին հոմանիշ է բարբառախմբի **զէհ** «եզր, ծայր, հարթության հատման մասը, կողմը»: Նշվում է արևելյան լեզուներից փոխառությունների շարքում²: Պրսկ. **zeh** /**زِه**/ (Ասոր. թյուրք. **zeh** «զգեստի ծայրերին կարված երիզ» և այլն) համանունների իմաստներն են՝ «աղեղնալար», «ծննդաբերություն», «կեցցե», «թառ», հնգ. «բարակ թել՝ ոչխարի աղիքից, մետաքսից կամ մետաղից»: ***Eg hero-** (լատ. **Acheron**, Հոմ. հուն. **Ἀχέρων**) հիմքի ժառանգորդներից իրանականը բացակայում է³, իսկ հայերենի բարբառներում եզր **բառը** հնչյունափոխական զանազան տարբերակներով է վկայվում, ինչպես՝ Հձ. **իզել**, Սվ. **իզզիք**, Մրդ. Սլմ. **յէրզ**, Երև. **յէրզը**⁴ և այլն: Չենք կարող ասել՝ բարբառախմբի **զէհ**-ը այդ տարբերակներից մեկն է (գրք. հոլովված ձևի՝ **ց՝ յէզէր (եզէր) > զէր > զէհ (ը > օ > հ)**, և պատահական են ձևային և նրբիմաստային ընդհանրությունները արևելյան

¹ **Ջահուկյան Գ. Բ.**, Հայ բարբառագիտության ներածություն (վիճակագրական բարբառագիտություն), Երևան, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., 1972, էջ 286:

² **Մարգարյան Ա. Յ.**, Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, Արցախի պետական համալսարան, 2013, էջ 136 (այսուհետև՝ ՂԲԲ):

³ **Pokorny J.**, Indogermanisches etymologisches Wörterbuch, vol. 1, Bern, Munich: "A. Francke", 1959, p. 291-292 (այսուհետև՝ Pokorny):

⁴ Բոլոր տարբերակները տե՛ս՝ **Աճառեան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հատ. Բ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1926, էջ 6-7 (այսուհետև՝ ՀԱԲ):

լեզուներում առկա բառի հետ, թե՞ հնարավոր է՝ բարբառախմբից անցած և արևելյան լեզուներում առկայացած բառ է: **Zeh/օ** / արմատով ջրի հետ կապված հատուկ և հասարակ անուններ կան արաբ. և պարսկ.¹, իսկ թուրքերենի բարբառներում բառն ունի նույն «եզր» իմաստը՝ **ze'h** || **zeh** «անկյուն, ավամերձ կտրուկ գիծ»: Հենց այս հարցերի առկայությամբ բարբառախմբի **զեհ**-ը դեռևս չի կարող համարվել **եզր** բառի բարբառային տարբերակը, բայց և առկա է մնում նրա ծագումը, նոստրատիկ հնարավոր հիմքեր ունենալու հարցերը:

Հակված ենք ընդունելու, որ **կողմ** բառի բարբառախմբի տարբերակը **դոլ**-ն է՝ առանց **մ** (մն) մասնիկի՝ **կոլ**²: **Կ** > **դ**-ի համար հմմտ. **կոճ** || **դոճ** և այլն: «Պատահական նմանություն ունի թուրք. **qol** /قوله/ «թև, կողմ»³: Հավանական է՝ **դ** և **լ** փոփոխությունից հետո է կատարվել բառասկզբի հնչյունափոխությունը, և արդյունքում նմանվել են բնիկ և օտար ձևերը, որի հետևանքով էլ **կող**-**մ**(ն) արմատը պահպանվել է **կոխք**, **կոխքավ**, **կոխկինա** և այլ բաղադրություններով, իսկ **դոլ**-ը՝ «կողմ» իմաստով՝ **դոլավ**, **դոլան**, **դոլանի** և այլն: **Կողքը հաստ** || **դոլը հաստ** «համառ» իմաստը, կարծում ենք, մեր ենթադրության օգտին է վկայում:

Հայերենում **քաշ** նշանակում է՝ 1. «մեջք», 2. «քարշ», 3. «մի տեսակ քար», 4. **քաշ-իկ** «պարան», այլն՝ **քաշկ**, **քաշկեն**, **քաշկու**, **քաշ(ի)մ** և այլն⁴: Այս ամենի դիմաց *Մյունիք-Արցախ* բարբառային բառապաշարում կան համանուններ՝ **քաշ** «կշիռ, կշեռք», **քաշ** «1. ցած, 2. փոխ. վատ», **քաշ** «արծվի տեսակ՝ մուգ գույնի» (**թռչնաքաշտ**)⁵, **քաշ** **քարշ** արմատից՝ **քաշ տալ** «քաշել», ինչպես և **քաշկ(ը)** «քաջք՝ առասպելական ոգի», **քաշ կյան** «քարշ գալ», **քաշկատ** || **կաշկատ** «քարակոյտ», **քաշվել** «1. հեռանալ, 2. մեկուսանալ», **քաշվել** «ամաչել» և այլն: Ինչպես նկատում ենք, բավական հասկացություններ կան **քաշ** ձևից, որոնք, սակայն, զանազան երևույթներ և գործողություններ են արտահայտում: Սրանցից փորձենք քննել **քաշ** «ցածր, ներքև» իմաստով բառը, որ Հ. Աճառյանը նշում է Ազլ. (քօշ) Գնձ. Ղզ. Ջղ. «ցած, ոչ բարձր» և միայն Արց.՝ «վար» իմաստներով⁶: Բարբառախումբը այս արմատից ունի՝ **քաշ օնել**, **քաշ քիցել** «իջեցնել», **քաշ քիցել** «քաշ գցել, ներքև գցել, կախել», **քաշիկ** «ցածրիկ», **քըշանալ** «1. նվազել, 2. ներքև իջնել, 3. կռանալ, 4. ընկնել, պակասել, 5. նվաստանալ» և

¹ <https://www.vajehyab.com/?q=%D8%B2%D9%87&d=en>:

² **Հովհաննիսյան Լ.**, Ղարաբաղի (Արցախի) բարբառի մի քանի բառերի ստուգաբանություն, Պատմա-բանասիրական հանդես, թիվ 1, Երևան, 2019, էջ 179:

³ ՀԱԲ II, էջ 622:

⁴ Այս բոլորը տե՛ս՝ ՀԱԲ, էջ 776:

⁵ «Իսկ թռչնաքաշտ որ մեծամեծ են եւ սևաթոյր, սլացաւ ի վերուստ ի վայր, եւ եկն ի սեղան թագաւորին...» (**Օրբէկեան Ստեփաննոս**, Պատմութիւն նահանգին Միսական, հատ. Ա., Բ գործատուն Կ. Վ. Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 93 (այսուհետև՝ Օրբէկյան 1859):

⁶ **Աճառեան Հր.**, Հայերէն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածո, Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, Թիֆլիս, 1913, էջ 1093:

այլն, որ, կարծում ենք, բարբառախմբում բացակայող **ներքն** հասկացությանն է փոխարինում:

Սյունիք-Արցախ պատմական վայրում **քաշ** արմատով կան բազմաթիվ տեղանուններ՝ **Քաշաթաղ** (**Քշթաղ**, **Քաշաթաղք**, **Քաշտաղ** և այլն), **Քաշունիք**¹, **Քաշին քար**, **Քաշիմարգ** և այլն²: Նշենք, որ **Քաշաթաղը** և այլ տեղանուններ առնչակցվում են ցեղանվան հետ՝ «Քաջբերունի, որը հավանորեն ստացվել է Քաջբերունի ձևից, նշանակելով **kaš** (=kaška կամ gašga) ցեղից»³, որ քիչ հավանական է թվում: «Ներքն» իմաստով բարբառախմբին փոխատու հիմնական լեզուներում **քաշ** արմատով բառ չի հանդիպում. թյուրք. ունի **kaş** «հոնք»⁴, համանուն՝ «ծայր»՝ պրսկ. փոխառյալ⁵: Մատենագրական վկայություններ նշված իմաստներով նույնպես չեն հանդիպում, ուստի կարծում ենք՝ ձևով և իմաստով առավելապես մոտ է հ.-ե. ***kau-** «տապալել, իջեցնել, վար առնել, վիատեցնել», ածանցված ձևը՝ ***kau-no-s** (> ***kau-s(k)-**) «վայր իջեցնել, նվաստացնել, խոնարհ», հմմտ.՝ հուն. **κυνός, κύνος** «ղժգոյն, վատ, խոժոռ» < **κείω** «այրել»⁷, գոթ. **hauns** «ցածր, խոնարհ», լիթ. **kūniūš, kūvētis** «ամաչել»⁸, որոնց համեմատությամբ բարբառախոսմբն ունի՝ **կրլոխը քաշ** «ամոթահար», **կրլոխը քաշ անել**, **կրլոխը քաշ քիցել** «ամաչել, ամոթահար լինել» (իմաստային առնչակցությունը ***yeis-** «ծռել, կորացնել» հիմքի հետ քիչ հավանական է) : Տեղանուններից համեմատելի է **Քաշաթաղ**-ը (իբրև 1300 թվականից⁹ կոչվում է **Խոժոռաբերդ**). «Աղահեջ՝ գաւառ, որ այժմ կոչի **Քաշաթաղ** և **Խոժոռաբերդ** (ընդգծումը՝ Մ.Ք.)»¹⁰: **Քաշ** արմատի տեղանվան մեջ բնիմաստի պահպանման օգտին է խոսում նաև մի հանգամանք. պատմական Սյունիքի **Քաշաթաղ** և **Խոժոռաբերդ**-ը իմաստային պատճենմամբ թյուրք. ցեղերի կողմից անվանվել է **Լաշին**, որ նշանակում է **քաշ** թռչուն, հմմտ.՝ **laçın**¹¹ || **laçin** «1.բազե կամ բազեի

¹ Այս մասին տե՛ս՝ **Ղարազորյան Ա.**, Սյունիքի Բաղը և Քաշունիք գավառների մի շարք բնակավայրերի տեղադրության շուրջ, *Լրաբեր հասարակական գիտությունների*, № 1, 2002, էջ 109-117:

² **Հակոբյան Թ.Խ.**, **Մելիք-Բախշյան Ստ.Տ.**, **Բարսեղյան Հ.Խ.**, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հատ. V, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1998, էջ 298-299:

³ **Ղափանցյան Գ. Ա.**, *Հայոց լեզվի պատմություն (հին շրջան)*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1961, էջ 51:

⁴ <https://www.nisanyansozluk.com>.

⁵ *Azərbaycanca dilinin izahlı lügət*, cild 1, «Şərq-qərb», Baki, 2006, s. 648.

⁶ *Հունարենի իմաստները քաղեցինք այս գրքից՝ Phavorinus G., Dictionarium magnum*, 1712, p. 416.

⁷ *Բնաստները տե՛ս՝ Դворецкий И.Х., Древнегреческо-русский словарь, том 1, Государственное издательство иностранных и национальных словарей, Москва, 1958 с. 858.*

⁸ *Pokorny*, p. 535.

⁹ **Հիւրշման Հ.**, *Հին հայոց տեղոյ անունները (Հայոց աշխարհին պատմական տեղագրութեան մասին ուսումնասիրութիւններով)*, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1907, էջ 226:

¹⁰ Օրբելյան Ա 1859, էջ 51:

¹¹ *Derleme sözlüğü, Türkiye'de Halk Ağzından, IX, 2-ci baskı, Ankara üniversitesi , Ankara, 1993, s. 3057-3058.*

պես մի թռչուն, 2. կտրուկ, 3. կոպիտ»¹: Ձևիմաստային առումով այս խմբին է աղերսվում նաև **քաշ** «նիհար, տգեղ, չեչոտ» բառը, որ առանձնապես նույնացվում է թռչնի հետ. արդ՝ հնարավոր է՝ ***kau-** բնիմաստից է ստացել թռչնանունը, որ նշվում է անհայտ ծագմամբ բառերի շարքում²: Հավանական է, որ բարբառախմբի **քըշըսողան, քըշըսըխտոր** (համապատասխանաբար հարադրությամբ՝ **քաշու/ի սողան**) բարդությունները **քաշ** բաղադրիչի «ներքև, ցած» իմաստներով են բաղադրված:

Կիպ և բարբառախմբի **քիփ** «կպած, հարած» բառերը բացակայում են Գ. Ջահուկյանի³ և Կ. Բաքի⁴ ներկայացրած հնդեվրոպական ծագման բառիմաստային խմբում: Հետագա ուսումնասիրություններում, սակայն, աղերսվում է հ.-ե. նախաձևի հետ. «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ ***gʷēb-** «լորձնոտ, կպչուն, մածուցիկ» արմատից. հմմտ. իսլանդերեն *kvap(i)* «դոնդոդ, դոնդոդանման նյութ»⁵: Բարբառախմբում առկա է նաև **քիփիկ/զ**, որ սխալմամբ բխեցվում է⁶ թյուրք. **kip** «ձուլվել» արմատից: Կարծում ենք՝ հայերենի **կիպ-քիփ** և թյուրք. **kip** հանդիպադրումից իմաստային նրբերանգներ են առաջ եկել: Նիշանյանի բառարանում նշվում է մի հնացած ձև՝ արտասանական **gib** կամ **gip** նախաձևից⁷: Իսկ ինչ վերաբերում է ***kēp** (տունգ. ***keb-te** «գոտի, որովայն, փորը մեծացնել», մոնղ. ***keberdeg** «մարմին»)՝ թյուրք. ***gebde** «մարմնի վերին հատվածը», այլև ***kēp** թյուրք. ***gēp** «ձև, օրինակ, պատկեր»⁸ հիմքային ձևերին և իմաստներին, ապա նկատելի է, որ թյուրք. խմբում չեն արտացոլում այն նույն ձևն ու իմաստը, ինչպես հայերենում **կիպ-քիփ** տարբերակները: Կարելի է կարծել, որ թյուրք. **kip**-ի համանուններից «կից, կողմը, կողմնակից» իմաստով բառը հայերենից է անցել թյուրքերենին:

Կըլդ || կէլ || կյէլ «1. բթամատից մինչև ճկույթ ընկած հատվածը, դրա չափը, բացվածքը, 2. մի թզի չափով, 3. փոխ. փոքր», այստեղից՝ **կյէլ անէլ** «թիզով

¹ Tarama sözlüğü, Türk dil kurumu yayınları; 2-ci baskı, Ankara üniversitesi basımevi, Ankara, 1996, Kad. XIV. 169. s. 2785.

² Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ», Ե., 2010, էջ 776-777 (այսուհետև՝ ՀՄԲ):

³ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Հայկական ՄԱԿ ԳՄ հրատ., Երևան, 1987, էջ 215-216:

⁴ Buck C. D., A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages (A contribution to the history of ideas), University of Chicago press, Chicago & London, 1988, p. 829.

⁵ ՀՄԲ, էջ 406:

⁶ ՂԲԲ, էջ 813:

⁷ <https://www.nisanyansozluk.com/?k=kip>:

⁸ Starostin S. A., Dybo A. V., Mudrak O. A., An etymological dictionary of Altaic Languages, vol. 3, Brill, Leiden, Boston, 2003, p. 667-668.

չափել», կյրեղ չափել «թիզով գուշակություն անել»¹ բառը, ենթադրվում է, ծագում է հ.-ե. *skel- արմատի «կրճատել, կտրել» իմաստներից²:

Ծիպ-լի || ցիպ-լի «1. փոքր, բարակ, 2. ճկույթ, 3. ճյուղ, բարակ ճյուղ, ճիպոտ, դալար գավազան» բառի բաղադրություններից են՝ **ծիպլի-ծապլի** «բարալիկ», **ծիպլիպուլի** (անել) «նվազ կարողությամբ (աշխատել)», **Ծիպլի Մատուր** (հատկանունից) «շատ նիհար ու փոխտ մարդ»³: Հայերենի բարբառներում բառս առանձնապես տարածված չէ: Հ.-ե. աղերսներ են նկատվում բարբառախմբի **ցիպ-լի || ծիպ-լի** < *k'iph-՝ *sk'iph⁴ (հմմտ. ցեռ - ծըլբսո < sk'er(d)-)⁵՝ «բարակ ճկուն ճյուղ կամ արմատային մաս», հմմտ.՝ սնսկ. śipha (शिफा) «բարակ ձող, արմտիք», հուն. κίφος «կուզ, ճկվող», լիթ. šipulys «ծեղ, փայտի բարակ տաշեղ»: Եթե ընդունում ենք, որ **ցիպ-լի || ծիպ-լի** արմատից են նաև բարբառախմբի՝ իմաստով և ձևով մոտ **ծափան** «1. նիհար ու նվազ, փոքր, բարակ, 2. Գոր. փոքր բազե», **ծափլի** «1. ձագար, նուրբ ու բարակ» բառերը, ապա պահանջվում է պարզաբանում ձայնավորական փոփոխությունների շուրջ: Ենթադրվում է, որ **ծափ-լի**, **ծափ-**ան բառերում **ափ**-ի առկայությունը պայմանավորված է ոչ թե իրանական ազդեցությամբ⁶, այլ հ.-ե. *i-ի՝ շեշտի ազդեցությամբ ձևավորված փոփոխությամբ՝ **ի > ըէ > ափ**: Բարբառային բառերի ոչ ձայնեղից հետո քմային **ափ**-ն ձևավորվել է **ի > ըէ (ծիծաղ > ծըլծաղ, ծիծ > ծըլծ, ծիր > ծըլը)** օրենքը դադարելուց հետո, և, փաստորեն, սակավաթիվ բառեր շարունակել են կրել ձայնավորական փոփոխությունները առավել բաց արտասանության և պարզեցման միտումով: Այդ են վկայում **ծիպլիպուլի (ծըլպլէպուլի) > ծափլիպուլի, ծիպան (ծըլպան) > ծափան, ծէխ (հ.-ե. *g'huel-? > ծըլէխ) > ծափ** տարբերակները, իսկ որոշներում արտասանական պարզեցումը առավել նկատելի է **պիծ (պըլծ) > պաձ > պած**:

Հնարավոր է, որ արմատից բարբառային կազմություններ լինեն՝ **ծիկոի-միկոի** «փոքր, բարակ», **մին պիծի** (որափոխությամբ), այլն՝ **պիծի (պուճո՞ւր)**, «մի քիչ, մի փոքր»:

¹ ՂԲԲ, էջ 376:

² Pokorny, p. 545-547.

³ Քաշայթաղի հայտնի Ծիծենավանքին վերաբերող ավանդազրույցներում առհասարակ սրբավայրի անվան առաջացումը կապվում է «բարակ, ճկույթ» և նման իմաստով հասկացությունների հետ (այս մասին տե՛ս՝ **Լալայան Վ.**, Հայոց դիցաբանության և քրիստոնեության համեմատություն, «Հայրենիք», Երևան, 2009, էջ 46-47):

⁴ Հ.-ե. Դհ-ն (փ) բարբառախմբում:

⁵ Եթե **ծիծենակ // ցիցենակ, ծիլանգ // ցիլանգ** և այլ տարբերակներում **ծ** և **ց** հնչյունների փոփոխությունը համարվում է բարբառային իրողություն, ապա, կարծում ենք, նույն տրամաբանությամբ չեն ձևավորվել **ծնել-ցինգնել, ծըլծ-ցիտթ** բառերը (առանձին ծագմամբ են զրկվում կամ, որ ավելի հավանական է, փոփոխությունը նախահայերենում է կատարվել և որպես համանուններ անցել հայերենին):

⁶ Այս ազդեցությունների մասին կարելի է տեսնել՝ **Աղաբեկյան Մ.**, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր), պրակ 3, Երևան, 2010, էջ 105:

Ճօնդ «ծայր, եզր» բառի ստուգաբանական փորձ մեզ չի հանդիպել: Հայերենին հայտնի է **ճոնդ** «1. ճոթ, 2. կարկատանի կտոր» (նշվում է որպես փոխառյալ)¹: Չենք կարող վստահ լինել **ճօնդ** և հ.-ե. ***g'enu-** «ծնոտ» երկրորդական հիմքի ***g'onsdh-** հնարավոր առնչակցության հարցում: Ժառանգորդ լեզուներից գուգահեռում ենք լիթ. **žándas** «ծնոտ, ստորոտ», և լատիշ. **zuōds** «ծնոտ, սուր եզր» բառերը: Հենց վերջին իմաստն է արտահայտված բարբառախմբի **ճօնդ-պուճախ** (**ճընդըպուճախ**) բարդության մեջ՝ «եզր-անկյուն, անկյուն». հմմտ.՝ **ճօնդ-պուճախ չօնի/է** «շատ է, մեծ է» (ասվում է տարածքի, ունեցվածքի մեծ-շատ լինելու վերաբերյալ): Մենք չկարողացանք թյուրք. պրսկ. վրաց. **ճոնդ** բառի համապատասխան գուգահեռները ընտրել: Այդպիսի տվյալներ կամ բացակայում են, կամ ձևիմաստային առումով չեն համապատասխանում քննվող բառին: Կարծում ենք, որ հայերենին հայտնի **ճոն** «վրան, տակը», **ճոն** «խաղախորդ, մորթագործ, կաշեգործ»², **ճոն** «հաճար»³, **ճոն** «դերձակ» (վրաց. փոխառություն) բառերը նույնպես հնարավոր ընդհանրությունները չեն արտահայտում **ճօնդ** բառի հետ: Մի դիտողություն. **կըռճօնք**, **կըռօճ** բառերի վերջադիր **-ճօնք**, **-օճ** հնչյունախմբերով ձևերը այլ քննություն են ենթադրում:

Այսպիսով՝ նկատում ենք, որ բազմաթիվ վիճահարույց հարցեր են առաջանում **կէտ** համանունների, **զէհ-եզր**, **կողմ** – **դօլ**, **կիպ-քիփ**, **քաշ**, **ճօնդ-ճոն** բառագույգերի, **ծիպ-լի** բառերի ծագումնաբանական հարցերը քննելիս: Այդուհանդերձ, չենք կարող անտեսել դրանց՝ հնդեվրոպական լեզուների հետ ունեցած աղերսները: Բարբառախումբը տարածական տարբեր հարաբերություններ արտահայտող 90-ից ավելի բառեր է վկայում, որոնք ծագումնաբանորեն հնդեվրոպական տեղորոշում ունեն: Մի փոքր մասն է ներկայացվածը, որի շուրջ անցկացված բառաքննական փորձերը կարող են օգտակար լինել հայոց լեզվի պատմության, համեմատական լեզվաբանության և հայ բարբառագիտության բնագավառների համար:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.թ. Հ.Ս.Ղազարյանը:

¹ **Մալխասեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, Հայկական ՍՍՌ Պետ. հրատ., Երևան, 1944, էջ 223:

² **Գայանեան Յ. Թ.**, Բառարան գանձարան հայերեն լեզուի, տպ. Գալֆա, Գահիրե, 1938, էջ 315:

³ ՀԱԲ III, էջ 211:

ՀՏԴ 808.1Գրականության դասավանդման մեթոդիկա**Հուսինե ԼՈՌԵՅՅԱՆ****Երևանի Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոց****E-mail: loretsyan77@mail.ru**

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ

Հոդվածում քննարկվում են տարրական դպրոցի մայրենիի դասագրքերում գետեղված Հ. Թումանյանի ստեղծագործությունները, ներկայացվում են այն ցուցումն ու մեթոդական քայլաշարը, որի կիրառման դեպքում Թումանյանի գեղարվեստական խոսքի գունեղությունը, զգացմունքների զուլալությունը կրմբռնվեն աշակերտների կողմից: Հեղինակը կարևորել է այն, որ Թումանյանի ստեղծագործությունների ուսումնասիրման ճանապարհով կորսվող գեղարվեստական խոսքի նկատմամբ կրտսեր դպրոցականների հետաքրքրությունը:

Մասնավորապես հեղինակը կանգ է առնում դրանց բառապաշարի, ազգային արժեքների ձևավորմանը նպաստող հնարավորությունների վրա:

Հետազոտման նպատակը: Հետազոտման նպատակն է, <<Մայրենի 1-4 դասարաններ>> դասագրքերում գետեղված Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների ուսումնասիրումն ու վերլուծությունը:

Հետազոտման խնդիրներ: Ներկայացնել <<Մայրենի 1-4 դասարաններ>> դասագրքերում գետեղված Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների կրթադաստիարակչական նշանակությունը կրտսեր դպրոցականի կյանքում:

Բանալի բառեր՝ բանաստեղծության ուսուցում, բառապաշար, ազգային արժեքներ, հեքիաթ, ուսուցման արդիական մեթոդներ, կրտսեր դպրոցականի առանձնահատկություններ:

Л. ЛОРЕЦЯН

ПРОИЗВЕДЕНИЯ ТУМАНЯНА В УЧЕБНИКАХ РОДНОГО ЯЗЫКА

В данной статье рассматриваются произведения Ованеса Туманяна, помещённые в учебники родного языка начальной школы, представляются те указания и методические шаги, при применении которых, ученикам усвоится чистота чувств и пестрота художественного слова Туманяна. Автор посчитал важным путем изучения произведений Туманяна проявить интерес к художественному слову у младших школьников.

В частности, автор останавливается на возможностях развития словарного запаса и способствования образования народных ценностей.

Цель исследования: Целью исследования является изучение и анализ литературных произведений Ованеса Туманяна в учебниках “Родной язык 1-4 классы”.

Проблемы исследования. Представить образовательное значение произведений Ованеса Туманяна в учебниках “Родной язык 1-4 классы” в жизни учеников младших классов.

Ключевые слова: преподавание поэзии, словарный запас, народные ценности, сказка, современные методы обучения, особенности младшего школьника.

L. LORETSYAN

TUMANYAN'S WORKS IN NATIVE LANGUAGE TEXTBOOKS

The article discusses Tumanyan's works in native language textbooks of the elementary school, presents the instructions and methodical step, in case of which the color of Tumanyan's artistic speech and the simplicity of feelings will be understood by the pupils. The author expressed the interest of primary school pupils in the artistic expression of Tumanyan's works. In particular, the author emphasizes on their vocabulary and opportunities for the formation of national values.

The purpose of the research: The aim of the research is to study and analyze the works of Hovhannes Tumanyan which are included in the textbooks “Mother Tongue in Grades 1-4”.

Research problems. To introduce the educational significance of Hovhannes Tumanyan's works included in the “Mother Tongue in Grades 1-4” textbooks in the life of the primary school student.

Key words: poetry teaching, vocabulary, national values, fairy tale, modern teaching methods, peculiarities of primary school.

Տարրական դասարաններում մայրենիի դասընթացի խնդիրներից մեկը երեխաների պատկերավոր մտածողության և գեղարվեստական խոսք կառուցելու նրանց կարողության զարգացումն է, ինչպես նաև լեզվամտածողության ու մտածելակերպի տարրական կարողությունների ձևավորումը [1,7]:

Պատահական չէ, որ մայրենիի առարկայական ծրագրում և դասագրքերում մեծ տեղ է տրված գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրմանը: Ընդ որում՝ ընդգրկված են գրական տարբեր ժանրեր ներկայացնող ստեղծագործություններ, որոնցից յուրաքանչյուրն ունի ինքնատիպ առանձնահատկություններ և գեղարվեստական արժեքներ:

Մեր մանկավարժական պրակտիկ աշխատանքի և հատուկ ուսումնասիրությունների ընթացքում բացահայտել ենք, որ մայրենիի բոլոր դասագրքերում էլ զետեղված են Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները, որոնք ոչ միայն ունեն սքանչելի բառապաշարով ներկայացված գեղարվեստական պատկերներ, մարդկային զգացմունքներ և միջանձնային հարաբերություններ, այլև ազգային որակների, սովորությունների փոխանցման և նաև այդ ճանապարհով կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորմանը նպաստող հնարավորություններ:

Դիտարկենք Վ. Սարգսյանի հեղինակությամբ հրատարակված <<Մայրենի 1>> դասագրքում զետեղված Հ. Թումանյանի ստեղծագործությունների [4,14] ուսումնասիրության ընթացքը:

Այս իմաստով բոլորիս քաջ հայտնի <<Դպրոցի ճամփան>> ստեղծագործությունը, որը հայտնի է դեռևս մանկությունից, հրաշալի պատկերներով և մանկական զգացումներով լեցուն մի ստեղծագործություն է: Այն միանգամից գրավում է աշակերտներին և ուսուցչի հնարամիտ մեթոդական քայլաշարի միջոցով նրա ուշադրությունը հրավիրում է այն ճանապարհի գրավչության վրա, որն անցնում է ինքը՝ գալով տանից դպրոց: Սա մի ինքնատիպ սեր և նրբանկատություն է ձևավորում իր միջավայրի նկատմամբ:

Թումանյանը գիտի, թե ինչպես մտնի մանկան սրտի մեջ, ինչ հնարներով հարթի դեպի ուսում տանող ճանապարհը:

Բանաստեղծության ուսումնասիրմանը հաջորդում է տառհանելուկների, առածների ուսումնասիրությունը, որը ձևավորում է կարդացածի ենթատեքստը հասկանալու էությունը:

Օրինակ, <<Ծուլը հաց ուտելիս առողջ է, սովորելիս՝ հիվանդ>>, <<Գրիչ>> բանաստեղծությունը երեխայի դժգոհ խոսքն է՝ ուղղված գրչին [5,12]:

Տրված առաջադրանքի համաձայն՝ երեխաները պետք է նկարի շուրջ հորինեն մի պատմություն, որը ոչ միայն զարգացնում է նրանց խոսքը, այլև նպաստում է զգացմունքների դրսևորմանը:

<<Մարտ>> բանաստեղծության մեջ բնության երևույթները շնչավորվում են, ստանում մարդկային բնավորության գծեր, բնության անձնավորումն օգտագործվում է և ավելի պատկերավորություն տալիս ստեղծագործությանը:

Գարնան հրաշալի նկարագրի յուրաքանչյուր տող կարծես մի օրվա պատկեր լինի [4,16]:

<<Կաքավի գովքը>> փոքրիկ բանաստեղծության նյութը մանկագիրը քաղել է ժողովրդական բանահյուսությունից: Ըստ բանաստեղծության տիպաշարի՝ թուխ ամպերը հետ են գնում, կաքավը լույսը բացվելուն պես կանաչ սարից թռչում և արև է բերում ծաղիկներին: Դրանից հետո նկարագրվում է կաքավը, որի հիման վրա ձևավորվում է գեղարվեստական խոսք կառուցելու կարողության նախադրյալները:

Մեր հանձնարարությամբ աշակերտներն այս պատկերները ոչ միայն երևակայությամբ <<տեսան>>, այլև սովորեցին անգիր և տպավորությունները թղթին հանձնեցին գույների միջոցով:

Այնուհետև դիտարկեցինք կաքավի գլխավոր հատկանիշը: Եթե չերգեր կաքավը և <<զվարթ չաներ սարեր ու ձորեր>>, սիրտ չէր հանվի <<դարդի ծովեն>>: Այստեղ կա և՛ միտք, և՛ հույզ, և՛ ճանաչողական իմաստ [5,108]:

Երբ կկանգնես մամռոտ քարին,

Տաղեր կասես ծաղիկներին,

Սարեր, ձորեր զվարթ կանես,

Դարդի ծովեն սիրտ կհանես:

Մենք աշակերտներին պատմեցինք, որ այս փոքրիկ բանաստեղծությունն իր հուզական շնչով, պարզ ու հարուստ իմաստով արժանացել է հանճարեղ Կոմիտասի ուշադրությանը՝ մշակվել ու երգ է դարձել նրա կողմից: Երեխաները լսեցին և երգեցին <<Կաքավիկ>> երգը:

Այնուհետև երեխաները կարդացին և քննարկեցին <<Ուրազ ու սղոց>> առածը: Նրանք մեկնաբանեցին, որ սղոցելիս սղոցը ետ ու առաջ է գնում ու կարծես խոսում է մարդու հետ: Այս մեկը՝ քեզ, այս մեկը՝ ինձ: Իսկ ուրագը տանում է միշտ դեպի իր կողմը՝ դիմացինին ոչինչ չտալով: Համեմատության միջոցով երեխաները ներկայացրին ուրագի և սղոցի տարբերությունը և հասկացան փոխաբերական իմաստը, որ չպետք է

լինեն եսասեր, այլ պետք է լինել ընկերասեր, դիմացինին էլ իր ունեցածից բաժին հանել:

Թումանյանի ստեղծագործություններում առանձին տեղ են գրավում բնության գեղատեսիլ պատկերները, որոնք մանուկների հոգում սեր են արթնացնում հայրենի բնության նկատմամբ: Այդպիսի ստեղծագործություն է <<Տերևաթափ>>-ը, որը տպագրվել է <<Մայրենի 2>> դասագրքում:

Բարձր հուզականությամբ է Թումանյանը նկարագրել հայրենի դեղնահեր ոսկի աշունը՝ բերքառատ այգիներով, գլզացող առվակներով, քամու, հովի սրնգի տակ պտույտ-պտույտ պարող նախշուն-նախշուն գույներ հագած տերևներով, որոնք, սակայն, քամու թևին թառած, տխուր երգեր սվսվալով են հեռանում, քանի որ լքում են մայր անտառը, հայրենի տունը: Այս տեսարանը (մեր վերլուծության և Չայկովսկու <<Աշուն>> ստեղծագործության ունկնդրման ճանապարհով) երեխաները պատկերացրին աչքերը փակ, իսկ հետո ներկայացրին գույներով. այնուհետև վերնագրեցին իրենց նկարածը:

Տերևաթափ

Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ,

Ասավ քամին տերևներին,

Աշուն եկավ, մոտ է ձմեռ,

Ի՞նչ եք դողում ծառի ծերին:

Նախքան <<Տերևաթափ>> բանաստեղծության ուսումնասիրումը, երեխաների հետ զրուցեցինք թռչունների մասին, ներկայացրինք այն թռչուններին, որոնք ցրտադիմացկուն չեն և չվում են տաք երկրներ, իսկ կան թռչուններ, որոնք ցրտադիմացկուն են և մնում են մեզ մոտ: Պարզում ենք, թե ինչ թռչուններ գիտեն երեխաները, ծանոթացնում ենք նոր թռչունների՝ ցուցադրելով դրանց նկարները: Բանաստեղծության արտահայտիչ ընթերցանության և յուրաքանչյուր լեզվարտահայտության քննարկման ճանապարհով մենք հասանք նրան, որ աշակերտներն առաջարկեցին բանաստեղծության համար ստեղծել երաժշտություն:

Այն մենք հանձնարարեցինք որպես տնային առաջադրանք:

Կրտսեր դպրոցականների համար անչափ մեծ արժեք են ներկայացնում Հ. Թումանյանի հեքիաթները, որոնք նրանց ծանոթ են դեռևս նախադպրոցական տարիներից:

Թումանյանի հեքիաթներում զգացվում է պատմողի դեմքի ժպիտը, լավատեսությունն ու ուրախությունը: Ինչպե՞ս կարելի է առանց ժպիտի

չհետևել աղվեսի <<դիվանագիտական>> աղաչանք-դիմումներին <<Պոչատ աղվեսը>> հեքիաթում, երբ նա շնչակտուր և առանց հուսահատության հաջորդաբար կատարում է բոլորի պատվերները, միայն թե ներվի և չվաստակի <<պոչատ>> մականունը: Մեկը մյուսից զվարճալի հեքիաթները իրենց գործողություններով անտարբեր չեն թողնում բոլոր տարիքների մարդկանց:

Նախքան հեքիաթը կարդալը երեխաների հետ խոսում ենք հեքիաթի ժանրային առանձնահատկությունների մասին, նրանք նշում են մի քանի հեքիաթագիրների անուններ, որից մեկն էլ հանձարեղ Հ. Թումանյանն է, ով գրել է <<Պոչատ աղվեսը>> հեքիաթը: Այս հեքիաթի բովանդակությունն առաջին հայացքից թվում է պարզունակ, զվարճալի պատմություն: Սակայն մենք բովանդակության քննարկումը երկխոսություն-հարցազրույցի շնորհիվ հանգեցրինք նրան, որ աշակերտները ձևակերպեցին ուշագրավ եզրակացություն. <<Չի կարելի քայլեր կատարել՝ առանց հետևանքի մասին մտածելու>>:

<<Քաջ Նազարը>> հեքիաթն, ըստ էության, դեռևս նախադպրոցական տարիքից ծանոթ է երեխաներին, սակայն նրանք հեքիաթն ընկալում էին որպես մի աշխույժ, զվարճալի պատմություն: Մեր խնդիրն էր երեխաների գիտակցությանը հասցնել այն եզրակացությունը, որ առանց խելքի, գիտելիքների, աշխատասիրության մեթոդը չի կարող վայելել անգամ ձեռք բերած արժեքները:

Երեխաների ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ <<Քաջ Նազար>> հեքիաթի միջոցով Թումանյանը գեղարվեստորեն ներկայացրել է անհատի ճակատագրի և միջավայրի փոխադարձ կապը: Նազարի բոլոր հաղթանակների պատճառը միջավայրն է, քանի որ նրանք են հորինում և տարածում <<անհաղթ>> հերոսի կոչումը: Նազարը տեղյակ է չէր դրա մասին, իր գործողություններով ոչ մի հատուկ ջանք չի գործադրում հռչակվելու համար, դրա կարիքն ընդհանրապես չէր էլ զգում: Ստացվում է այնպես, որ ամենից անարժան մարդը, անկախ իր կամքից ու ձգտումից, ինքնաբերաբար դառնում է բոլոր իրավունքների ու բարիքների տերը: Սա դարձրինք երեխաների քննարկման նյութը: Մենք միասին եզրակաց-րինք, որ հնարավոր է՝ հեքիաթն ուրիշ իմաստ ու ավարտ ունենար, եթե Նազարն ակտիվորեն աշխատեր ու նախապատրաստեր իր բարձրացումը: Դա կլիներ մի խորամանկ մարդու մասին, սակայն Թումանյանը շեշտը դնում է շրջապատի, ամբոխի վրա, որն առանց հասկանալու ճշմարտությունն ու բանականությունը, մեկը

մյուսի ետևից արագ վազում է՝ մեծարելու Նազարին: Այն դաստիարակում է լինել խոհեմ, ուշիմ ու խելացի:

Թումանյանը խոսում է սիրո մասին. սիրենք մեր ծնողներին ու լսենք նրանց խորհուրդը, ինչպես դա արեց մեր հեքիաթի հերոսը՝ ուլիկը: Երեխաները եզրակացրին, որ մայրիկի ձայնը քնքուշ է, և երբեք ոչ մի երեխա չի շփոթի ուրիշի ձայնի հետ:

Առհասարակ Թումանյանի բոլոր <<դասերը>> երեխաներն ըմբռնում են ինքնաբերաբար՝ առանց դժվարությունների, այսինքն՝ իրագործվում է մատչելիության սկզբունքը :

Անմիջապես <<հարցմունքով>> կամ գործողությունով են <<բացվում>> Թումանյանի բազմաթիվ ինքնուրույն բանաստեղծություններ ու փոխադրություններ: Օրինակ, մանկագիրը լավ էր հասկանում, որ երեխաներին դուր է գալիս ոչ թե հենց սկզբից նկարագրելը, այլ բուն գործողությունը կամ գործողության մղող հարցմունքը (եթե տրվում է հարցը, ապա նրան էլ պետք է հետևի պատասխան-գործողությունը): Այդպես են սկսվում նույնիսկ Թումանյանի մի շարք պատմվածքներ ու հեքիաթներ: Ի դեպ, այդ մոտեցումը շարժում է ընթերցողի կամ ունկնդրի հետաքրքրությունը, լարում միտքն ու ուշադրությունը :

Բնության գովերգով ու երկրագործի աշխատանքով հիացած բանաստեղծը ստեղծել է հետաքրքիր բանաստեղծություններ: <<Կալի երգը>>, <<Փոքրիկ երկրագործ>>, <<Առավոտ>>, <<Մանուկն ու ջուրը>> և այլ նման բանաստեղծություններից լավագույնն է <<Գետակը>>-ը, որը գետեղված է 3-րդ դասարանի մայրենիի դասագրքում: Այս ստեղծագործության միջոցով բանաստեղծն զգուշորեն, աշխույժ երկխոսության ճանապարհով ձգտում է երեխաների մեջ արմատավորել աշխատասիրությունը՝ իբրև մարդու բնավորության լավագույն հատկություններից մեկը: Երեխաները մի առանձին քնքշությամբ կարդացին փոքրիկներին ուղղված խոսքերը:

Չէ՛, փոքրիկըս,

Գնամ պիտի.

Տես ջաղացը

Գյուղի մոտի.

Պետք է ուժ տամ,

Որ պըտըտի: (6,42)

Թումանյանը հատկապես ժողովրդական սկզբնաղբյուրներից վերցրած հեքիաթների մշակման ժամանակ խորացրել է դրանցում

արտահայտված համամարդկային գաղափարները՝ իր պատումներն օժտելով հուզականությամբ և դրամատիզմով: Այս հեքիաթները թափանցել են արվեստի մեկ այլ ճյուղի մեջ: Այսպես. <<Անհաղթ աքլորը>> հեքիաթի հիման վրա բեմադրվել է տիկնիկային ներկայացում, <<Սուտլիկ որսկանը>> և <<Չախորդ Փանոսը>> հեքիաթները հիմք են դարձել գեղարվեստական կինոնկարների համար, այս և մի շարք այլ հեքիաթներ բեմականացվել են <<Հայֆիլմ>>կինոստուդիային կից երիտասարդական թատրոն-ստուդիայում, որոնց հիման վրա արվել են բազմաթիվ նկարագարողումներ: Այդպիսի հեքիաթներից է <<Կացին ախպերը>>, որը տեղ է գտել Վ. Սարգսյանի <<Մայրենի 3>> դասագրքում: Հեքիաթը կարդալուց հետո աշակերտն ինքն իրեն հարց է տալիս. <<Եթե կացինը լեզու ունենար, ի՞նչ կասեր գյուղացիներին>>, կամ՝ <<Ինչու՞ գյուղացիները չկարողացան ճիշտ գործածել կացինը>>:

Թումանյանն ունի մի քանի հեքիաթներ, որոնք եզակի ստեղծագործություններ են և իրենց նմանը չունեն հայ գրականության մեջ: Դրանք են՝ <<Կացին ախպերը>>, <<Սուտասանը>>, <<Սուտլիկ որսկանը>>, որոնք ունեն ինքնատիպ ոճավորում:

<<Սուտլիկ որսկանը>> արտասանվում է բանաստեղծության նման. <<Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք, մի օր հինգ ու վեց հոգով.... Գնացինք, գնացինք, շատ թե քիչ մին էլ տեսանք երեք լիճ Հորս ձեռքին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փետ կար. երեսն առավ, նշան դրեց, մին էլ տրաք, որ կրակեց....>> և այլն: Այս հեքիաթի նախնական մշակումը հենց չափածո էլ եղել է:

Գրելուց առաջ նա նախապես հավաքել է նախ հայկական, հետո վրացական, ռուսական, ասորական, չեչենական, մենգրելական, իմերեթական, ադիգեյական և Կովկասյան լեռներում ապրող այլ ժողովուրդների հեքիաթների տարբերակներ, համեմատել միմյանց հետ և փայլուն ունակություններով հարուստ յուրաքանչյուր տարբերակից ընտրել է կարևորը, բնականն ու դաստիարակողը, հարստացրել նոր կերպարներով ու դրվագներով, դարձրել ավելի գրավիչ ու հետաքրքիր: Դրանց շարքերում են՝ <<Քաջ Նազարը>>, <<Չախ-չախ Թագավորը>>, <<Կոնատ աղջիկը>>, <<Եղեմական ծաղիկը>> և այլն:

Թումանյանն ունի մի շարք մանկական բանաստեղծություններ, որոնք հրապարակվում են <<Փոխադրություններ>> ընդհանուր վերնագրի տակ: Այդ բանաստեղծություններից են <<Թռչունի մտածմունքը>>, <<Ծաղիկներ>>, <<Փիսիկի գանգատը>>, <<Աշուն>>, <<Մի բաց նամակ

ամենքին>>, <<Բզեզի դպրոցը>> և այլն, որոնք նույնպես ուսումնասիրվում են տարրական դպրոցում:

Թումանյանի ստեղծագործություններում առանձին հմայք են ստանում բնության, անգամ սարերի ու ձորերի գեղեցկությունը: Այդպիսին է՝ <<Ա՜խ, ինչ լավ են սարի վրա>> բանաստեղծությունը:

Ա՜խ ինչ լավ են սարի վրա

Անցնում օրերն անու՜շ, անու՜շ,

Անրջային, թեթևասահ,

Ամպ ու հովերն անու՜շ, անու՜շ:

Մինչև այս բանաստեղծության ուսումնասիրումը մենք լսեցինք համապատասխան երգը: Սա դասարանում ստեղծեց հուզական մթնոլորտ, որն ապահովեց բանաստեղծության զգացմունքայնության, հայրենասիրության նկատմամբ սիրո դրսևորումներ:

<<Մայրենի 3>>-ում առանձնահատուկ տեղ է գրավում Հովհ. Թումանյանի <<Սասունցի Դավիթ>> պոեմը:

Կարդալու և բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում մեր աշակերտները հանգեցին այն եզրակացության, որ պոեմում Թումանյանը խարազանել է մարդկանց փառասիրությունն ու մեծամտությունը, ցույց տվել դրանց վնասակար հետևանքները: Քննարկվեց երեխաներին տված Թումանյանի խորհուրդը. <<Չպետք է մեծամտել. երեխաներ, ձեզ նման երեխայի ամենամեծ թշնամին մեծամտությունն է ներքին կարողության>>:

Պոեմի վերջում տրված ասացվածքների միջոցով դասարանն ամբողջացրեց ստեղծագործության գաղափարը:

Լավ է մեռնել կանգնած, քան ապրել ծնկաչոք:

Քաջը մեկ անգամ է մեռնում, վախկոտը՝ հազար (6,42):

Այսպիսով, տարրական դպրոցի մայրենիի դասագրքում գետեղված Հովհաննես Թումանյանի մանկական ստեղծագործությունների ուսումնասիրման ընթացքում մեթոդապես ճիշտ աշխատանք իրականացնելու դեպքում կարող են զարգանալ սովորողների արժեհամակարգի բազմաթիվ բաղադրիչներ՝ նպաստելով նրանց անձի ձևավորմանը, ազգային և համամարդկային որակների ձեռքբերմանը: Կձևավորվի գեղարվեստական խոսքի նկատմամբ սերնդի հետաքրքրասիրությունները, կզարգանան նրանց հոգու զգացմունքային երանգները:

Գրականություն

1. Գյուլամիրյան Ջ.Հ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան 2018, <<Զանգակ>>, 348 էջ:
2. Թորոսյան Կ. և այլք Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2011, <<Զանգակ>>, 272 էջ:
3. Զրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1967:
4. Սարգսյան Վ. և այլք, Մայրենի 1, Երևան, ՄԱՆՄԱՐ 2019, 63 էջ:
5. Սարգսյան Վ. և այլք, Մայրենի 2, Երևան, ՄԱՆՄԱՐ 2019, 160 էջ:
6. Սարգսյան Վ. և այլք, Մայրենի 3, Երևան, ՄԱՆՄԱՐ, 2019, 160 էջ:
7. Սարգսյան Վ. և այլք, Մայրենի 4, Երևան, ՄԱՆՄԱՐ, 2019, 176 էջ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, Բ.Գ.Դ. Ս.Ա.Խանյանը:

ՀՏԴ 82.09

Գրականություն

Զարինե ՄԱՌԱՋՅԱՆ

ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոն, Բ.Գ.Թ., դոցենտ

E-mail: zsarajyan@mail.ru

ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ՝ ԸՍՏ ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆԻ «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ՎԵՊԻ. ԿԵՐՊԱՐՆԵՐԸ

Հայ նշանավոր պատմաբան, գրող և հրապարակախոս, արմատներով արցախցի Բագրատ Ուլուբաբյանն իր «Սարդարապատ» վեպում նոր լույսի տակ է ներկայացրել Սարդարապատի հերոսամարտը: Վեպում լայնորեն արտացոլված են 1918 թ. Սարդարապատի հերոսական պայքարի ընթացքում Ղարաբաղյան զնդի մարտական գործողությունները: Սույն հոդվածում ներկայացրել ենք արցախահայերի մասնակցությունը Սարդարապատի հերոսամարտին և նրանց կերպարները:

Բանալի բառեր՝ Սարդարապատ, դարաբաղցի, արցախահայեր, Ղարաբաղ, կերպար, հերոս, գեղարվեստական, փաստափակերագրական, վեպ, պատմություն, փաստ, իրադարձություն, պատերազմ, հաղթանակ:

3.САРАДЖЯН

УЧАСТИЕ АРЦАХСКИХ АРМЯН В САРДАРАПАТСКОМ СРАЖЕНИИ ПО РОМАНУ «САРДАРАПАТ» БАГРАТА УЛУБАБЯНА. ПЕРСОНАЖИ

В своем романе «Сардарapat» выдающийся армянский историк, писатель и публицист арцахского происхождения Баграт Улубабян представил Сардарapatское сражение в новом свете. В романе широко отражены боевые действия карабахского полка в ходе армянской общенациональной героической борьбы в 1918 году в Сардарапате. В данной статье представляется вклад арцахских армян в Сардарapatское сражении и их персонажи.

Ключевые слова: Сардарapat, арцахские армяне, карабахец, Карабах, персонаж, герой, художественный, документальный, роман, история, факт, событие, война, победа.

Z.SARAJYAN

PARTICIPATION OF ARMENIANS OF ARTSAKH IN THE BATTLE OF SARDARABAD ACCORDING TO THE NOVEL “SARDARABAD” BY BAGRAT ULUBABYAN: CHARACTERS

In his novel “Sardarapat” Bagrat Ulubabyan, an outstanding Armenian historian, writer and publicist of Artsakh origin presented the Sardarapat battle in a new light. The novel broadly reflects the military actions of the Karabakh regiment during the Armenian nationwide heroic struggle in 1918 in

Sardarapat. This article presents the contribution of the Armenians of Artsakh in the Sardarapat battle and their characters.

Key words: Sardarabad, Armenians of Artsakh, Karabakhian, Karabakh, character, hero, artistic, documentary, novel, history, fact, event, war, victory.

Հայոց պատմության փառապանծ էջերից է Սարդարապատի հերոսամարտը, որն ընդունված է երբեմն կոչել նաև «20-րդ դարի Ավարայր»: Այս իրադարձություններն իրենց պատմաքաղաքական նշանակությամբ բազմիցս են արժևորվել հայոց պետականության և հայկական ինքնության պահպանման ու ամրապնդման տեսանկյունից, որոնք, անտարակույս, հիմնաքարն են այսօրվա հայոց անկախ պետականության գոյության:

Սարդարապատի հերոսամարտին նվիրված բազմաթիվ գեղարվեստական, պատմագիտական, փաստավավերագրական գործեր են ստեղծվել, որոնք տարբեր տեսանկյուններից քննել և մեկնաբանել են հայոց պատմության հիրավի աստեղային ու բախտորոշ պահերից մեկը՝ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը:

Հայ նշանավոր պատմաբան, գրող և հրապարակախոս, արմատներով արցախցի Բագրատ Ուլուբաբյանն իր «Սարդարապատ» վեպում նոր լույսի տակ է ներկայացրել Սարդարապատը, որտեղ պատմական փաստերին, գեղարվեստական պատկերներին զուգահեռ նա ընթերցողի հետ կիսում է նաև պատմաբանի իր մեկնություններն ու խորհրդածությունները պատմական այդ իրադարձությունների, ինչպես նաև հերոսների գործողությունների շուրջ: Վեպում լայնորեն արտացոլված են 1918 թ. Սարդարապատի հայոց համազգային հերոսական պայքարի ընթացքում Ղարաբաղյան կամ Մահապարտների գնդի մարտական գործողությունները:

Վեպը հատկանշական է մի շարք առանձնահատկություններով ու արժեքավոր կողմերով, որոնցից, թերևս, առանձնացնել կարելի է այն, որ առաջին անգամ հեղինակը ներկայացրել է Սարդարապատի հերոսամարտերում մեծ ավանդ ունեցած ռազմական գործիչների, հատկապես ծագումով դարաբաղցի զորահրամանատարների կերպարները՝ իրական գծերով ու ստույգ փաստերով՝ պատմագետի բժախնդրությամբ փաստերը ստուգելով տարբեր աղբյուրներով (ինչպես հեղինակն է նշում վեպի առաջաբանում):

«Ուլուբաբյանը, լինի գեղարվեստական գործերի մեջ («Հեղեղ», «Հատիկը չի մահանում», «Սարդարապատ» և այլն), թե պատմագիտական աշխատություններում («Ոսկե շղթա», «Գրաստ», «Դրվագներ», «Զրուցարան» և այլն), մշտապես հանդես է գալիս որպես իր ազատատենչ ժողովրդի անվեհեր դատապաշտպան»:¹

¹ *Հակոբյան Վ., Երկեր, հատոր Ե, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2008, էջ 490:*

Իրական փաստերն ու երևույթների երբեմն գեղարվեստականացումը, երկխոսությունների ու գործողությունների արդյունքում հերոսների բնավորությունների բացահայտումը, պատմական փաստերի վերլուծության ձևով հեղինակի միջնորդությունը և գնահատականը, օրագրային գրառումներն ու փաստաթղթերի առկայությունը «Սարդարապատ» վեպում թույլ են տալիս ասելու, որ ստեղծագործությունը հատել է ավանդական վեպի սահմանները և ներկայանում է որպես այդ սահմաններում չկադապարվող վեպի ոչ ավանդական մի նոր տեսակ, որտեղ առկա է փաստավավերագրությունն ու գեղարվեստը: Վեպը հարուստ փաստավավերագրական հենք ունի, ինչը կարելի է բացատրել նաև հեղինակի՝ պատմաբան լինելու հանգամանքով:

Շատերին է հայտնի, որ Սարդարապատի հերոսամարտերով հայոց պետականության լինել-չլինելու հարցն էր լուծվում, սակայն քչերը գիտեն, որ հայրենիքի այդ օրհասական պահին Սարդարապատում հայոց պետականության համար մղվող կենաց և մահու կռվին իրենց մեծ ավանդն են ունեցել նաև արցախահայերը, որոնք կռվում էին Հինգերորդ գնդում, որը հայտնի էր նաև *Ղարաբաղյան գունդ*, *Մահապարտների գունդ* անուններով: Ինչպես հեղինակն է նշում, գունդը ստեղծվել է առաջին աշխարհամարտի 3-րդ տարում և կռվում էր ռուսական բանակի շարքերում:

«1916-ի վերջին գնդապետ Պողոսբեկ Փիրումյանը նոր մի գունդ կազմեց Քեռու գորամասի արևելահայ զինվորներից, որոնք հիմնականում իր հայրենակիցներն էին՝ ղարաբաղցիներ: 1917-ին, գունդը Պարսկաստանից Արևմտյան Հայաստան փոխադրվելով, մասնակցեց Ոստանի և Վանի պաշտպանությանը: Այդ տարվա կեսից, երբ ռուս զորքերը թողեցին նաև Վասպուրականը, Վանի պաշտպան էին մնացել միայն Պողոսբեկ Փիրումյանի գունդը, մեկ էլ տեղական աշխարհագործը»¹, -գրում է հեղինակը և նշում, որ դրանից հետո, հետագա դիմադրությունը անիմաստ համարելով, նրանք ևս Արաքսի աջ ափով, հին Բայազետով-Իգդիրով նահանջեցին դեպի Կարսի մարզը, և մայիսի կեսերին հինգերորդ գունդը մտավ Արարատյան դաշտը:

Հայ նշանավոր ռազմական գործիչ Դանիելբեկ Փիրումյանը, ով Սարդարապատի ճակատամարտի գլխավոր հրամանատարն էր, դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կռվել է Կովկասյան ռազմաճակատում՝ որպես ռուսական բանակի սպա: Բագրատ Ուլուբաբյանն իր «Սարդարապատ» վեպում ներկայացրել է ծագումով ղարաբաղցի մեծ գորավարներ Դանիելբեկ Փիրումյանի, նրա հորեղբորորդի Պողոսբեկ Փիրումյանի կերպարները Սարդարապատի հերոսամարտի համապատկերում:

Ուլուբաբյանի վեպում գեղարվեստորեն արտացոլված Սարդարապատի իրադարձությունների պատմական ճշմարտացիությունը փաստում են նաև մի շարք պատմական աղբյուրներ:

¹ *Ուլուբաբյան Բ., Սարդարապատ, Երևան, «Նաիրի» հրատ., 1991, էջ 212:*

Մայիսի 21-ի լույս 22-ի գիշերը Մոլլաբայազետ (Բամբակաշատ) գյուղի շրջանում հայ աշխարհագորայիները և Զհանգիր աղայի՝ եզդիների 300 հոգուց բաղկացած հեծյալ ջոկատը փոխհրաձգության մեջ են մտնում թուրքերի հետ: Գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը Մոլլաբայազետից մինչև Էվջիլար (Արագած) գտնվող իր գործարաններին հակահարձակման հրաման է տալիս:¹ Հաջողությամբ են պսակվում նրա գլխավորությամբ վարած մարտական գործողությունները: Մարտից առաջ զինվորներին ոգեշնչելու համար կրակոտ կոչով նրանց է դիմում Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը և 5-րդ գունդը՝ վերանվանում Մահապարտների գունդ:² Այս փաստը ևս վկայված է թե՛ պատմական աղբյուրներում և թե՛ Բագրատ Ուլուբաբյանի «Մարդարապատ» վեպում:

Հերոսամարտում վճռորոշ դեր ունեցած զորավարների կերպարներից գատ, Ուլուբաբյանը ներկայացրել է նաև ժամանակաշրջանի քաղաքական, ռազմական, պետական գործիչների, շարքային զինվորների, քաղաքացիների և, առհասարակ, դարաբաղցի զինվորյալների կերպարները, որոնք առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում իրենց բնավորության գծերով: Կերպարակերտման ուլուբաբյանական արվեստի առանձնահատկություններից կարելի է համարել այն հանգամանքը, որ հեղինակը, լինելով դարաբաղցի, լավագույնս է ճանաչում դարաբաղցուն, նրա բնավորության առանձնահատկությունները, բնորոշ գծերը, բարբառային ու ժողովրդական բառ ու բանի միջոցով պատկերին կարողանում է կոլորիտ հաղորդել, ինչից մեծապես շահում է գրական երկն ու կերպարակերտման նրա կերպը:

Մարդարապատի ուղղությամբ գործող հայ զորքի ղեկավարությունն ինքնակամ ստանձնել էր Դանիելբեկ Փիրումյանը: Մայիսի 22-ի վաղ առավոտյան հայկական ուժերը Դանիելբեկ Փիրումյանի ընդհանուր հրամանատարությամբ հարձակման են անցնում և հուժկու գրոհով ոչնչացնում թշնամուն: Շարունակելով առաջխաղացումը՝ հայկական զորամասերը օրվա վերջին հետ են գրավում Մարդարապատը: Մահապարտների գնդի և Դանիելբեկ Փիրումյանի ղեկավարած մարտական գործողություններում արձանագրած հաջողությունները բեկումնային են դառնում մայիսյան հերոսամարտերի հետագա ընթացքի համար նաև մյուս ուղղություններով:

«Հին, կադրային հրամանատարներն ու զինվորները մոտիկից ճանաչում էին կամ տեղյակ էին այդ քաջ ու հնարամիտ զորապետի մարտական ուղուն: Եվ ոչ ոքի համար զարմանալի չէր, որ հայոց կովի ամենաճակատագրական պահին, պատերազմի ամենադժվար, պարզապես անհուսալի կետում առաջ նետվելով՝

¹ *Թուրջյան Հ. Գ.*, *Մարդարապատի հերոսամարտը*, Երևան, 1969, էջ 138:

² *Մարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, 1918թ. մայիսյան հերոսամարտերը*, Երևան, 1998, էջ 176:

կրակն իր վրա է վերցրել մի այդպիսի գորական», - գրում է Բ. Ուլուբաբյանը վեպում Դանիելյեյի Փիրումյանի մասին¹:

Եթե Սարդարապատը համեմատվում է Ավարայրի հետ, ապա հայ ազգի ու հայոց պետականության հետագա գոյության համար այդ բախտորոշ նորօրյա Ավարայրում Դանիելյեյի Փիրումյանի կերպարը «Սարդարապատ» վեպում մեզ հիշեցնում է Վարդան Մամիկոնյանի կերպարը. խոհուն և իմաստուն այր մի, որ կոփվել է վասն հայրենյաց մղված մարտերի ամենաթեժ կետերում, ամբողջ էությամբ նվիրված հայրենիքին ու ռազմական գործին՝ առանց անձնական կյանքի, Վարդանի նման հայրենիքի շահը վեր դասող ամեն ինչից, անգամ սեփական որդիներից: Հանգամանքների բերումով իրար դեմ են կանգնում Դանիելյեյի Փիրումյան հայրենիքի զինվորն ու հայրը, պայքարի մեջ են մտնում երկու գերհզոր զգացումներ, և հաղթում է հայրենիքի զինվորը:

Այդ է վկայում այն փաստը, երբ նրա երկու որդիները՝ Միքայելն ու Հովսեփը, որոնք ևս մարտնչում էին Սարդարապատում, գերեվարվել էին թշնամու կողմից, և Բաթումի հաշտությամբ պետք է վերջ դրվեր պատերազմին, որին կհաջորդեր գերիների փոխանակումն ու, բնականաբար, նրա որդիների վերադարձը: Հաշտությունը զորավարի սրտով չէր սակայն, որովհետև դեռ հայոց տարածքներ կային ազատագրելու: «Բարձր է հայ զինվորության ոգին: Առանց դժվարություններ հաղթահարելու մենք շուտով Կարս կհասնենք, և մերը կլինեն Արաքսը, Արարատը...», - փորձում էր զորավարը ղեկավարությանը համոզել ետ կանգնել հաշտության դաշնագրից:

Զորավարի անմնացորդ նվիրումը հայրենիքին ու իր առաքելությանը ակներև է դարձնում նրա երդումը. «Պատերազմ է եղել, հայ ազգի ճակատագրի համար ամենավճռական ճակատամարտը: Իսկ այդ ճակատամարտի հաղթական ելքի համար ինքը (Դանիելյեյի Փիրումյանը) երդում էր տվել Արարատին, խոստացել էր իր կյանքը և թե որ հարկ լինի, նաև ամենաթանկն ու անփոխարինելին՝ զույգ զավակներինը...»²:

Արդիական նշանակություն ունի Դանիելյեյի Փիրումյանի կոչը՝ ուղղված իր զորքին, որը նաև հետագա սերունդներին ուղղված պատգամ է: Ահավասիկ.

«Ձո՛րք հայոց, Արցախակա՛ն քաջեր...: Ճակատամարտի նախօրեին մենք վճռել էինք այնպես կռվել, որ մեր Քիրսա սարն ամոթով չմնա իր հայր Արարատի առաջ: Եվ կռվեցինք, ինչպես պետք էր, ինչպես կարող էինք: Սակայն մեր կռիվը դեռ չի ավարտվել: Մենք զենք վայր դնելու իրավունք չունենք, քանի դեռ թուրքը ոտնակոխ է անում մեր հողն ու մեր պատիվը...»³:

Այս նվիրումի ու հայոց սպարապետին ու հմուտ ռազմական գործչին բնորոշ հատկանիշների կրողն է նաև Ղարաբաղի գնդի հրամանատար, գնդապետ

¹ *Ուլուբաբյան Բ., Սարդարապատ, Երևան, «Նաիրի» հրատ., էջ 181:*

² *Նույն տեղում, էջ 549:*

³ *Նույն տեղում, էջ 542:*

Պողոսբեկ Փիրումյանը: Իր սխրագործություններով ու ռազմավարության խորագիտակությամբ փայլուն հրամանատար էր, որն իր գործին անձնական օրինակով կարողանում էր մղել անհավատալի սխրանքների: Ուշագրավ է նրա կոչը իր գործին ճակատամարտից առաջ, որտեղ նա ընդգծում է ճակատամարտի նշանակությունը, որով վճռվում էր մեր ազգային հավաքականության լինել-չլինելու խնդիրը.

«-Լինել-չլինելու, որովհետև եթե այստեղ, սուրբ Էջմիածնի թիկունքում և այս արդար ու հավերժական Արարատի աչքի առաջ մենք հաղթեցինք, ուրեմն ապրելու է մեր ազգը, իսկ եթե, Աստված մի՛ արասցե, պարտվեցինք, եթե ի վիճակի չեղանք թուրքին ետ մղելու իր եկած ճանապարհով, ապա դա լինելու է մեր ազգի մահը: Ես ուզում եմ, որ մեր գնդի ամեն մի զինվոր հասկանա այս ճշմարտությունը:

Հիշեցեք, որ ազգը միշտ էլ հավատացել է Արցախամուր աշխարհի զինվորին և երբեք չի սխալվել: Վաղը մենք պետք է նման լինենք մեզ, մեր հերոսական աշխարհին և, եթե կուգեք, պիտի ավելին էլ լինենք: Այո, մարդս միշտ էլ հնարավորություն ունի լինելու ավելի վեր, ավելի ուժեղ, ավելի քաջ, քան ինքն է առհասարակ: Դուք կլինե՞ք այդպիսին, ձեզ մատա՛ղ:

-Կլինենք, կլինենք, պարո՛ն գնդի հրամանատար, -միահամուռ, որոտաձայն թնդաց գունդը, և գնդապետը լցվեց մի անպարփակելի հավատով, որից սիրտն է ուռչում»:¹

Վեպում դարաբաղցի զինվորներն օժտված են մարտնչող ռազմիկի բնավորության գծերով, խիզախությունը, սխրանքների պատրաստ լինելը, անձնագոհությունը, տաքարյունությունը, սրամտությունը, հայրենասիրությունը, երբեմն միամտությունն ու միաժամանակ իմաստությունը, անանձնական կյանքով ապրելը, դժվարությունները հումորով ու լավատեսությամբ հաղթահարելու կարողությունը նրանց բնութագրող գծերից են: Հեղինակը ստեղծել է նաև պարզ ու անմիջական երկխոսություններ, որտեղ հերոսների միջոցով արտահայտում է տեղեկություններ Արցախի պատմության, ժամանակաշրջանի քաղաքական խնդիրների, մարդկային բնավորությունների, կենցաղի, վարք ու բարքի մասին: Սակայն բոլոր կերպարները, գուցե թե վեպի թեմայով պայմանավորված, առանձնանում են մի ընդհանրական գծով. դա պատերազմելու, հերոսանալու և հաղթելու կամքն է: Նրանք պատերազմ են գնում ոչ թե պատրաստ մեռնելու, այլ՝ պատրաստ հաղթելու և ապրելու: Այդ ապրելու անխախտ կամքն է, որ, հակադրվելով «գիտակցված մահի» գնալու դարերից եկող մեր պատմիչների պատգամին, նրանց մղում է գիտակցված կռվի, հաղթանակի և ապրելու: Այս գաղափարը վեպում բնավ չի հնչում որպես պաթոս, այլ իրականություն, որով

¹ Նույն տեղում, էջ 216:

առաջնորդվում են հերոսամարտի հաղթողները և կռվում հաղթելու համար, այլ ոչ թե՝ նահատակվելու:

Հերոսության մասին Ղարաբաղի գնդի հրամանատար Պողոսբեկ Փիրումյանը իր յուրահատուկ բանաձևումն ունի. «Հերոսությունը հրաշքն է, մարդու խելոք բնագոյի ժայթքումը՝ գիտակցականությունից վեր, անբանական ու անբնական: Եվ այն երբեք չի ենթարկվում գիտակցության ու բնականի նորմերին»:¹

Փաստավավերագրական և գեղարվեստական շատ ու շատ գործերում է ընդգծված ղարաբաղցիների կռվելու կերպը՝ որպես քաջ մարտիկների, պատմության տարբեր ժամանակշրջաններում տարբեր գործիչներ են գովել ղարաբաղցի զինվորի մարտունակությունը: Վեպի մի դրվագում ևս դիպվածային կերպարներից մեկը՝ Պատվական քեռին, իր բաժակաճառում անկեղծանում է. «Տեր-Ղուկասովի կռվին ես ղարաբաղցիների հետ էի և էն ժամանակ իմ սեփական աչքերով եմ տեսել, թե դուք ինչ տեսակ կռվող եք, ինչ սրտի տեր: Հիմի էլ Սարդարապատում ձեր հունարը ցույց տվիք...Ազգը ձեր արածը չի մոռանա...»:²

Ի պատասխան Պատվական քեռու գնահատականի՝ գրողը ղարաբաղցի զինվորի շուրթերով հնչեցնում է Արցախ-Հայաստան անքակտելի միասնության գաղափարը. «...Պատվակա՛ն քեռի, «չի մոռանա» էլ ասում ես, ոնց որ օտարներ լինենք: Բա մի ա՛զգ չենք, մեր հոգու պա՛րտքը չենք կատարում: Ես կուզենայի, որ ազգն ուրիշ բան չմոռանա: Չմոռանա, որ մենք էլ իրենն ենք: Իր զավակը, իր մարմնից պոկածը: Ու թե որ մենք էլ նեղ օրի լինենք, ինքը ծնողի պես իր հոգատար ձեռքը մեզ վրա պահի...էսօր և հավիտյան, հուր հավիտյան»:³

Նկատենք, որ Բ. Ուլուբաբյանը ստեղծագործությունը գրել է Արցախյան շարժման վերազարթոնքի տարիներին, և ինքը՝ հեղինակը, կանգնած է եղել շարժման ակունքներում: Այս վեպով և վերոբերյալ տողերով հեղինակը հղում է անում Ղարաբաղի հիմնախնդրին և գեղարվեստականացմամբ հերոսների միջոցով ևս փաստում Արցախը պատմական Հայաստանի անբաժան մաս լինելը, ակնարկում Հայաստանից անջատելու և Ադրբեջանին բռնակցելու ԽՍՀՄ տխրահռչակ որոշումը:

Վեպում առանցքային տեղ է գրավում հայության միասնականության, միաբանության կոչը՝ որպես հաղթանակների երաշխիք, և որպես չարիք ընդգծվում անմիաբանությունը: Գաղափար, որ հնչում է 5-րդ դարի պատմիչներից մինչև Մուրացան, Չարենցից մինչև մեր օրեր, Վարդան Մամիկոնյանից մինչև Գևորգ Մարգարետունի, մինչև Դանիելբեկ Փիրումյան, Անդրանիկ, Գ. Նժդեհից մինչև Մոնթե, Աշոտ Բեկոր, և որում հայ ժողովուրդը վաղուց է պատմության դասերով համոզվել: Պատմության այս ամենակարևոր

¹ Նույն տեղում, էջ 218:

² Նույն տեղում, էջ 525:

³ Նույն տեղում, էջ 525:

դասը հնչում է նաև «Սարդարապատ» վեպում՝ որպես դարաբաղի Օսեփ պապի իմաստություն. «Անմիաբանությունն ստեղծողի աչքը դուրս գա: Էն հանգուցյալ Օսեփ պապս սերտած իմաստուն խոսք ուներ, կասեր՝ «Անմիաբանությունն է արմատ ամենայն չարյաց»: Էդպես էլ ասում էր, հա...»:¹

Վեպում, բացի գլխավոր կերպարներից, Ուլուքաբյանը ներկայացրել է նաև Մահապարտների գնդում մարտնչող դարաբաղի բազմաթիվ զինվորների կերպարներ, որոնք Արցախի տարբեր գյուղերից էին, և յուրաքանչյուրը մի յուրահատուկ գույն, բնավորություն, համ ու հոտ է ավելացնում միասնականության գունապնակին: Այսպես՝ զինվորներ կան Արցախի Ավետարանոց, Մուշկապատ, Հաթերք և այլ գյուղերից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է իր բնաշխարհը, Ղարաբաղով մտահոգ խոհը, ապագայի հանդեպ տագնապը, պատմության սխալները ու հանուն հայրենիքի և հայ ժողովրդի անվտանգության գործելու իր պատրաստակամությունը:

Իր հողի հետ արմատներով կապված հայր ի բնե խաղաղասեր է և պարտադրված՝ թշնամուց իր հայրենիքը պաշտպանելու, չմորթվելու համար է ձեռքը զենք առնում ու պատերազմում: Այդ ձեռքը եթե ազատ ընտրության հնարավորություն ունենա, անկասկած կմեկնի դեպի բահը, դեպի գրիչը, դեպի հողն ու քարը, որովհետև հայր շինարար ու կառուցող է, արարող ու երկնող է՝ ի տարբերություն դարեր շարունակ Հայաստանի վրա արշավող, ավերող ու կործանող բարբարոսների: Արարելու, հողի հետ աշխատելու երազանքն է ընկած անգամ ամենահմուտ զորավարի թաքուն խոհերի խորքում, բայց իրավիճակի պարտադրմամբ նա զենք է վերցնում և փայլում որպես զորավար, ռազմական գործիչ:

«Մի՞ թե ինքը՝ Դանիելբեկ Փիրումյանը, քիչ է տանջվել այն գիտակցությունից, որ իր մեջ օրեցօր խեղդվել ու մեռնում է մի հողվոր, իրենց գյուղի, նրա սակավ, բայց հրաշածին հողի տերը», - գրում է հեղինակը զորավարի մասին, իսկ զորավարի՝ հորն ուղղված նամակ-խոստովանությունում նկատում ենք այդ ժայռեղեն մարդու հոգու քնքշությունը հայրենի գյուղի մասին մտածելիս. «Եվ այսքան ժամանակ տանջվում էի ներքին մի ցանկությունից, որը չէի կարողանում ինքս ինձ բացատրել: Կարծում էի զինվորական ծառայությունն է ինձ քաշում: Նոր եմ հասկանում, որ Նախիջևանիկն է կանչել, այնտեղ տեսած ու ճանաչած մարդիկ, մեր այգիները, նույնիսկ գերեզմանոցը, ուր շարքով կանգնած են մեր ապուպապերի համեստ շիրմաքարերն իրենց ժլատ, բայց պերճախոս գրերով...»:²

Դանիելբեկ Աբիսողոմի Փիրումյանը ծնվել է 1860 թ. Արցախի Խաչեն գավառի Նախիջևանիկ գյուղում: Զինվորական ծառայությունը սկսել է 1881 թվականից Երևանյան գնդում: 1881-1883 թվականներին սովորել է Թիֆլիսի հետևակային

¹ Նույն տեղում, էջ 519:

² Նույն տեղում, էջ 325:

յունկերական ուսումնարանում: 1890 թվականին Դանիել Բեկ-Փիրումյանին շնորհվել է կապիտանի կոչում: 1913 թվականին Դանիել Բեկ-Փիրումյանը փոխգնդապետի կոչումով ավարտել է Օրանիենբաումի սպայական հրաձգային դպրոցի դասընթացները: Եղել է վաշտի, գումարտակի, գնդի հրամանատար: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կռվել է Կովկասյան ռազմաճակատում, աչքի ընկել քաջությամբ, ստացել ռուսական բանակի գնդապետի կոչում, պարգևատրվել Գեորգիևյան և այլ շքանշաններով ու անվանական գեներով: 57-ամյա Դանիել Բեկ-Փիրումյանին 1918 թվականին շնորհվել է գեներալ-մայորի կոչում: Նորանկախ Հայաստանի հանրապետության օրոք նա առաջիններից մեկն էր, ով պաշտոնապես ստացավ այդ կոչումը:¹

Սարդարապատի հերոսամարտին մասնակցել և մարտական իսկական սխրանքներ է գործել նաև Դանիելյեկ Փիրումյանի հորեղբոր՝ Ղահրամանի որդին՝ Պողոսբեկ Փիրումյանը՝ որպես Ղարաբաղի 5-րդ (մահապարտների) գնդի հրամանատար:

Սարդարապատի ճակատամարտին իր եռանդուն մասնակցությունն է ունեցել նաև Փիրումյան տոհմից Ասրիբեկի մյուս թոռ Նիկոլայի որդին՝ Քրիստափորը, որը Շուշվա թեմական դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակելու էր գնացել Կիևի համալսարանի բժշկական ֆակուլտետում: Սարդարապատի ճակատագրական օրերին Խնուսի գնդի ավագ բժիշկն էր: Սարդարապատի հերոսամարտին մասնակցում էին նաև Դանիելյեկի որդիներ Միքայելն ու Հովսեփը: Վեպում, ի թիվս բազմաթիվ կերպարների, իրենց առանձնահատուկ առաքելությամբ, կերպարային գծերով, բնավորություններով ու գործունեությամբ առանձնանում են նաև ժամանակի մյուս նշանավոր ռազմական գործիչները՝ Թովմաս Նազարբեկյանը, Մովսես Միլիկյանը և այլք:

Սարդարապատը հայոց համագգային հաղթանակի, միասնության հաղթանակի խորհրդանիշն է: Պատահական չէ, որ վեպում դարաբաղի զինվորների երկխոսությունում նշվում է, որ թեպետ Ղարաբաղը խեղդում են թուրքն ու մուսավաթը, այդ պահին նրանք պետք է մարտնչեն Սարդարապատում, որովհետև վտանգված է Հայաստանի սիրտը, վճռվում է հայոց պետականության լինել-չլինելու հարցը:

«Մայր տաճարի պատարագի զանգերի դողանջը մայիսի 22-ից շարունակվեց մինչև մայիսի 29-ը, մահասարսուռ դողանջը ոտքի հանեց բոլորին: Ջենք էին վերցնում և Սարդարապատ ուղղվում կռվելու ընդունակ և ոչ ընդունակ բոլոր տղամարդիկ: Սարդարապատի ճակատամարտն ավարտվեց թուրքերի լիակատար պարտությամբ: Հաղթանակը ձեռք բերվեց Դանիել և Պողոս Բեկ-Փիրումյանների, Աբրահամ Դոլուխանյանի, Ի. Սիլենի, Ա. Պերեկրյուստովի,

¹ <https://hy.wikipedia.org>

Կարաքեշիշյանի, Շնեուրի և հերոսամարտի մյուս մասնակիցների շնորհիվ...»:¹, - փաստում է պատմագիտական աղբյուրը:

Բագրատ Ուլուբաբյանի «Սարդարապատ» վեպը արժեքավոր է իր արդիականությամբ, պատմության դասերով, գեղարվեստական պատկերներով, փաստավավերագրական հարուստ նյութով և իր բերած թեմատիկ-բովանդակային նորությամբ, որն է՝ դարաբաղձիների ունեցած ավանդը Սարդարապատի հերոսամարտում:

Հոգևածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, Բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

¹ Հայոց պատմություն, հ. 3-րդ, գիրք 2-րդ, Երևան, Զանգակ, 2015, էջ 643:

УДК 378-147:808.2

Методика преподавания русского языка

Сусанна МКРТИЧЯН

кандидат педагогических наук, доцент кафедры русского языка и литературы АргУ

ИСПОЛЬЗОВАНИЕ СТИХОТВОРНЫХ ТЕКСТОВ НА ПРАКТИЧЕСКИХ ЗАНЯТИЯХ ПО РУССКОМУ ЯЗЫКУ В ВУЗЕ (НА ПРИМЕРЕ ЛИРИКИ М.Л. МАТУСОВСКОГО)

Ս.ՄԿՐՏԻՉՅԱՆ

**ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԲՈՒՀ-ՈՒՄ
ՌՈՒՄԵՐԵՆԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ (Ս. ՄԱՏՈՒՍՈՎՍԿՈՒ
ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

ՆՅՈՒԹԻ ՎԵՐԱ)

Լեզվի հաղորդակցական մոտեցման համաձայն՝ լեզվի ուսուցումը պետք է հաշվառի կենդանի հաղորդակցության առանձնահատկությունները, իսկ ուսուցման գործընթացի հիմքում ընկած պետք է լինի կենդանի շփման մոդելը, քանի որ քերականական իրադեկությունը բավարար չէ տվյալ լեզվով հաղորդակցվելու համար: Այս առումով առավել կարևորվում է բնագրաբնույթ, ճանաչողական, կրթական ու դաստիարակչական բարձրարժեք նյութերի, այդ թվում՝ բանաստեղծությունների դերը, որոնք մշակույթի անբաժան մասն են կազմում: Բանաստեղծությունները կարելի է կիրառել իբրև նմուշ՝ գրական խոսակցական խոսքը ուսուցանելու և սովորողների ստեղծագործական ունակությունները զարգացնելու համար:

Բանալի բառեր՝ բանաստեղծական տեքստեր, ռուսաց լեզվի ուսումնական պարապմունք, բնագրաբնույթ, ուսուցման միջոց, ուսուցման գործընթաց:

В соответствии с коммуникативным подходом обучение языку должно учитывать особенности реальной коммуникации, а в основе процесса обучения должна лежать модель реального общения, поскольку владение системой языка является недостаточным для эффективного пользования языком в целях коммуникации. В связи с этим возрастает роль аутентичных, ценных в познавательном, образовательном и воспитательном плане, учебных материалов, определённое место среди которых занимают поэтические произведения, являющиеся неотъемлемой частью культуры. Поэзия может быть использована как образец современной аутентичной разговорно-литературной речи для достижения ведущих целей обучения и развития творческих способностей учащихся.

Ключевые слова: стихотворные тексты, занятия по русскому языку, аутентичный, средство обучения, процесс обучения.

S. MKRTICHYAN
USING POETIC TEXTS IN TEACHING RUSSIAN AT THE
UNIVERSITY (ON THE MATERIAL OF MATUSOVSKY
POETRY)

Communicative approach has prompted to consider peculiarities of real life communication, and teaching is to be underpinned on the model of actual communication, therefore grammatical competence is insufficient for effective use of language in communication. This enhances the role of authentic material with cognitive and educational value, among them poetic texts as an integral part of culture. Poetry may serve a model of up-to-date authentic standard conversation style to achieve major learning objectives and promote learner creativity.

Key words: poetic texts, Russian Language Class, authentic, teaching tool, teaching process.

В настоящее время возникла необходимость организации занятий по русскому языку в форме деятельности, создающей оптимальные учебные возможности для использования самой речи как ведущего средства обучения. В соответствии с коммуникативным подходом обучение языку должно учитывать особенности реальной коммуникации, а в основе процесса обучения должна лежать модель реального общения, поскольку владение системой языка является недостаточным для эффективного пользования языком в целях коммуникации. В связи с этим возрастает роль аутентичных, ценных в познавательном, образовательном и воспитательном плане, учебных материалов, определённое место среди которых занимают поэтические произведения. “Во-первых, стихи, песни – это тот текстовый материал, который положительно эмоционально окрашен для обучаемого, что в значительной степени содействует усвоению материала. Во-вторых, аутентичный литературный или фольклорный материал способствует постижению языка в контексте культур. В-третьих, поэтические тексты и песни являются прекрасным материалом для отработки ритма, интонации иноязычной речи, совершенствования произношения. В-четвертых, при работе со стихами и песнями мы решаем проблему многократного повторения высказываний по одной модели...”[1, с. 28]. Поэзия

традиционно составляет значительный пласт национальной культуры и занимает важное место в системе мировоззренческих и эстетических ценностей носителей языка. Поэтому использование на занятиях по русскому языку поэтических произведений способствует включению учащихся в систему ценностей носителей языка и, тем самым, в систему общечеловеческих ценностей. В стихотворном тексте события, явления, конфликты преломляются через сильную субъективность автора, поэтому читатели имеют возможность познавать не только внешнюю сторону жизни людей в стране изучаемого языка, но и их внутренний мир, а по большому счету и психологию народа. Всё это усиливает эмоционально-личностную сторону преподавания русского языка и влияет на позитивную мотивацию его изучения учащимися. Помимо разнообразного смыслового содержания стихотворные тексты представляют учащимся богатейшую эстетическую информацию, что обуславливает возможность привлечения поэтических произведений к преподаванию русского языка с учетом их значения для всестороннего развития личности учащихся и формирования эстетического вкуса и отношения к миру. Невозможно отрицать и влияние чтения стихотворений на язык учащихся, умение выражать собственные мысли. Из стихотворных текстов учащиеся способны почерпнуть богатейший материал для формирования собственных суждений, что, конечно, позволяет судить не только об определенном уровне коммуникативной компетенции, но и об уровне образованности, общего развития и культуры личности вообще. Наряду с совершенствованием навыков чтения работа со стихотворным текстом может обеспечивать активизацию устного общения на основе и по поводу стихотворения. Стихотворный текст несет в себе богатейший коммуникативный потенциал, который составляет предметный план речевой деятельности. Кроме того, стихотворение, несомненно, располагает определенным количеством языковых средств, которые могут быть использованы при продуцировании устных высказываний. Другими словами, при устном общении на основе стихотворного текста учащиеся используют не только языковые средства и знания, составляющие их прошлый языковой опыт, но и слова, выражения, относящиеся к изучаемому стихотворению и активизируемые на занятии в процессе работы над стихотворным текстом. При этом на всех этапах работы со стихотворением, как в процессе чтения, так и в процессе слушания и говорения по поводу и на основе стихотворного текста будет происходить пополнение и закрепление языковых средств. Работа с поэтическими произведениями способствует развитию устной формы общения, совершенствует навыки чтения, обогащает словарный запас, развивает эвристическое мышление, творческое воображение. Использование стихотворных текстов на занятиях по русскому языку помогает решить практические задачи, оказывает положительное воздействие в плане нравственного и эстетического воспитания учащихся. Поэзия может быть использована как образец современной аутентичной разговорно-литературной речи для достижения ведущих целей обучения и развития творческих способностей учащихся.

Предложенные ниже стихотворные тексты с вопросами и заданиями можно использовать на практических занятиях по русскому языку в вузе.

1. Прочитайте и проанализируйте стихотворный текст. Озаглавьте его так, чтобы это заинтересовало читателя. Проиллюстрируйте. Подготовьтесь

к выразительному чтению стихотворения под музыку, выбранную вами. Сделайте поэтический перевод стихотворного текста.

По камням, острым как ножи,
Потоки мчат, ища спасения.
Как мне с тобою быть, скажи,
Что делать мне с тобой, Армения?

За что мне в дар бесценный дан
Твой мир с горами первозданными
И твой вечерний Ереван
С его поющими фонтанами?

Как мне понять Гегарда мрак
Со всей резьбой его настенною,
Куда автограф свой Галдзаг
Врубил рукою дерзновенною?

Что делать с дрожью этих струн,
Где в каждой песне скрыто грустное,
Как травки кинза и тархун
Почти в любом из блюд присутствуют?

С чем мне сравнить твой тонкий лик,
Который даже поздним вечером,
Как будто небо сквозь ердик,
Всегда старается просвечивать?

Как мне постичь характер твой
И это бешенство веселое,
Когда от пляски круговой
И я совсем теряю голову?

И у кого мне расспросить,
Как в книжный храм пройти мне следует,
Где до сих пор Нарекаци
На равных с Господом беседует.

[2, с. 11-12]

2. Посмотрите на заголовок. Как вы думаете, о чем идет речь? Ознакомьтесь со стихотворным текстом. Какой оттенок придает настроению словосочетание “добрый свет”? Обсудите. Подготовьтесь к выразительному чтению стихотворения. Сделайте его поэтический перевод.

Добрый свет!

Мир вершин уже очерчен смутно,
 Мир низин еще в туман одет.
 Вместо восклицанья “С добрым утром!”
 Говорят армяне: “Добрый свет!”
 Добрый свет - арбе, ползущей круто
 С перегрузкой, заданной осям.
 Очагам и хижинам Цмакута,
 Где рожден был Грант Матевосян.
 Добрый свет - воскресшим вновь колоннам
 Под античной синевой Гарни.
 И селеньям, по отвесным склонам
 Разметавшим тихие огни.
 С острою начинкой баклажанам,
 Ждущим нас сегодня на обед.
 Белым облакам над Дилижаном,
 Лозам виноградным - добрый свет!
 Путникам, шагающим устало,
 Камням, для которых смерти нет,
 Крутолобым горным перевалам
 И стадам овечьим - добрый свет.
 В век, когда земле грозит все чаще
 Атомной шизофрении бред,
 Есть одно лишь, что непреходяще:
 Добрый свет вам, люди, добрый свет!

[2, с. 40-41]

3. Посмотрите на заголовок. Как вы думаете, о чем идет речь? Прочитайте и проанализируйте стихотворный текст. Выделите главную мысль. Побеседуйте. Сделайте поэтический перевод стихотворения.

Памятник-родник

Обычный родничок, особенный родник,
 Отсюда не одно пригубит поколение,
 Средь угловатых скал ты в память тех возник,
 Кто не пришел с войны в родимое селенье.

Кто под огнем poleg, издав предсмертный крик,
 Кому грозили плен и “уманьская яма”.
 Но вопрекор всему ты, памятник-родник,
 Как жилка на виске, пульсируешь упрямо.

Молитвенно гляжу на светлую струю,

На тонкий ручеек, что рек любых бездонней.
И, на колени встав, твою прохладу пью,
Подставив под нее дрожащие ладони.

В своей скупой красе ты скромн и велик.
Кем был из мастеров обычай этот начат?
Ах, памятник-родник, ах, памятный родник,
Что вынес твой народ, когда здесь камни плачут!

[2, с. 13]

4. Прочитайте и проанализируйте стихотворный текст. Выскажите свое мнение о его содержании. Подготовьтесь к выразительному чтению стихотворения.

Летний вечер в Ереване

Никогда не потускнеет
Этих гор очарованье,
Этот звездный небосвод.
Летний вечер в Ереване,
Летний вечер в Ереване, -
Белых бабочек полет.

Неумолчный и нестройный
Гул толпы, легко одетой,
У киосков и садов.
Тень акаций на асфальте,
Что является приметой
Наших южных городов.

Только бы, дыша прохладой,
Дул нам в лица ветер встречный
С голубых верховий гор,
Только б сердце не старело,
Только б длился этот вечный,
Некончающийся спор.

То внезапно возникает,
То скрывается за тучей
Беспокойный свет звезды.
Огоньки плывут и гаснут,
Как пузырьки колючей
Газированной воды.

Погоди, еще стемнеет,
Горы скроются в тумане,
До утра река замрет...
Летний вечер в Ереване,
Летний вечер в Ереване, -
Белых бабочек полет.

[2, с. 42-43]

5. Прочитайте и проанализируйте стихотворный текст. Выделите главную мысль. Побеседуйте. Сделайте поэтический перевод стихотворения.

Севан. 1985

Почти прозрачные на вид,
Ложатся горы, план на план.
Не знаю, что у вас болит,
Но у меня болит Севан.

Где берег оголен на треть,
Как знак невысказанной беды,
На скалах можно рассмотреть
Паденье уровня воды.

Отыгрывается жара
С утра на кустике любом.
Где остров был еще вчера,
Там полуостров встал горбом.

Вот тень мелькнула подо мной, -
То не последняя ль форель?
И небо так белесо в зной,
Как выцветшая акварель.

Вне всех тропинок и дорог,
Без помощи поводья,
Как странники иных эпох,
Шагают два монастыря.

И в узких щелях древних плит
Ютятся вереск и бурьян.
Не знаю, что у вас болит,
Но у меня болит Севан.

[2, с. 53-54]

6. Ознакомьтесь со стихотворным текстом. Озаглавьте его так, чтобы это заинтересовало читателя. Подготовьтесь к выразительному чтению стихотворения.

О, тайна фамилий на “ян”.
Смущавшая нас постоянно,
Как горный прозрачный туман,
Скользкий меж строк Туманяна.

Как где-то за свесом горы
Заря, запылавшая рдяно.
Как звездные эти миры,
Пленившие Амбарцумяна.

Как звук колокольца в ночи,
Диктующий ритм каравана,
Который всегда различим
В поэзии Исаакяна.

Как врубленный в скалы амвон, -
Гегарда глубокая рана.
Как яростный сабельный звон
Мелодии Хачатуряна.

Как взлет этой арки сквозной,
Над бездною замершей странно,
Как сжегший подрамники зной
Картин Мартироса Сарьяна.

[2, с. 31-32]

7. Посмотрите на заголовок. Как вы думаете, о чем идет речь? Прочитайте стихотворный текст. Определите его главную идею. Обсудите. Какие слова и выражения, использованные поэтом, вам особенно понравились и запомнились? Подготовьтесь к выразительному чтению стихотворения.

Тридцать шесть знаков

Вот подкова, что потеряли и на счастье нашли соседи.
Вот склонившая ветви ива, что всегда безутешно плачет.
Вот крутой поворот дороги, уводящей нас в неизвестность.
Вот армянский стрелок с оружием, уцелевший в предместьях Вана.
Вот подсвечник с двумя свечами, чуть мерцающими во мраке.

Вот два горных речных потока, что сливаются воедино.
 Вот певучая дека арфы, где еще не надеты струны.
 Вот змея, что, сверкнув на солнце, притаилась под тенью камня.
 Вот жар-птица, что к нам слетела со страниц рукописной книги.
 Вот монах, на колени вставший и о чем-то просящий Бога.
 Вот проем потайного хода с древней арочной перемычкой.
 Вот окно монастырской башни, заменявшее амбразуру.
 Не однажды еще сравненья для него мне искать придется, -
 Предо мной, как открытье мира, золотой алфавит Маштоца.

[2, с. 20]

Լիտերатура

1. Гебель С.Ф. Использование песни на уроках иностранного языка / Иностранные языки в школе. – 2009. – №5. – с.28-31. - 111с.
2. Матусовский М.Л. Строки из горячего тонаира. Стихи. – Ер.: “Советакан грох”, 1988. – 144 с.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, Բ.Գ.Ռ. Վ.Ն. Հարությունյանը:

ՀՏԴ 32(479.25)

Քաղաքագիտություն

ՀՐԱՅՐ ՓԱՇԱՅԱՆ

ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտի
պաշտոնակատար, ք.գ.թ.

E-mail: hrayr.pashayan@mail.ru

ՄԵԾ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՌԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ¹

44-օրյա մարտական գործողությունների ընթացքում կրած պարտությունն ու դրա հետևանքները առաջնահերթ խնդիր են դարձնում այնպիսի իրատեսական ռազմավարության մշակումը, որը հնարավորություն կընձեռի հաղթահարել առկա մարտահրավերները և քայլեր ձեռնարկել հասարակության զարգացման նպաստավոր պայմանների ստեղծման համար:

Այս համատեքստում հողվածում քննվում են մեծ ռազմավարության հիմնավորման հետ կապված հարցերը, ո՞ր երկրները կարող են ունենալ մեծ ռազմավարություն և ի՞նչ դեր կարող է այն ունենալ Հայաստանի և Արցախի ազգային անվտանգության ապահովման գործընթացում:

Հիմնավորվում է, որ մեր ազգային անվտանգությանը սպառնացող մարտահրավերներին դիմակայելու համար մշակվող ռազմավարության հիմքում պետք է ընկած լինի գիտելիքահեն պետության գաղափարը:

Բանալի բառեր՝ մարտահրավերներ, ազգային անվտանգություն, մեծ ռազմավարություն, գիտելիքահեն պետություն, արդյունավետ կառավարում:

¹ Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության N° scs20-003 գիտական թեմայի շրջանակներում:

Г. ПАШАЯН

БОЛЬШАЯ СТРАТЕГИЯ. ОБОСНОВАНИЕ И ВИДЕНИЕ АРМЕНИИ

Поражение, понесенное в ходе 44-дневных боевых действий и их последствий, делает приоритетной задачу разработки реалистичной стратегии, которая позволит нам преодолеть существующие проблемы и предпринять шаги с целью создания благоприятных условий для развития общества.

В этом контексте в статье рассматриваются вопросы, связанные с обоснованием великой стратегии, у каких стран может быть великая стратегия, какую роль она может сыграть в процессе обеспечения национальной безопасности Армении и Арцаха?

Утверждается, что стратегия, разработанная для решения вызовов нашей национальной безопасности, должна основываться на идее государства, основанного на знаниях.

Ключевые слова: вызовы, национальная безопасность, большая стратегия, наукоемкое государство, эффективное управление.

H. PASHAYAN

GREAT STRATEGY. THE RATIONALE AND THE VISION OF ARMENIA

The defeat suffered during the 44-day hostilities and its aftermath make it a priority to develop a realistic strategy that will enable us to overcome the existing challenges and take steps to create favorable conditions for the development of society.

In this context, the article discusses the issues related to the substantiation of a great strategy, which countries can have a great strategy, what role can it play in the process of ensuring the national security of Armenia and Artsakh?

It is argued that the strategy developed to address the challenges to our national security should be based on the idea of a knowledge-based state.

Key words: challenges, national security, great strategy, knowledge-based state, effective governance.

Խնդիր: Գաղտնիք չէ, որ պետության՝ որպես պատմական անհրաժեշտության առաջացումն ու գոյության իմաստը անխզելիորեն կապված են այն գործառույթների հետ, որոնք նա իրականացնում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական ասպարեզում: Մարտահրավերների պակաս չունեցող արդի աշխարհում թերևս պետության ամենաառաջնային առաքելությունը շարունակում է մնալ առկա և հնարավոր սպառնալիքներից սեփական քաղաքացիների պաշտպանությունը:

2020թ. 44-օրյա մարտական գործողությունների ընթացքում կրած պարտությունը և տարածաշրջանում ուժային նոր վերադասավորումներն ու

հատկապես սեփական հայրենիքում մեր ազգային անվտանգությանը սպառնացող բազում մարտահրավերները, այդ թվում՝ հատկապես ֆիզիկական ոչնչացմանն ուղղված վտանգները, բնականաբար, առաջնահերթ խնդիր են դարձնում այնպիսի իրատեսական մեխանիզմների ձևավորումը¹, որոնք հնարավորություն կընձեռեն հաղթահարել դրանք և քայլեր ձեռնարկել հասարակության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: Դրան է նպատակաուղղված Ժամանակակից աշխարհի քաղաքական ու ռազմական բառապաշարում օգտագործվող հասկացություններից մեկը՝ Մեծ ռազմավարությունը², որը տարբեր ուսումնասիրողների շրջանում տարբեր գնահատականների է արժանացել: Հետևաբար, նախքան բուն նյութին անցնելը անհրաժեշտ է պարզաբանել ինչպես մեծ ռազմավարությանը դեմ և կողմ հիմնավորումները, այնպես էլ այն հարցի պատասխանը, թե ո՞ր երկրները կարող են ունենալ մեծ ռազմավարություն և ի՞նչ դեր կարող է այն ունենալ ՀՀ+ԱՀ ազգային անվտանգության ապահովման գործընթացում:

«Մեծ ռազմավարություն». **դեմ և կողմ հիմնավորումները:** Որոշ ուսումնասիրողների դիտարկմամբ՝ Մեծ ռազմավարություններն այնքան էլ կարևոր չեն, որքան ցանկանում են ներկայացնել ռազմավարները, քանի որ երկրները սովորաբար գնահատվում են ոչ թե փաստաթղթերում արձանագրված դրույթներով կամ դեկլարության խոսքերով, այլ նրանց գործողություններով: Այս տեսակետը հիմնավորվում է նաև այն փաստարկով, որ ներկայիս քառսային, անկայուն և հարափոփոխ իրականությունը չի կարող ապահովել գործնական, կայուն և հետևողական ծրագրեր երկարաժամկետ հեռանկարում, ինչը մեծ ռազմավարության առանցքն է հանդիսանում: Հետևաբար, նման միջավայրում հաջողակ լինելու համար ռազմավարությունները պետք է անընդհատ փոխել, իսկ գիտնականները, փորձագետները, վերլուծաբանները և քաղաքականություն մշակողները փոխանակ վիճելու, թե ում ռազմավարական դոկտրինն է լավ կամ վատ, պետք է կենտրոնանան խնդիրների լուծման ավելի գործնական ձևերի վրա: Այս տեսանկյունից՝ «քննարկել մեծ ռազմավարություն, նշանակում է ինքնախաբեությամբ զբաղվել, մինչդեռ մեր շուրջը աշխարհը փոխվում է: Այնպես

¹ Նկատի ունենք, որ նախորդիվ գոյություն ունեցած համանման մեխանիզմները, այդ թվում՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը, նոր իրողությունների համատեքստում ենթակա են լուրջ վերափոխումների:

² Քանի որ «Մեծ ռազմավարություն» հասկացության ծագումն ու էությունը, տարբեր հեղինակների հասկացության վերաբերյալ ձևավորված հիմնական տեսակետներն ու մեկնաբանությունները, պատմական դրսևորումներն ու դրանց արդի օրինակները ներկայացված են հեղինակի «Մեծ ռազմավարություն. ծագումը, էությունը, մեկնաբանման հիմնական տարբերակները» հոդվածում (ներկայացված է հրատարակության ԱրՊՀ գիտական տեղեկագրի 2021թ. առաջին համարում), այստեղ դրան չենք անդրադառնա:

որ, գործելու ժամանակն է, նույնիսկ մեծ ռազմավարության բացակայության դեպքում»¹:

Մեր կարծիքով սակայն, վերոնշյալն ամեննին էլ չի հակասում Մեծ ռազմավարություն ունենալու անհրաժեշտությանը, ինչպես որ կարող է թվալ առաջին հայացքից: Բանն այն է, որ Մեծ ռազմավարությունը պետք է նմանվի հստակ ձևակերպված ճանապարհային քարտեզի, որտեղ ներկայացվում է, թե ինչպես համադրել միջոցներն ու նպատակները: Իհարկե, այն լավագույնս գործում է կանխատեսելի միջավայրում, որտեղ քաղաքական գործիչները հստակ պատկերացում ունեն իշխանության բաշխման, ազգային նպատակների շուրջ ներքին փոխզիջման և ինքնությանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ, որտեղ առկա են կայուն քաղաքական և ազգային անվտանգության ապահովմանն ուղղված ինստիտուտներ: Իհարկե այդպիսի միջավայրն ինքնին չի ձևավորվում: Հետևաբար, մեծ ռազմավարությունը կարող է կենսունակ լինել, եթե հիմնված լինի պետության առանցքային քաղաքական դերակատարների և ընտրախավի (էլիտա) ընդհանուր աշխարհընկալման վրա: Այլ կերպ ասած, խնդիրն այն է, որ եթե յուրաքանչյուր նոր կառավարություն իշխանության գալով ունենա գլոբալ մարտահրավերների և հնարավորությունների արմատապես տարբեր ընկալումներ, ոչ մի ռազմավարություն երկար կյանք չի ունենա: Ցանկացած հաջորդ կառավարություն կկործանի իր նախորդների քաղաքականությունը՝ ոչնչացնելով մեծ ռազմավարության գաղափարը: Օրինակ, զսպման քաղաքականությունն ԱՄՆ-ում երկարաժամկետ էր ու կայուն, քանի որ ԱՄՆ յուրաքանչյուր նախագահ՝ Հարի թրումենից մինչև Ռոնալդ Ռեյգան, հիմնականում հավատարիմ էին գլոբալ խնդիրների ու տնտեսավարման հիմնարար սկզբունքներին:

Հետևաբար, անկայուն իրավիճակներում և անցումային ժամանակահատվածում գտնվող երկրների համար ևս, ինչպես մատնանշում է հետազոտողների մյուս մասը և ում հետ դժվար է չհամաձայնել, մեծ ռազմավարությունը նույնպես կարևոր նշանակություն ունի: Նման պահերին հատկապես օգտակար է հստակ ձևակերպված, հասարակական-քաղաքական լայն շերտերի աշխարհընկալումներն ու արժեհամակարգն արտացոլող ռազմավարությունը, որը որպես ուղեցույց կապահովվի հետևողական գործողություններով՝ հնարավորություն տալով պետության մտադրությունների մասին համապատասխան ազդակներ փոխանցել հասարակությանը ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում: Այս դեպքում՝ «Ըստ էության, մեծ ռազմավարությունը նկարագրում է, թե ինչպես է ազգը տեսնում իր դերը աշխարհում և այն ընդհանուր նպատակները, որոնք առաջնորդում են նրա

¹ Даниел Дрезнер, Рональд Кребс, Рэндалл Швеллер. Конец большой стратегии. Россия в глобальной политике, № 4 июль/август, 2020 год. Էլեկտրոնային տարբերակ <https://globalaffairs.ru/articles/konecz-bolshoj-strategii/>

գործողությունները»¹: Իհարկե, այստեղ պետք է հաշվի առնել մի կարևոր նրբություն. պետք չէ բարձրաձայնել Մեծ ռազմավարության իրականացման կոնկրետ քայլերի մասին, քանի որ և՛ հակառակորդները, և՛ նույնիսկ չափազանց զգույշ ընկերները կհասկանան, թե ուր պետք է ուղղեն իրենց հակահարվածները²:

Ո՞ր պետությունները կարող են ունենալ «Մեծ ռազմավարություն»: Այս հարցի հետ կապված գիտական և քաղաքական շրջանակներում նույնպես միասնություն չկա: Մասնագետներից ոմանք նշում են, որ Մեծ ռազմավարությունը բացառապես գերտերությունների առանձնաշնորհն է, քանի որ նրանք ունեն բավարար քանակությամբ ռեսուրսներ և անհրաժեշտ ուժ «մեծապետական» քաղաքականություն իրականացնելու համար, որոնք հաճախ գլոբալ բնույթ ունեն: Իսկ միջին կամ փոքր տերությունները հաճախ ենթադրաբար կամ բացահայտորեն չափազանց կաշկանդված են մեծ ռազմավարություն իրականացնելու համար:

Հավանաբար այս տեսակետի ձևավորման գործում իր դերն է խաղացել հայեցակարգի «գրանդ» արտահայտությունը, որը հաճախ շփոթում են *շքեղ* կամ *հավակնոտ* հասկացության հետ: Թերևս դա է պատճառներից մեկը, որ մեծ ռազմավարության ուսումնասիրությունների հիմնական մասը նվիրված է գերտերությունների վերելքի ու անկման և փոփոխվող ռազմավարական հանգամանքներին նրանց հարմարվելու ունակության վրա: Իհարկե, այստեղ հասկանալիորեն իր դերն ունի պետության տարածաշրջանային կամ միջազգային ազդեցիկությունը: Դա է պատճառը, որ մեծ ռազմավարության հայեցակարգը

¹ William C. Martel, *Grand strategy in theory and practice: The Need for an Effective American Foreign Policy*. Cambridge University Press, 2015, p.11. Էլեկտրոնային տարբերակ՝ <https://ru.pdfdrive.com/grand-strategy-in-theory-and-practice-the-need-for-an-effective-american-foreign-policy-d175324654.html>

Большое внимание Билло уделил Соледадскому соглашению, которое с самого начала не было одобрено французским правительством по следующим причинам. Прежде всего, оно позволило Хуаресу организовать оборону и оказать давление на тех мексиканцев, которые были не согласны с его политикой. Кроме того, это соглашение противоречило целям экспедиции и интересам Франции. Условия соглашения Билло считал прискорбными, а большинство депутатов назвали их унижительными для Франции. Поэтому правительство императора не одобрило соглашения и послало соответствующие инструкции 20 марта телеграфом, а 31 марта — почтой, где вполне четко были определены цели экспедиции: возмещение ущерба и правительство, которое предоставит гарантии на будущее.

Билло отметил, что политика мексиканского правительства не изменилась и после Соледадского соглашения, и в доказательство привел письма испанского представителя Прима, датированные 20, 21 и 23 марта 1862 г., Жюрьеу де ла Гравиеру. В них он выразил недовольство действиями мексиканского правительства.

В корреспонденции между Примом и Гравиером последний просил Прима, чтобы

¹ *Blayau N Billault ministre de Napoléon III. Paris, 1969. P.*

тот предложил Хуаресу объявить всеобщую амнистию, с тем, чтобы воля мексиканцев проявилась свободно, т.е. позволить высказаться как друзьям, так и противникам правительства. Тогда, в случае если народ, освобожденный от постоянного давления, угроз быть осужденным на смерть, проголосует за республику Хуареса, это станет продолжением его права, и оно будет признано.

Важно отметить письмо Жюрьена де ла Гравьера от 22 марта Приму, в котором французский представитель определил свою позицию по вопросу мексиканских эмигрантов. Во-первых, они уехали из Веракруса вопреки его желанию. Было бы желательно, чтобы эмигранты остались ждать амнистии в Веракрусе, а затем примирить партии, положив конец гражданской войне. В конце письма Гравьер отмечал, что у него нет приказа основать монархию вопреки воле мексиканцев, так же как нет приказа укреплять республику. Он просил Прима довести до сведения Дობладо его личное мнение и намерения французского правительства.

Билло подчеркнул, что Соледадские соглашения, прискорбные в своих оговорках, не были ратифицированы французским правительством по следующим причинам: они противоречили первоначальным замыслам экспедиции и последующим инструкциям; правительство Хуареса продолжало политику притеснения и унижения французских граждан.

В заключительной части выступления Билло вновь коснулся дела Жеккера, подчеркивая, что он ссылается на те же депеши.

Чарльза Уика, которые цитировал Фавр, и подробно изложил историю вопроса. В конце 1859 г. — начале 1860 г., когда Мирамон был президентом мексиканской республики и его признали многие европейские государства, Хуарес провозгласил себя президентом в Веракрусе. Обоим нужны были деньги. Тогда Мирамон заключил с домом Жеккера заем на сумму, которая варьируется от 750 тыс. до 3 млн. пиастров, и вручил Жеккеру боны, подлежащие оплате на таможене. Французские граждане, приобретшие эти боны, имели, следовательно, в этом деле законный интерес.

До разрыва с союзниками две депеши министра иностранных дел потребовали признать принцип рекламации. Даже учитывая то обстоятельство, что это являлось делом низвергнутого правительства, он употреблялся в борьбе против Хуареса. Билло приводил в доказательство депеши Тувенеля-Салиньи от 28 февраля и 14 марта 1862 г. В них министр призвал посла включить все, что должны Франции. На конференции в Оризабе стороны условились сохранить в рекламациях на имя правительства Хуареса заем Жеккера.

Таким образом, ни финансовый ультиматум, ни дело Жеккера, по мнению Билло, не были действительными мотивами разрыва между представителями союзных держав. Билло подверг анализу формулу Фавра: переговоры или отступление. Следует отбросить переговоры, потому что все предыдущие соглашения не выполнялись. Отступление, когда пролита французская кровь, когда Законодательный корпус, узнав об этом, сразу же выделил кредит в сумме 15 млн., когда французских граждан продолжали угнетать и притеснять, было бы равносильно предательству ¹.

1 Император писал на следующий день своему министру: «Я выражаю вам мое полное удовлетворение за прекрасное выступление... я прочитал его с живейшим интересом и восхищался не

Отметим следующее. Столкнулись два варианта действия: оппозиция в лице Фавра предлагала правительству вести переговоры с Хуаресом, а Билло от имени правительства настаивал на силовом решении вопроса для возмещения ущерба. Очевидно, предложение Фавра не было плохим, но оно не укладывалось в рамки национального сознания. Ведь были задеты честь и достоинство Франции! Как можно было оставить такое без последствий? С этой точки зрения выступление Билло во многом импонировало задетому национальному самлюбию и было принято с одобрением. Кроме того, доводы правительства звучали более убедительно, во всяком случае на этом этапе обсуждения проблемы, и базировались на документах. Фавр же ограничился лишь незначительным цитированием.

12 января 1863 г. открылась последняя сессия Законодательного корпуса, избранного в 1857 г. В тронной речи император, говоря о далеких экспедициях, отметил, что «экспедиции в Китай, Кохинхину и Мексику показывают, что нет такой далекой области, где нанесение ущерба чести Франции осталось бы безнаказанным»¹.

Правительственное послание о внутреннем и внешнем положении в Сенате представил Мань, а в Законодательном корпусе — Варош².

Мексиканская проблема нашла свое отражение в трех разделах: военном, морском и по делам колоний, иностранных дел. В разделе «Военное министерство» были выделены следующие аспекты. В 1862 г. военные операции за пределами Франции в основном проходили в Мексике. Далее говорилось о составе французских войск и их транспортировке.

В разделе по иностранным делам отмечалось де-факто о разрыве между союзниками. Исходя из этого обстоятельства правительство решило послать значительное подкрепление, поскольку в данное время только французские войска решали задачи, которые должны были провести союзные войска. Ожидание этих подкреплений неизбежно повлекло за собой отсрочку в военных операциях. Чтобы обеспечить единство руководства, дипломатические и военные полномочия были сконцентрированы в руках командующего экспедиционным корпусом. Таким образом, мексиканский вопрос вошел полностью в военную фазу.

Как уже отмечалось, вместе с правительственным посланием были приложены дипломатические документы. Они охватывали период, предшествовавший Лондонской конвенции, инструкции уполномоченным Франции относительно линии поведения в мексиканской экспедиции и дипломатическую переписку между Тувенелем и его послами в Мадриде (Варро) и Лондоне (Флао) за весь 1862 г. Но наиболее важным документом, на наш взгляд, стало письмо императора генералу Форей от 3 июля 1862 г. Оно определило цели экспедиции и образ действий Форей, наделенного дипломатическими и военными полномочиями.

Целесообразно подробнее остановиться на этом документе, поскольку он четко обозначил основные идеи главы исполнительной власти. С другой стороны, разъяснение позиции правительства в Законодательном корпусе окажет большое влияние на восприятие экспедиции большинством депутатов.

только талантом оратора, но и также патриотическими порывами». См.: Blayau N. *Op.cit.* P

¹ *Moniteur*. 12 janvier 1863.

² *Moniteur*. 13 janvier 1863.

Итак, император предписывал Форею: прямо в момент прибытия выпустить прокламацию о целях экспедиции; принимать благожелательно всех мексиканцев, предлагающих свои услуги; придерживаться нейтралитета среди конфликтующих сторон до тех пор, пока мексиканцы не выскажутся по форме правления; почтительно относиться к религии и к держателям национальной собственности; содержать, вооружать и платить жалованье, исходя из возможностей, вспомогательным мексиканским войскам, которые должны играть главную роль в сражениях; как среди основных войск, так и во вспомогательной армии соблюдать строгую дисциплину; подавлять любой акт, наносящий обиду мексиканцам, учитывая гордость их характера.

Важно подчеркнуть, что в письме для Наполеона взятие Мехико является решенным вопросом. А ведь оно было написано только в июле 1862 г., когда французские войска потерпели поражение под Пуэбло. С другой стороны, ощущается определенная осторожность в инструкциях императора. Так, генералу предписывается (в качестве желательного действия), дойдя до Мехико, собрать известных политических деятелей всех ориентаций с целью формирования Временного правительства. В свою очередь, правительство представит мексиканскому народу вопрос о политическом режиме, который должен быть установлен окончательно. Затем по мексиканским законам должна быть избрана национальная ассамблея. Задача командующего — помочь новой власти создать администрацию, и прежде всего в области финансов, взяв за основу модель Франции. Что касается формы правления, то она должна быть создана по воле мексиканцев, но с шансами на стабильность и обеспечение Франции возмещения ущерба. Если они предпочтут монархию, то в интересах Франции поддержать их в этом стремлении.

Подводя итоги, Наполеон подчеркивал, что задетая военная честь и проведение политики в интересах промышленности и торговли требуют двинуть войска с тем, чтобы установить либо монархию, либо, по крайней мере, правительство, гарантирующее определенную стабильность¹.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

¹ Наполеон III — Форею. Париж, 3 июля 1862 г. Дипломатические документы.

ՀՏԴ 342.7(479.243)

Իդրավագիտություն

Սոսի ՋԱՔԱՐՅԱՆ

ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս

E-mail: sosy21@yandex.com

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՄԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ինչպես իշխանության մյուս թերը, այնպես էլ օրենսդիր իշխանությունը մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ոլորտում օժտված է բավարար լիազորություններով: Քանի որ պետական բոլոր մարմինների գործունեության գլխավոր խնդիրը հանդիսանում է մարդկանց բարեկեցության ապահովումը, ԱՀ Ազգային ժողովը ևս ունի առանձնահատուկ կարգավիճակ ու իրավասություններ նշված խնդրում: Մակայն պետք է նշենք, որ Արցախի օրենսդիր մարմինն առկա կարգավորումներից բացի, ունի նաև հսկայական անելիքներ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում:

Բանալի բառեր՝ Մարդու և քաղաքացու իրավունքներ ու ազատություններ, օրենսդիր իշխանություն, Մահմանադրություն, օրենք, Ազգային ժողով, ԼՂՀ, ԱՀ

С.ЗАКАРЯН

**ЗАЩИТА ПРАВ ЧЕЛОВЕКА В
ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ВЛАСТИ
АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКИ**

Как и другие ветви власти, законодательная власть обладает достаточными полномочиями в области прав и свобод человека и гражданина. Поскольку главной задачей всех государственных органов является обеспечение благосостояния народа, Национальное Собрание Арцахской Республики имеет в этом отношении особый статус и полномочия. Однако следует отметить, что в дополнение к существующим положениям законодательный орган Арцаха предстоит многое сделать в области защиты прав человека.

Ключевые слова: права и свободы человека и гражданина, законодательная власть, Конституция, закон, Национальное Собрание, НКР, РА

**S.ZAQARYAN
PROTECTION OF HUMAN RIGHTS IN THE
LEGISLATIVE AUTHORITY
OF THE ARTSAKH REPUBLIC**

Like other branches of power, the legislature has sufficient powers in the field of human and civil rights and freedoms. As the main task of all state bodies is to ensure the welfare of the people, the National Assembly of the Republic of Artsakh has a special status and authority in this regard. However, it should be noted that in addition to the existing regulations, the Artsakh legislature also has a lot to do in the field of human rights protection.

Key words: Human and civil rights and freedoms, legislative power, Constitution, law, National Assembly, NKR, RA

Մարդու իրավունքների պաշտպանության հայեցակարգում կարևոր տեղ է գրավում օրենսդիր իշխանությունը: Ներկայացուցչական այս մարմնի կողմից մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն իրականացվում է առանձնահատուկ ձևով, այն է՝ օրենքներ ընդունելու, պատգամավորների կողմից քաղաքացիների ընդունելություն կազմակերպելու, համաներման ակտ ընդունելու, Մարդու իրավունքների պաշտպանին ընտրելու և այլ միջոցներով: Մինչև նշված գործառույթներին անդրադառնալը, պատմական համառոտ անդրադարձ կատարենք Արցախի Հանրապետության Ազգային ժողովի անցած ուղուն:

Անկախության հռչակումից անմիջապես հետո Արցախի իշխանավորներն ու մտավորականները ձեռնամուխ եղան պետականակերտման լուրջ ու պատասխանատու գործին: Ի կատարումն 1991թ. դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեում ժողովրդի կամքի արտահայտության, 1991թ. դեկտեմբերի 28-ին անց են կացվել ԼՂՀ պետական իշխանության բարձրագույն մարմնի՝ ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավորների ընտրություններ: Կազմավորումից անմիջապես հետո նորաստեղծ խորհրդարանը ձեռնամուխ եղավ իր գլխավոր գործառնության՝ օրենքների ընդունման պարտականությանը: Օրենսդիր մարմնի առաջին քայլերից մեկը եղավ այն, որ ԼՂՀ Գերագույն խորհուրդն իր պարտքը համարեց միանալ և իրավական համակարգի բաղկացուցիչ մաս կազմել միջազգային իրավունքի այնպիսի հանրահայտ կոնվենցիաների, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը և դրան կից ֆակուլտատիվ արձանագրությունը¹, ինչպես նաև 1949 թվականի Ժնևյան կոնվենցիաներն և դրանց՝ 1977 թվականի լրացուցիչ արձանագրությունները²: Դրանով Լեռնային Ղարաբաղի անկախ պետությունն իր պատրաստակամությունը հայտնեց՝ լծվել իրավական ու դեմոկրատական երկիր կառուցելու, ինչպես նաև մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանման, երաշխավորման ու պաշտպանության կարևոր գործին:

Քանի որ անկախությունը ձեռք բերելուն զուգընթաց երկրում տիրում էր պատերազմական վիճակ, միևնույն ժամանակ զգացվում էր իրավաբանների, համապատասխան մասնագետների ու փորձի պակաս, ԼՂՀ ԳԽ որոշում ընդունեց <<մինչև սեփական Սահմանադրության և օրենքների ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կիրառել ՀՀ գործող օրենսդրությունը: ՀՀ օրենսդրությամբ կարգավորված հարաբերությունների համար կարող են կիրառվել նախկին ԽՍՀՄ օրենսդրական ակտերը, եթե չեն հակասում Լեռնային Ղարաբաղի

¹ Տես՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 23-ի <<Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագրին>>, <<Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին>>, <<Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին>> և դրան կից ֆակուլտատիվ արձանագրությանը միանալու մասին N ԹՆ-0098-1 որոշումը. <http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=3493>

² Տես՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 23-ի <<1949 թվականի Ժնևյան համաձայնագրերը և դրանց 1977 թվականի լրացուցիչ արձանագրությունները ի կատարումն ընդունելու մասին>> N ԹՆ- 0097-1 որոշումը. <http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=3492>

Հանրապետության անկախության Հռչակագրին>>:¹ Դրանից բացի, Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է նա մի ակտ, որով <<տնտեսական բարեփոխումների գործընթացը ապահովելու համար իրավունք վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից համապատասխան օրենքների մշակումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի լիազորությունների շրջանակներում գտնվող առանձին հարցեր ժամանակավորապես կարգավորել կառավարության որոշումներով>>:² Հետագա տարիներին օրենսդրական գործընթացը մտավ իր բնականոն հունի մեջ, և ընդունվեցին բազմաթիվ օրենքներ ու այլ նորմատիվ իրավական ակտեր:

1996թ. մարտի 19-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի որոշմամբ խորհրդարանը վերանվանվել է *Ազգային ժողով*:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ԼՂՀ ստեղծման առաջին իսկ օրերից իշխանական թևերն որդեգրել են երկրի հասարակական-քաղաքական գրեթե բոլոր ոլորտներում և, առաջին հերթին, օրենսդրական մակարդակում ՀՀ-ի հետ նույնականացման քաղաքականություն: Այսինքն՝ այն բոլոր օրենքները, որոնք ընդունվել են Արցախի Հանրապետության խորհրդարանի կողմից, գրեթե անփոփոխ կերպով կրկնօրինակում են Հայաստանի Հանրապետության օրենքները: Բացառություն են կազմում այն օրենքները, որոնք կապված են հանրապետության ճանաչման հետ: Օրինակ, ԱՀ-ն հայտնի պատճառներով դեռևս չի ընդունել քաղաքացիության մասին օրենք, բայց դրա փոխարեն ընդունել է Քաղաքացիության հիմնական սկզբունքների մասին օրենքը:³

Այդ միտումը շարունակվում է մինչ օրս: Սա բացատրվում է ոչ միայն նրանով, որ Հայաստանի ու Արցախի ժողովուրդը նույն հայ ազգն է, և մենք ունենք նույն պատմությունը, նույն անցյալը և նույն մշակույթը, այլև նրանով, որ Արցախի Հանրապետության իշխանությունների վերջնական նպատակը համարվում է միավորումը Հայաստանի Հանրապետության հետ: Արցախցիները 1988 թվականի փետրվարյան շարժման ժամանակ <<ՄԻԱՅՈՒՄ>> /ընդգծումը

¹ Տես՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի 1992 թվականի հունիսի 6-ի <<Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ժամանակավոր օրենսդրական կարգավորում սահմանելու մասին>> N ՀՆ-0050 որոշումը. <http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=3474>

² Տես՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի 1995 թվականի փետրվարի 14-ի <<Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի լիազորությունների շրջանակներում գտնվող առանձին հարցեր ժամանակավորապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Կառավարության որոշումներով կարգավորելու մասին>> N ԹՆ-0118-1 որոշումը. <http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=3513>

³ <<Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիության հիմնական սկզբունքների մասին>> ԼՂՀ օրենքը ընդունվել է 1995 թվականի նոյեմբերի 9-ին. <http://arlexis.am/>

մերն է՝ Մ.Ա./ էին վանկարկում հենց Հայաստանի Հանրապետությանը, այլ ոչ թե որևէ այլ երկրի:

Ոչ միայն օրենքներն են շատ նման /վերջին տարիների օրենսդրական կարգավորումների տարբերությունները գլխավորապես կապված են պետության կառավարման տարբեր ձևեր ընտրելու հետ/, այլև Սահմանադրությունները: Սահմանադրական վերջին բարեփոխումների արդյունքում ևս երկու երկրների Սահմանադրությունների առաջին երեք գլուխները /Գլուխ 1. Սահմանադրական կարգի հիմունքները, Գլուխ 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, Գլուխ 3. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները/ գրեթե լիովին նույնն են, բացառությամբ մի երկու կետի: Տարբերություններից մեկն այն է, որ ՀՀ օրենսդրական հիերարխիայում մտցվեց նոր նորմատիվ ակտի տեսակ՝ սահմանադրական օրենք /5-րդ հոդվածի 2-րդ կետ/, որը բացակայում է ԱՀ Սահմանադրությունում, իսկ մյուսը ՀՀ Սահմանադրությամբ /41-րդ հոդվածի 3-րդ կետ/ նախատեսվում է որպես այլընտրանքային ծառայություն, իսկ Արցախի Սահմանադրության մեջ դա բացակայում է, որը, միանաշանակ, ճիշտ դիրքորոշում է փոքրաքանակ և „ոչ պատերազմ, ոչ խաղաղություն,, իրավիճակում գտնվող, թշնամիներով շրջապատված երկրի համար:

Հիշատակության է արժանի Գերագույն խորհրդի կողմից 1992 թվականի հունիսի 5-ին ընդունված ևս մի փաստաթուղթ՝ <<Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության մշակման հանձնաժողով ստեղծելու մասին>>, որի մասին քչերը գիտեն:¹ Այս ակտով սահմանվում էր ստեղծել 25 հոգուց բաղկացած հանձնաժողով, որը պետք է Սահմանադրության տեքստն ընդուներ ու հանրաքվեի դնել հաջորդող կարճ ժամանակամիջոցում: Ճիշտ է՝ Սահմանադրության տեքստն այդպես էլ չկազմվեց ու չընդունվեց /այլ միայն 14 տարի անց՝ 2006 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունվեց ԼՂՀ Սահմանադրությունը/, որի գլխավոր պատճառը պատերազմն էր, այնուամենայնիվ, կատարվածը բավականին առաջադիմական ու գովասանքի արժանի քայլ էր տվյալ ժամանակաշրջանի համար: Տեղ գտած փաստը մեկ անգամ ևս հաստատեց արցախցուն բնորոշ օրինապահությունն ու օրինապաշտությունը, ինչը կարևոր հիմնաքար է պետականաշինության գործում:

ԱՀ Սահմանադրության 5-րդ գլուխը վերաբերում է Ազգային ժողովին: Համաձայն Մայր օրենքի, խորհրդարանն ընտրվում է հինգ տարի ժամկետով: Ազգային ժողովը կազմված է ոչ պակաս, քան 27 և ոչ ավել, քան 33

¹ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն Գերագույն խորհրդի 1992 թվականի հունիսի 5-ի <<Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության մշակման հանձնաժողով ստեղծելու մասին>> N ԹՆ-0045^ա -1 որոշումը. arlexis.am/DocumentView.aspx?DocID=3586

պատգամավորից: Ի տարբերություն 2006 թվականի Սահմանադրության, 2017 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը նախատեսում է Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացնել Հանրապետության նախագահի ընտրությունների հետ միաժամանակ: Դա ոչ միայն նորություն է ԱՀ սահմանադրական իրավունքի ոլորտում, այլև աշխարհի մասշտաբով քիչ տարածում ունեցող սահմանադրական ինստիտուտի առկայություն է նշանակում: Ընտրությունների անցկացման այս մոդելի արդյունավետությանն առայժմ կարելի է կասկածանքով վերաբերվել: Մինևույն ժամանակ, ընտրություններին ընդառաջ /2020 թվականի մարտի 31-ին Արցախում տեղի ունեցան նախագահական և խորհրդարանական ընտրություններ/ հապճեպ կարգով ձևավորվել են տասնյակ կուսակցություններ, որոնցում ընդգրկված մարդկանց ճնշող մեծամասնությունը չունի քաղաքական անցյալ, հետևաբար, այդ կուսակցությունները չունենին ավանդույթներ, գաղափարախոսություն, կոնկրետ ծրագրեր: Այդ ընտրություններին մասնակցելը և հաջողության դեպքում պատգամավորական մանդատ ձեռք բերելը նշված կուսակցությունների հիմնադիրները առավելապես դիտարկում էին որպես համեմատաբար բարձր աշխատավարձ ստանալու և իշխանական որոշ արտոնություններից օգտվելու միջոց, քան թե երկրի համար իրապես մտածելու, գործելու և մարդկանց կյանքի որակը բարելավելու պարտականություն: Տեղին ենք համարում նշել նաև, որ հազիվ 150 հազար բնակչություն ունեցող երկրի համար այդքան շատ կուսակցությունների առկայությունը պարզապես անարդյունավետ ու ավելորդ է, խճճված ու խիստ քաղաքականացված է դարձնում բնակչության առօրյան: Համոզված ենք, որ այդ կուսակցություններից շատերը կդադարեն գործել ընտրություններից հետո: Իսկ պատգամավորական մանդատի հետ ձեռնարկատիրական գործունեության անհամատեղելիությունը Արցախի օրենսդիրների մի զգալի մասի համար շարունակում է մնալ սահմանադրական ձևական պահանջ:

Եվ այսպես, անդրադառնանք մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ԱՀ օրենսդիր մարմնի լիազորություններին: Առաջին հերթին, դա, իհարկե, *օրենքներ ընդունելն է*: Պատգամավորների գլխավոր խնդիրը պետք է լինի հանրապետության իրավական դաշտի ստեղծումն ու զարգացումը: Խոսքն առավելապես վերաբերում է իրավական օրենքների ընդունմանը, որոնք պետք է համապատասխանեն մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին առնչվող միջազգային փաստաթղթերի պահանջներին: Սակայն ամեն մի միջազգային կոնվենցիա չէ, որ հարկ է ներդնել մեր ազգային օրենսդրության մեջ: Պետք է հաշվի առնել ռազմաքաղաքական և ազգային նշանակության այնպիսի գործոններ, ինչպիսիք են ԱՀ ինքնիշխանության, ազգային և ընտանեկան արժեքները, բարոյականությունը, ազգապահպանությունը. ինչպես նաև հայ-ադրբեջանական հակամարտությունն ու մեր փոքրաքանակ լինելը: Տեղին կլինի

գոհունակությամբ արձանագրել, որ Արցախում գերիշխում են ընտանեկան, ազգային, ավանդական, բնական բարոյական արժեքները, որոնք ամրապնդում ու սնուցում են հայի ոգին ու մարդկային առաքինի որակները: Այստեղ, նախկինի պես, ամուր է ավանդական ընտանիքի դերը հասարակության ու պետության մեջ: Մի շարք գերզարգացած երկրներում, որտեղ արդեն խարխվել են ավանդական ընտանիքի վերաբերյալ պատկերացումները, գրեթե վերացել են ծնող-երեխա-ազգականներ կապերում *փոխադարձ սեր, հարգանք, ինամք ու հոգատարություն* հասկացություններն ու երևոյթները. ամուսնանում են առանց երեխա ունենալու մտադրության, և ընտանիքը ճգնաժամ ու դեգրադացիա է ապրում, իսկ ծնելիության մակարդակն օրեցօր նվազում է: Այդ երկրներում կարող են միայն զարմանքով ու նախանձով դիտարկել հայկական մեր ընտանիքները: Այստեղ, նախկինի պես, ինչպես Կոնֆուցիոսն է ասում, <<հայրը մնում է հայր, իսկ որդին՝ որդի>>:

Հաշվի առնելով, որ խորհրդարանը որքան քաղաքական, նույնքան էլ իրավաբանական կառույց է, մասնագիտացվածության ցածր աստիճանը որակագրկում է ԱԺ-ի՝ որպես իշխանության երեք թևերից մեկը հանդիսացող մարմնի առաքելությունը: Այսինքն՝ օրենք ընդունող մարմինը պետք է նաև իմանա օրենքի ընդունման նպատակի, դերի, գործառույթի, խնդիրների ոչ միայն գործառնական, այլև իրավական, սոցիալական, ինչու չէ՝ նաև փիլիսոփայական կողմի մասին: Օրենք ընդունելը չպետք է ինքնանպատակ լինի: Ուստի հաշվի առնելով դա և որոշ այլ հանգամանքներ՝ Սահմանադրության 48-րդ հոդվածում հարկ է ավելացնել ևս մի կետ՝ 3.1.՝ հետևյալ խմբագրությամբ. <<Ազգային Ժողովի պատգամավորների առնվազն կեսը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական կրթություն>>: Ի դեպ, օրենսդիր մարմնի՝ պրոֆեսիոնալ իրավաբան պատգամավորներով համալրված լինելու մասին դեռևս ժամանակին իր կարևոր դիտարկումն է հայտնել 18-րդ դարի առաջադեմ մտավորականներից մեկը՝ Շառլ Լուի Մոնտեսքյոն/1689-1755թթ./, իր հանրահայտ <<Օրենքների ոգի>> աշխատությունում¹:

Հաջորդ կարևոր լիազորությունը, որը ուղղակի կապ ունի մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության հետ, *պատգամավորների կողմից քաղաքացիների ընդունելություն կազմակերպելն է*, ինչպես նաև լիազորությունների շրջանակում, օրենքով սահմանված կարգով քաղաքացիների գրավոր առաջարկներին պատասխանելը, ինչը Ազգային ժողովի կանոնակարգ օրենքում² ներկայացվում է որպես պատգամավորի պարտականություն: Իսկ ահա Արցախի Հանրապետության Ազգային ժողովի

¹ **III. Монтескье.** Избранные произведения. АКАДЕМИЯ НАУК СССР Институт философии. Государственное издательство Политической литературы. Москва, 1955 год.

² Տե՛ս՝ <<Ազգային ժողովի կանոնակարգ օրենք>>, ընդունվել է 2017 թվականի մայիսի 31-ին, <http://www.nankr.am/hy/34>

պատգամավորի գործունեության երաշխիքների մասին օրենքի¹ 7-րդ հոդվածը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են պատգամավորի պահանջով ամսական առնվազն մեկ օր կահավորված սենյակ կամ դահլիճ հատկացնել նրան՝ քաղաքացիների ընդունելություն կազմակերպելու համար: Անընդունելի ու անհասկանալի են այն իրավաբանների հայտարարությունները², որոնք շեշտում են, թե պետք է հնարավորինս քիչ դիմեն կամ ընդհանրապես չդիմեն ԱԺ պատգամավորներին՝ իրենց խախտված իրավունքները վերականգնելու նպատակով, որպեսզի չխոչընդոտեն պատգամավորի գլխավոր՝ օրինաստեղծ առաքելությունը: Նրանք քաղաքացիներին խորհուրդ են տալիս մինչև պատգամավորներին դիմելը իրենց խնդրի լուծումը փնտրել այլ պետական իրավասու մարմիններում: Նախ, ասենք, որ քաղաքացին պետական այդ մարմիններում առաջացած բյուրոկրատական քաշքշուկների հետևանքով է, որ ի վերջո դիմում է պատգամավորին, իսկ վերջինս էլ հենց նման դիմում-բողոքների հիման վրա պարտավոր է հավաքել օրենսդրական կարգավորման անհրաժեշտ նյութը: Այն կարող է լավ հիմք հանդիսանալ օրենսդրական նոր նախաձեռնության համար: Այսինքն՝ օրենքը պետք է գործնականում անհրաժեշտ, հիմնավորված ու կիրառելի լինի, այլ ոչ թե գտնվի իրականությունից հեռու և վերածվի անպիտան նորմատիվ ակտի: Կամ էլ օրենք չընդունեն միայն այն պատճառով, որ նմանօրինակ օրենք են ընդունել եվրոպական երկրները կամ Հայաստանի Հանրապետությունը՝ առանց հասկանալու դրանց նշանակությունն ու հետևանքները:

ԱՀ Սահմանադրության 125 և 126-րդ հոդվածները սահմանում են պատգամավորների և խմբակցությունների կողմից Հանրապետության նախագահին և կառավարության անդամներին գրավոր ու բանավոր հարցերով ու հարցապնդումներով դիմելու իրավունքը: Ի տարբերություն պատգամավորի գրավոր հարցերի, որոնց պատասխանները Ազգային ժողովի նիստում չեն ներկայացվում, հարցապնդումների պատասխանները ներկայացվում են Ազգային ժողովի նիստում: Խմբակցության առաջարկությամբ հարցապնդման պատասխանը քննարկվում է:

Պատգամավորն իրավունք ունի նաև հարցումներով ու առաջարկներով դիմելու պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց:

Ազգային ժողովի մյուս սահմանադրական լիազորությունը, որն ուղղակի կապ ունի մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների

¹ Տե՛ս՝ <<Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին օրենք>>, ընդունվել է 2017 թվականի հունիսի 28-ին, <http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=12836>

² Տե՛ս՝ *Азаров А.Я. Система защиты прав и свобод человека. Учебное пособие.-М.: Московская школа прав человек. 2007. С.-297*

պաշտպանության հետ, համաներումն է/ամնիստիա/: Համաձայն ԱՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի 1-ին կետի 15-րդ ենթակետի՝ հանրապետության նախագահը համաներում հայտարարելու առաջարկությամբ դիմում է Ազգային ժողովին: ԼՂՀ Քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածը սահմանում է, որ հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը: Համաներման մասին ակտերը, որոնք, ի դեպ, նորմատիվ ակտեր են, ընդունվում են պետության համար կարևոր նշանակություն ունեցող պատմական-քաղաքական իրադարձությունների կապակցությամբ և տարածվում են որոշ տեսակի հանցագործությունների վրա: Արցախյան պետականության ստեղծման ավելի քան երեսուն տարիների ընթացքում ԱՀ Ազգային ժողովը համաներում է կիրառել 5 անգամ. 1997 թվականի մայիսի 5-ի <<Հաղթանակի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակի օրվա, Շուշի քաղաքի ազատագրման 5-րդ տարեդարձի առթիվ համաներում հայտարարելու մասին>> ԼՂՀ ԱԺ ԹՆ-0238-1 որոշումը¹, 1998 թվականի փետրվարի 20-ի <<Համաներում հայտարարելու մասին>> /արցախահայության ազգային ազատագրական շարժման 10-րդ տարեդարձի առթիվ/ ԼՂՀ ԱԺ ԹՆ-0292-1 որոշումը², 2006 թվականի դեկտեմբերի 8-ի <<Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի 15-րդ տարեդարձի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության նախագիծը համաժողովրդական քվեարկության դնելու կապակցությամբ համաներում հայտարարելու մասին>> ԼՂՀ ԱԺ Ն-0226-4 որոշումը³, 2011 թվականի օգոստոսի 30-ի <<Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին>> ԼՂՀ ԱԺ Ն-0135-6 որոշումը⁴, 2016 թվականի օգոստոսի 25-ի <<Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին>> ԼՂՀ ԱԺ Ն-098-6 որոշումը⁵:

Նշենք, որ իրավաբանական գրականության մեջ միատեսակ կարծիք չկա համաներման մասին: Իրավաբանների մի մասը գտնում է, որ համաներման ակտը մարդկանց թույլ է տալիս կատարել հանցագործություն ու ներվել, իսկ պատիժը ամենևին էլ դրա պարտադիր հետևանքը չէ, և անպատժելիության

¹ <http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=3522>

² <http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=3525>

³ <http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=3702>

⁴ <http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=3779>

⁵ <http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=11204>

իլյուզիա է առաջանում¹: Կամ՝ համաներման ակտը արդարության սկզբունքի խախտում է առաջացնում, դրա համար այն չպետք է տեղ ունենա ոչ քրեական դատավարությունում, ոչ էլ պետական իշխանության բարձրագույն մարմինների լիազորությունների ցանկում²: Կամ էլ համաներումը նպաստում է հանցագործությունների աճին, քանի որ համաներման ենթարկվածների մոտ բարձրանում է ռեցիդիվի մակարդակը³: Իսկ իրավաբանների մի մասն էլ կարծում է, որ համաներում պետք է հայտարարել ոչ թե պետական կամ պատմական կարևոր իրադարձությունների կապակցությամբ, այլ տարին մեկ անգամ⁴: Ամեն դեպքում դրա կիրառման պարբերականությունը, պայմաններն ու առանձնահատկությունները պետք է կարգավորվեն օրենքով, որը առայսօր չի ընդունվել: Կարևոր է նաև համաներման ենթարկված անձանց վերաառցիալականացման, աշխատանքի տեղավորման հարցը: 2019 թվականի ապրիլի 17-ին վերջապես ընդունվել է ներման մասին օրենքը, իսկ ահա համաներման մասին օրենքի ընդունումն առ օրս ԱԺ օրակարգում չկա:

Հաջորդ սահմանադրական լիազորությունը, որն առնչվում է մարդու և քաղաքացու իրավունքներին ԱԺ-ի կողմից *Մարդու իրավունքների պաշտպանի ընտրությունն է*: Համաձայն ԱՀ Սահմանադրության 158-րդ հոդվածի՝ Մարդու իրավունքների պաշտպանին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ վեց տարի ժամկետով: Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող յուրաքանչյուր ոք:

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտն Արցախի Հանրապետությունում գործում է 2008 թվականի ապրիլից: Չի կարելի ասել, թե ԱՀ ՄԻՊ-ը հանդիսանում է մարդու և քաղաքացու խախտված իրավունքների ու ազատությունների պաշտպանության հիմնաքարը, և առանց նրա հնարավոր չէ պատկերացնել մարդու իրավունքների պաշտպանության վիճակը Արցախում, բայց, այնուամենայնիվ, այն իր ուրույն տեղն ունի մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող պետական մարմինների համակարգում:

Շարունակելով նշանակումների թեման՝ նշենք, որ Ազգային ժողովը մի շարք լիազորություններ ունի դատական և իրավապահ մարմիններում: Օրինակ, Սահմանադրության 139-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանների նախագահները և դատավորները նշանակվում են Ազգային ժողովի կողմից՝

¹ Беккариа Ч., О преступлениях и наказаниях. – М., 1995. – С.243-244.

² Сабанин С.Н., Амнистия и помилование в уголовном законодательстве России // Государство и право. – 1995. – №11. – С.81.

³ См.: Амнистия: благо или зло? // Юридический вестник. – 1992. – №5. – С.12-13.

⁴ См.: Кадышева Т., Ширинский С. Кто вправе простить преступника // Российская юстиция. – 2000. – №2.

պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ: Իսկ Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամից մեկին նշանակում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Ազգային ժողովը Հանրապետության նախագահի առաջարկությամբ ընտրում է նաև Գլխավոր դատախազին՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ վեց տարի ժամկետով: Նկատենք, որ դա Ազգային ժողովին տրված լուրջ լիազորություն է կադրային քաղաքականության մշակման գործում:

Ազգային ժողովը օժտված է նաև մի հզոր լիազորությամբ՝ *սահմանափակելու մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները արտակարգ և ռազմական դրության ժամանակ*: Իհարկե, ոչ բոլոր իրավունքներն ու ազատություններն են ենթակա սահմանափակման. դրանց շրջանակը ամրագրված է Սահմանադրության 76-րդ հոդվածով: Սահմանափակման ենթակա են առավելապես քաղաքական և քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները: Նման իրավիճակներում խիստ կարևոր է ապահովել Սահմանադրության 77 և 78-րդ հոդվածների իրականացումը. համաձայն դրանց՝ արգելվում են այն հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնք կարող են օգտագործվել սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Այս սահմանափակումների օրինականության հիմնական խնդիրը կայանում է համարժեքության մեջ: Այսինքն՝ սահմանափակվող իրավունքները և ձեռնարկվող միջոցառումները պետք է իրար հավասարաթեք լինեն: Այդ սահմանափակումներից չպետք է օգտվեն պետական իշխանավորները՝ իրենց նեղ անձնական նկրտումների համար: Այսպես, երբ 2020 թվականի սկզբներին համաշխարհային տարածում/պանդեմիա/ գտավ COVID-19 կորոնավիրուսային հիվանդությունը, աշխարհի տասնյակ երկրներում արտակարգ դրություն մտցվեց, և դրա հետ կապված կառավարությունները մի շարք սահմանափակումների ենթարկեցին իրենց քաղաքացիներին/այդ սահմանափակումները գլխավորապես կապված էին ազատ տեղաշարժվելու իրավունքի և հասարակական վարքի պահպանության հետ/: Հայտնի փաստ է, որ արտակարգ դրության ժամանակ չի կարելի ընտրություններ ու հանրաքվեներ անցկացնել: Բայց քանի որ ԱՀ Սահմանադրությամբ

առանձնացված է արտակարգ դրությունը արտակարգ իրավիճակից^{1,2} ԱՀ նախագահի հրամանագրով հանրապետության ողջ տարածքում հաստատվեց արտակարգ իրավիճակ, միննույն ժամանակ նշանակվեց պարետ:³ Եվ դա այն դեպքում, երբ, համաձայն Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին օրենքի /Սահմանադրությունն ու հենց այդ օրենքն էլ նախագահը հիմք ընդունեց երկրում արտակարգ իրավիճակ հայտարարելու համար/, պարետ չի նշանակվում: Պարետը նշանակվում է միայն Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքով: Այսինքն՝ ԱՀ նախագահը երկրում արտակարգ իրավիճակ մտցնելու համար իրավական հիմք է ընդունել մի օրենք, իսկ կիրառել մեկ այլ օրենքի դրույթներ: Առկա է մեծ խզում հռչակված օրենսդրական դրույթների և գործող կանոնների միջև: 2020 թվականի մարտի 31-ին երկրում տեղի ունենալիք նախագահական ու պառլամենտական ընտրությունները ոչ միայն չհետաձգվեցին, երբ ողջ աշխարհը օգտագործում էր <<մնա տանը>> կարգախոսը՝ համաճարակից խուսափելու համար, այլև տեղի ունեցան սահմանված օրը, նաև՝ կայացավ նախագահական ընտրությունների երկրորդ փուլ: Մենք այստեղ գործ ունենք պետության ու մարդու իրավունքների բախման հետ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Արցախի Հանրապետության օրենսդիր մարմինը մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ոլորտում օժտված է բավականին լայն լիազորություններով: Խնդիրը ոչ այնքան այդ լիազորությունների քիչ կամ շատ լինելու մեջ է, որքան

¹ Տես ԱՀ Սահմանադրության 132 և 133-րդ հոդվածները

² Համաձայն Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին ԱՀ օրենքի /ընդ. 27.06.2019 թվականին/ 1-ին հոդվածի 2-րդ կետի՝ <<Արտակարգ դրությունը հայտարարվում է միայն Արցախի Հանրապետության սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում, ներառյալ՝ Արցախի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու, իշխանությունը զավթելու փորձերը, զինված խռովությունները, զանգվածային անկարգությունները, բռնի գործողություններով ուղեկցվող ազգային, ռասայական, կրոնական հակամարտությունները, ահաբեկչական ակտերը, հատուկ նշանակության օբյեկտների գրավումը կամ շրջափակումը, անօրինական զինված միավորումների ստեղծումը և գործունեությունը>>: Իսկ ըստ Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին ԼՂՀ օրենքի /ընդ. 10.03.2004 թվականին/ 1-ին հոդվածի առաջին մասի՝ արտակարգ **իրավիճակը, դա** որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի(էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության(էպիֆիտոտիա), գենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ է, որը հանգեցնում կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների, և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտումն է:

³ ԱՀ նախագահի <<Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին>> ՆՀ – 32- Ն հրամանագիրը՝ <http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=17120>

դրանք գործնականում հավուր պատշաճի կիրառելը: Ինչպես իրավացիորեն նկատել է գերմանացի հայտնի պետական գործիչ Օտտո ֆոն Բիսմարկը՝ Վատ օրենքներով ու լավ չինովնիկներով /պետական պաշտոնատար անձանցով/ երկիր կառավարել հնարավոր է, բայց վատ չինովնիկների դեպքում անգոր են նույնիսկ լավ օրենքները:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ի.գ.դ. Գ.Ս.Ղազինյանը:

ՀՏԴ 330

Տնտեսագիտություն

Թայթով ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
տ.գ.դ., ԵՊՀ պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայումս բարձր տեխնոլոգիաները ինտենսիվորեն օգտագործվում են կրթության մեջ, ինչը մասամբ պայմանավորված է նաև ուսուցման ավանդական մեթոդներով: Մեր նպատակն է ցույց տալ, որ հակադրվող սկզբունքների և մոտեցումների փոխարեն կարևոր է դասավանդել որոշ «հին», ավանդական և նոր մեթոդներ՝ արհեստական բանականության հնարավոր օգտագործման հետ միասին տնտեսության թվայնացման համատեքստում: Մենք կիրառել ենք գիտական վերացարկումների, պատմական երևույթների վերլուծության, ինչպես նաև համեմատական վերլուծության մեթոդներ: Մեր ուսումնասիրության արդյունքները համապատասխանում են դրված նպատակին և հանգեցնում են այն եզրակացության, որ արհեստական բանականությունը կարող է հաջողությամբ ինտեգրվել կրթական համակարգին և կարող է բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը՝ օգտագործելով գիտության և տեխնոլոգիաների նոր ձեռքբերումները՝ առավել արդյունավետ ավանդական մեթոդների հետ համատեղ:

Բանայի բառեր՝ ներդաշնակեցում, ուսուցման մեթոդներ, թվայնացում, արհեստական բանականություն, տնտեսագիտություն

В настоящее время в образовании широко используются высокие технологии, что отчасти связано с традиционными методами обучения. Наша цель - показать, что вместо противопоставляемых принципов и подходов можно обучать некоторым «старым», традиционным и новым методам, а также возможному использованию искусственного интеллекта в контексте цифровизации экономики. Мы использовали методы научного реферата, анализа исторических явлений, а также сравнительного анализа. Результаты нашего исследования соответствуют заявленной цели, приводят к выводу, что искусственный интеллект может быть успешно интегрирован в образовательную систему, может повысить эффективность учебного процесса, используя новые достижения науки и технологий в сочетании с более эффективными. традиционными методами.

Ключевые слова: гармонизация, методы обучения, цифровизация, искусственный интеллект, экономика.

T.MANASERYAN

SYNCHRONIZATION OF TRADITIONAL AND NEW TEACHING METHODS IN A DIGITAL ECONOMY

Currently, high technologies are being intensively used in education, which is also partly due to traditional teaching methods. Our goal is to show that instead of opposing principles and approaches, it is important to synchronize some of the "old", traditional and new teaching methods with the possible use of artificial intelligence in a digital economy. We have applied methods of scientific abstraction, analysis of historical phenomena, and comparative analysis. The results of our study correspond to the set goal and lead to the conclusion that artificial intelligence can be successfully integrated into the education system and can increase the efficiency of the educational process using new advances in science and technology in combination with the most effective traditional methods.

Key words: economics synchronization, teaching methods, digitalization, artificial intelligence,

Ներածություն

Ժամանակակից աշխարհում ամեն ինչ զարգանում է: Ամեն տարի ավելի լայնորեն ներդրվում են նոր տեխնոլոգիաներ, իսկ արհեստական բանականությանը փոխարինում է մարդու ֆիզիկական և մտավոր կարողությունները իրացնելու ավանդական մեթոդներին: Այն հաջողությամբ ինտեգրվում է կրթական համակարգին և հետապնդում է ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակ՝ օգտագործելով գիտության և տեխնոլոգիայի նոր ձեռքբերումները: Արդյունքում, արհեստական բանականությունը հեղափոխություն է կատարում կրթական համակարգում:

Մարդկային արհեստական բանականության AlphaGo համակարգը հաղթեց աշխարհի լավագույն խաղացողին Go՝ հին ասիական ռազմավարական խաղում, որը շատ ավելի բարդ է, քան շախմատը: Ծրագրավորողներն իրականում երբեք

համակարգին չեն սովորեցրել, թե ինչպես խաղալ: Փոխարենը նրանք ստեղծեցին ուղեղի նման նյարդային ցանց, որը սովորեց խաղալ միլիոնավոր անգամներ դրանով զբաղվելով: Արհեստական բանականությունը նույնպես օգտագործվում է կրթական համակարգերի պրակտիկայում և պլատֆորմներում՝ կատարելագործելու և հեղափոխելու համար:

Գրականության ակնարկ

Բազմաթիվ գիտնականների աշխատանքներ են նվիրված ուսուցման ավանդական և նոր մեթոդների կիրառմանը: Մասնավորապես, այս խնդիրներին են անդրադարձել Ա. Աուզանը, Ն. Պախոմովան, Կ. Ռիխտերը [3], [10, էջ 28-42], [11, էջ 61-82]: Ավանդական և նոր դասավանդման մեթոդների խնդիրները դիտարկվում են Ս. Նելեմանի, Օ. Պոդոլսկու, Աբանկինի, Ա. Բելիկովի և այլոց աշխատություններում [13, էջ 38]: Ս. Բլինովի, Ն. Բոստրոմի, Ա. Գապոնենկոյի, Ռ. Գոմանտի, Դ. Եվտյամովայի, Գ. Կորովինի, Ջ. Ռուուսի, Ս. Պայկի, Լ. Ֆերնստրեմի և Օ. Վիլյամսոնի ուսումնասիրություններում խորապես վերլուծվում է տնտեսության և կրթության մրցակցային կապը [6, էջ 100-112], [7], [8], [9, էջ 37-65]: Շատ ավելի աշխատանքներ են նվիրված արհեստական բանականությունը դերին ժամանակակից ուսուցման մեթոդների կատարելագործման գործում [1, էջ 22-27], [4, էջ. 133-143], [14, էջ. 88-91]: Միևնույն ժամանակ, բաց է մնում տնտեսության թվայնացման համատեքստում ավանդական և նոր դասավանդման հնարավոր մեթոդների հնարավոր ներդաշնակեցման թեման, ինչը պահանջում է ավելի համակողմանի ուսումնասիրել նման համադրության նախադրյալները: Վերջապես, այս խնդրի որոշ բաղադրիչներ կարելի է գտնել Ա. Ալյանի, Մ. Էնսենսենի, Ա. Դեխի, Վ. Մեքլինգի, Օ. Ուիլյամսոնի, ինչպես նաև տնտեսագիտության Նոբելյան մրցանակակիրներ Մ. Ֆրիդմանի, Կ. Արրոուի և ուրիշների աշխատություններում [2, 280– 317], [5, էջ. 118-191]:

Վերլուծություն

Ներկայումս ստեղծվել են վիրտուալ աշակցողներ՝ ֆասիլիտատորներ, որոնք արդեն օգտագործվում են ուսումնական միջավայրում, կրթական համակարգում: Զույգի հեռավար ուսուցման պլատֆորմները սովորաբար հիմնված են ասինխրոն դասընթացների վրա, որոնք դասավանդում են դասախոսները, բայց ոչ իրական ժամանակում:

Մեր ուսումնասիրության նպատակն է հիմնավորել այն անհրաժեշտությունը, որ հակադրվող սկզբունքների և մոտեցումների փոխարեն կարևոր է դասավանդել որոշ «հին», ավանդական և նոր մեթոդներ՝ տնտեսության թվայնացման համատեքստում արհեստական բանականության հնարավոր օգտագործման հետ: Մենք կիրառել ենք գիտական վերացարկումների, պատմական երևույթների վերլուծության և համեմատական վերլուծության մեթոդներ: Մեր ուսումնասիրության արդյունքները համապատասխանում են դրված նպատակին և հանգեցնում են այն եզրակացության, որ արհեստական բանականությունը կարող է հաջողությամբ ինտեգրվել կրթական համակարգին և կարող է բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը՝

օգտագործելով գիտության և տեխնոլոգիայի նոր առաջընթացներ՝ առավել արդյունավետ ավանդական մեթոդների հետ համատեղ:

Չնայած քիչ ուսուցիչներ են ցանկանում, որ վիրտուալ մանկավարժները փոխարինեն մարդկային մանկավարժներին, արհեստական բանականությունն օգտագործվում է թվային ուղեցույցներ և վիրտուալ օգնականներ ստեղծելու համար՝ կրթական միջավայրում դրանք օգտագործելու համար:

Ինչպես հայտնի է, առաջացած խնդիրների ժամանակին բացահայտումն ու լուծումը մեծ նշանակություն ունեն կրթական համակարգում: Շատ ուսուցիչներ և դասախոսներ ունեն հարյուրավոր ուսանողներ, ովքեր սովորում են տարբեր տեմպերով և կատարողական մակարդակներով, ուստի դժվար է որոշել և բավարարել նրանց հատուկ կրթական կարիքները: Արհեստական բանականության լուծումները լրացնում են դասարանների ուսուցումը, քանի որ դրանք չեն ընդունում բոլորի համար ավանդական մոտեցումը: Օրինակ՝ արհեստական բանականության ալգորիթմները կարող են վերլուծել տվյալները՝ օրինաչափություններ հաստատելու, պատկերացում կազմելու և ուսման բացերը բացահայտելու համար: Մի քանի կրթական հաստատություններ և ծրագրեր օգտագործում են արհեստական բանականության լուծումներ՝ ուսուցիչների փոխգործակցության տարիների և ուսանողների գործունեության տվյալների վերլուծության համար՝ միտումները բացահայտելու և խնդիրները կանխելու համար:

AI (արհեստական բանականության) լուծումները և համակարգերը անհատականացված փորձ և լրացուցիչ աջակցություն են տրամադրում ուսանողներին, ուսուցիչներին և ադմինիստրատորներին:

Խոսքի ճանաչման համակարգերի զարգացման հետ արհեստական բանականությունը պետք է ավելի լավ հասկանա վերապատրաստման համար նախատեսված տեքստերի իմաստը: Ներկայիս թարգմանական համակարգերը (Google Translate և այլն) արդեն մոտեցել են խոսքի խորքային իմաստը լուսաբանելուն՝ անկախ հատուկ լեզվից, որը պետք է կապված լինի իրական աշխարհի օբյեկտների և օբեկտների հետ:

Ընդհանրապես, deep learning-ը միայն բառերի մշակման խնդիրներին մոտենալն է, և, անկասկած, կարող ենք տեղափոխել և կիրառել այն տեխնոլոգիաները, որոնք մշակվել են մարդու կողմից՝ խիստ կանոնների համաձայն: Բնականաբար, նեյրոնային ցանցերը չեն կարող մտածել, բայց եթե նույնիսկ նրանք սովորեն իմաստներ ընկալել, դա արդեն մեծ առաջընթաց կլինի: Դա խոսքի վերլուծությունն է, այսինքն, քանի որ դա բացառապես դժվար գործ չէ, իրոք, դժվար է դիտարկել լեզվի մանրակրկիտ ըմբռնումը և խոսակցական կապը իրական աշխարհի հետ, եթե տեղ է գտնում տվյալ բառից մեկուսացումը: Կան ընկալման որոշ նախադեպեր, որոնք միշտ չէ, որ հստակ բխում են տեքստի բուն իմաստից: Ոչ վաղ անցյալում ոլորտի առաջատար փորձագետները պատրաստել և առանձնացրել են նախադեպեր և փնտրել ներկայացված բառի սովորական հարցերի պատասխաններ, բայց ամբողջական ընկալման շրջանակներում դա դեռ բավարար չէ:

Ի դեպ, արհեստական բանականության ծագման հետագա դերի հետ կապված, մեզ ամենից շատ անհանգստացնում են ոչ թե զուտ մասնագիտական, այլ ավելի շուտ բարոյական և էթիկական խնդիրները: Կարևոր է, թե ում հետ եք շփվելու և զրուցելու. բավականին իմաստավոր «հաշվողական մեքենայի» հետ,

թե՛ ավելին: Դրանից հետո արհեստական բանականության զարգացման համար տրված մեկնարկի արդյունքները հնարավորինս հաշվի կառնվեն հետևյալ մեթոդներով. առաջինը արհեստական բանականությունն է, որը բարելավում է անհատի ներուժը, թույլ է տալիս ավելի շատ տեղեկատվություն ստանալ և ավելի ճիշտ եզրակացություններ գտնել, երկրորդը անկախ խելացի համակարգերն են, օրինակ՝ մեքենաները, ինքնավար գործարանները, առանձին բոտերը կամ բաշխված համակարգչային համակարգերը: Ինչպես ցանկացած տրանսֆորմացիոն զարգացում, արհեստական բանականությունը թաքնված սպառնալիք է ներկայացնում և դժվար խնդիրներ է առաջադրում պետական մարմինների ու սոցիալական քաղաքական գործիչների համար՝ կապված տնտեսական և մտավոր անվտանգության հետ:

Չնայած կրթության զարգացող մեթոդներին և այս համակարգում արհեստական ինտելեկտի ներդրմանը, կան նաև ժամանակի փորձությունն անցած արժեքներ և սկզբունքներ, որոնք չպետք է անտեսել: Ավելին, ուսուցման հին և նոր մեթոդների համադրությունը կարող է դրականորեն ազդել կրթական համակարգում որակի մակարդակի վրա: Չինաստանը, Հնդկաստանը, Հունաստանը, Հայաստանը, Իրանը և հին քաղաքակրթությունների այլ երկրներ հին ժամանակներից ուսուցման և կրթության հարուստ ավանդույթներ ունեն: Հայտնի փաստ է, որ Պորտուգալիայի, Արևելյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի հեռավոր երկրներից մարդիկ ավելի բարձր մակարդակի և որակյալ կրթություն ստանալու համար նախընտրում էին նման երկրները:

Գուրուկուլ համակարգը դասավանդման այնպիսի խորքային մեթոդներից է, որը տարածված էր Հին Հնդկաստանում: Գուրուկուլ համակարգում կար մի գերագույն ուսուցիչ, ով սովորեցնում էր իր աշակերտներին՝ անկախ նրանց կաստայից կամ ֆինանսական վիճակից: Այս գուրուկուլները սովորաբար տեղադրվում էին անտառում, որպեսզի ուսանողները կարողանան գործնականորեն հասկանալ, թե ինչպես է մոլորակի վրա ամեն ինչ այլ կերպ գործում, օրինակ՝ ձկնորսությունը, որսը և պատերազմը նրանց համար, ովքեր ցանկանում են միանալ բանակին, պահպանել բնական ռեսուրսները և այլն. այնպիսի հնագույն գուրուկուլայի մեթոդներ, որոնք պետք է կյանքի կոչվեն այսպես կոչված «ժամանակակից հնդկական կրթական համակարգի» դարաշրջանում:

Էպիկուրուսը, Շիրակացին, Գոշը և անտիկ շրջանի այլ մտածողները նախընտրում էին ուսուցման մեթոդը բաց երկնքի տակ: Ի՞նչը կարող է ավելի լավ լինել, քան բնական տարրերն ու գիտությունները ամենաբնական միջավայրում ուսումնասիրելը: Հին կրթական համակարգը խրախուսում էր ուսանողներին միաժամանակ դիտել և ծանոթանալ շրջակա միջավայրին: Ուսուցման այս մեթոդը նաև ապահովում էր լավ օդ և իդեալական մթնոլորտ՝ ցանկացած սովորական օրվա ընթացքում մարզվելու համար: Այսօր դասերը սահմանափակված են դասարանի չորս պատերով, ուստի դպրոցները պետք է նախաձեռնեն շաբաթվա ընթացքում առնվազն 3 դաս դպրոցի պարտեզում կամ խաղահրապարակում: Անգամ գիտականորեն ապացուցված է, որ բաց ուսումը կարող է խթանել ստեղծագործական և նորարարական մտածողությունը: Այն նաև օգնում է ավելի լավ հասկանալ տեսական և գործնական հասկացությունները:

Հին աշխարհում ամենից հաճախ ներկայացվում էր ոչ թե մաքուր տեսություն, այլ կյանքի հետ կապված գործնական գիտելիքներ: Հին Հնդկաստանում ուսանողը նյութապաշտ աշխարհի շեղումներից և դատապարտելի վայրերից պաշտպանվելու համար, գեղեցիկ բնության մեջ նստում էր իր ուսուցչի կողքին և որոշ խորհրդածությունների հետ միասին խոսում էր կյանքի խնդիրների մասին: Այն ժամանակ գրքի իմացությունը բոլորի համար չէր, ուսանողներին խնդրում էին ավելի հաճախ դուրս գալ իրական կյանք և ինչ-որ բան սովորել՝ խոսելով կյանքի բոլոր խավերի մարդկանց հետ: Ինչպես ուսուցիչների, այնպես էլ փորձառու մարդկանց հետ փոխհարաբերությունները խիստ անհրաժեշտ են: Այսօր, երբ տեխնոլոգիան աստիճանաբար մաշում է մեր հին կրթական հավատալիքները և արժեքները, բավականին կարևոր է և պահանջարկված, որ ուսուցչի և աշակերտի միջև հաստատվի պատշաճ անձնական փոխհարաբերություն:

Ինքնասպասարկումը դասավանդման ամենատարածված մեթոդներից էր: Չինաստանում, Հունաստանում և Հայաստանում հնագույն կրթական համակարգը նաև ապահովում էր, որ ուսանողը ֆիզիկական առողջության հետ մեկտեղ կարողանալ նաև հոգ տանել իրեն պատերազմական կամ բնական աղետների արտակարգ իրավիճակներում: Այս ինքնօգնության տեսակը կարող էր ապահովել, որ մարդը կարողանար գոյատևել, եթե մնար անտառում մեջտեղում: Դասավանդման այս տեսակը ներառում է գիտելիքներ այն մասին, թե ինչպես կարելի է պատսպարվել ծառերի տերևներից, ինչպես պատրաստել պատշաճ սնունդ՝ հում մսից կամ բույսերից, ինչպես չոր փայտ հավաքել՝ կրակ վառելու համար և այլն:

Հին աշխարհում ակտիվ և կանոնավոր քննարկումները դասավանդման ամենաարդյունավետ մեթոդներից էին: Բազմաթիվ հնավայրեր, որոնց շրջակայքում անցկացվում էին պարապմունքներ, խրախուսում էին ակտիվ քննարկումները կամ բանավեճերը ուսանողների, ինչպես նաև գիտնականների շրջանում: Բանավեճի գաղափարը դեռ ուժի մեջ է, բայց միայն շատ երկրների խորհրդարաններում: Ուսումնական հաստատություններում բանավեճը սովորաբար վերածվել է մրցույթի, նույնիսկ դրան ակտիվ մասնակցություն չկա: Ընթացիկ իրադարձություններին վերաբերող տեսական թեմաների շուրջ գիտնականների հետ պարբերաբար կազմակերպվող ակտիվ քննարկումները բարձրացնում են մասնակիցների տեղեկացվածության աստիճանը և առաջացնում ցանկություն լսարանի առջև ներկայացնելու ցանկացած անձի տեսակետը:

Ուսուցչի և աշակերտի միջև հարգանքը և կարգապահությունը ևս դասավանդման շատ կարևոր մասն է, որն ունի խորը պատմական արմատներ և արդիական է մնում արդի կրթական համակարգում: Ինչպես հայտնի է, շատ դեպքերում ուսանողների անհամատեղելիությունը համարյա ամբողջությամբ համարվում է հասուն տարիքի անհարգալից վերաբերմունքի արդյունք, որը առկա է գրեթե բոլոր ուսումնական հաստատություններում: Քաղաքական անկարգությունները, որոնք շրջապատում են մեր մտածողությունը, շրջապատում են մեր բոլոր համալսարանները՝ սկսած երկրից, ներառյալ ընտանիքը, գյուղը և տեղական վարչակազմը, ներխուժեցին կրթական համակարգ և սերմանեցին բազմաթիվ խորթ արժեքներ: Կրթական համակարգում ավելի շատ սկսել են ուշադրություն դարձնել ոչ թե

պարտականություններին, այլ իրավունքներին և դրանց տեղի-անտեղի շահարկմանը:

Այնուամենայնիվ, նախկինում ուսումնասիրության մեթոդը թեև բավականին անգույն էր, բայց լավ իմաստներ էր հաղորդում ուսանողներին: Մյուս կողմից, ուսանողները պատվում էին ուսուցիչներին և հնազանդվում իրենց իսկ ընտրած գուրուներին: Սեփական ուսուցչին հնազանդվելը այժմ հիմնականում բացակայում է: Ինչ-որ բան այն չէ, ինչն էլ պայմանավորված է նրանով, որ առանց լավ ուսուցչի դժվար է սեփական երկրում կայանալ որպես հարգված մարդ և հաջողակ մասնագետ:

Մեր համոզմամբ, կան որոշակի հմտություններ և մեթոդներ, որոնք այժմ պետք է վերադարձվեն մեր կրթական համակարգին: Դրանք բնավ չպետք է դիտարկվեն որպես հին արժեքներ և հավատալիքներ, որոնք պետք է ինքնանպատակ պահպանել: Պետք է հաշվի առնել այն փաստը, որ այսօրվա և ապագա սերունդները գրեթե ամեն ինչի կարիք ունեն՝ դասեր քաղելու այն մասին, թե ինչպես են դրվել իրենց պետության հիմքերը կրթության, կարգապահության և ակնածանքի կայուն արժեքների վրա:

Բարձր տեխնոլոգիաները կտրուկ փոխել են կրթական աշխարհը այն միջավայրից, ինչպիսին այն հայտնի է ավագ սերնդին: Այնուամենայնիվ, չնայած դպրոցներին ու բուհերին նոր ռեսուրսներ, համագործակցային ուսուցման գործիքներ և բարձր ճկունության տրամադրելուն, որոշ մանկավարժներ դեռ կասկածի տակ են առնում այն առավելությունները, որոնք տեխնոլոգիան կարող է բերել կրթությանը:

Տեխնոլոգիան, անկասկած, չի կարող փոխարինել ուսուցիչներին, և չնայած ուսանողների մեծ մասն իր ժամանակն անցկացնում է էկրանին հայացքը սոսնձված, վիրտուալ ուսուցումը երբեք չի փոխարինի կապը ուսուցչի և ուսանողի միջև: Ավարտելուց տարիներ անց նախկին ուսանողներից ոչ մեկը երբևէ սրտանց նամակ չի կարող ուղարկել համակարգչին՝ շնորհակալություն հայտնելու նրան, որ ամեն ինչ արել է, որպեսզի նրանց տա այն, ինչին նրանք հասել են այսօր: Բայց երբ բանը հասնում է հին և ժամանակակից կրթության մասին բանավեճին, պետք է հավանաբար մտորել այն մասին, թե արդյոք բախումն իսկապես անհրաժեշտ է:

Իրականությունն այն է, որ կրթական տեխնոլոգիաների զարգացումը կապված չէ ուսուցիչների փոխարինման կամ նույնիսկ դասավանդման ավանդական մեթոդների հետ: Ընդհակառակը, ուսուցման շատ ժամանակակից մեթոդներ պարզապես հին մեթոդների էվոլյուցիաներ են:

Ովքեր են ուսուցիչները և ում են նրանք կրթում - ուսուցանում, մնում է անփոփոխ:

Այն, ինչ ձևավորում են ուսուցիչները և այն, ինչի նրանք ձգտում են, չի փոխվել:

Եզրակացություններ

Պետության և հասարակության կարևոր հիմնախնդիրները, որոնք հնարավոր է լուծել համանման համակարգերի օժանդակությամբ, ընդհանուր առմամբ, հանգում են հետևյալին. տվյալների հավաքագրում տարբեր աղբյուրներից ֆիքսված սխեմայի համաձայն, դրանց կուտակում, ձեռք բերված

տվյալների հետագա վերամշակում և փորձարկում, ինչպես նաև առաջարկների ներկայացում հասարակությանը: Դրա արդյունքում, օրինակ, Միացյալ Նահանգներում, մտքի արհեստական ծագման տեխնոլոգիաների ձևավորման նախաձեռնությունները հասցվեցին քաղաքային մակարդակի:

Օրինակ՝ ԱՄՆ – ում ստեղծվել է NSTC (Գիտության և տեխնոլոգիայի ազգային մեքենայի ուսուցման և արհեստական հետախուզության ազգային ենթակոմիտե, գիտական և տեխնոլոգիական խորհրդի ենթակոմիտե) պետական հանձնաժողով, որի խնդիրն է նպաստել արհեստական բանականության և մեքենայական ուսուցման օգտագործման ընդլայնմանը՝ այն բարելավելու համար: Նկատողություն է արվել քաղաքային համակարգերի և իմաստուն բնակավայրերի կառուցման, բնակչության հոգեբանական և ֆիզիոլոգիական բարեկեցության աջակցության համակարգերի, հասարակական բարեկեցության, քրեական արդարադատության, շրջակա միջավայրի և գրեթե բոլոր մյուսների պաշտպանության համար: Նման նախաձեռնություններ նկատվում են նաև այլ երկրներում, հիմնականում՝ Եվրոպայում: Ինչպես ցույց է տալիս այլ պետությունների պրակտիկան, նմանատիպ նախաձեռնությունների արդյունավետ ձևավորումը միանգամայն հնարավոր է միայն պետական մարմինների, փորձագիտական հասարակության և մարդկանց օգնությամբ՝ եզրակացնելով արհեստական ծագման պատճառների տեխնոլոգիաների և դրանց օգտագործման բնագավառների հավանականությունների օգտագործման խնդիրները:

Ամբողջ աշխարհի գիտնականներն ու ստեղծագործողներն միավորում են ջանքերը սոցիալական կազմակերպություններում և գիտական հաստատություններում՝ ընդլայնելու մեր հորիզոնները: Եվ իրականում կա վստահություն, որ այս փուլը հնարավորություն ունի իրականություն դարձնելու իրապես շրջադարձային պահը նմանատիպ տեխնոլոգիաների ձևավորման համար:

Այսպիսով, հակադրելով սկզբունքներն ու մոտեցումները, կարևոր է ներդաշնակեցնել որոշ «հին», ավանդական և նոր մեթոդներ տնտեսության թվայնացման համատեքստում արհեստական բանականության հնարավոր օգտագործման հետ:

Գրականություն

1. Анищенко Н. Н., Обеспечение качества непрерывного профессионального образования // Education Quality assurance. 2019. № 3. С. 22–27
2. Алчян А. А., Демсец Г. Производство, стоимость информации и экономическая организация. / В кн.: Слущкий А. Г. (ред.). Вехи экономической мысли. Т. 5. Теория отраслевых рынков. – СПб.: Экономическая школа, 2003, с. 280-317.
3. Аузан А., Борьба системы с одаренностью. Почему в процессе образования российские учащиеся деградируют// <https://www.rusfond.ru/issues/683> (дата обращения: 29.09.2019)

4. Buda A. (2013). Social groups in the information society, In: Angyalosi G., Münnich Á., Pusztai G. (ed.) Interdisciplinary Research in Humanities. Nitra: Constantine the Philosopher University in Nitra, Faculty of Central European Studies, pp. 133-143
5. Дженсен М.К., Меклинг У.Х., Теория фирмы: поведение менеджеров, агентские издержки и структура собственности // Вестник С.- Петербургского ун-та. Сер. Менеджмент (4), 2004, с. 118-191.
6. Блинов С.С., Интеллектуальный капитал: его идентификация и роль в экономике знаний // Корпоративные финансы, Пахомова Н. В., Рихтер К. К. Современный университет и вызовы инноваций // Университетское управление: практика и анализ. 2013. № 1(83). С. 28–42
7. Рихтер К. К., Пахомова Н. В. Университет как драйвер инновационного развития // Вестник Санкт-Петербургского университета. Экономика. 2012. Вып. 4. С. 61–82
8. Уильямсон О.И., Экономические институты капитализма. – СПб.: Лениздат, 1996
9. Nellemann S., Podolskiy O., Levin V. Russian Federation Aging Project. State of adult education in Russia World Bank Group September 12, 2015. 38 p.;
10. Simonics I., 2010, №4(16), с. 100-112
11. Бостром Н., Искусственный интеллект. Этапы. Угрозы. Стратегии. М.: Манн, Иванов и Фербер. 2016. 280 с.
12. Гапоненко А.Л., Управление знаниями. Как превратить знания в капитал. – М.: Эксмо, 2008. – 400 с.
13. Грант Р.М., К знаниевой теории фирмы. / Управление знаниями: Хрестоматия. – СПб.: Изд-во «Высшая школа менеджмента», 2009, с. 37- 65
14. “Digital competency in higher education”, In: M. E. Auer (Ed.): International Conference on Interactive Collaborative Learning, Verlag Carinthia, Kazan, 2013, pp. 88-91:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.թ. Շ.Շ. Ասրյանը:

ՀՏԴ332.2(479.25)

Տնտեսագիտություն

Հովհաննես ՌԻՌՈՒՄՅԱՆ

Տեխն.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ ԳՄ, 091323458

Անդրանիկ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Հայ տնտեսագիտական մտքի համառոտ ակնարկի ֆոնի վրա ներկայացվում է գյուղատնտեսության առաջնահերթությունը տնտեսության զարգացման համատեքստում, ինչպես նաև նրա երկու առաջատար ճյուղերի զարգացման հեռանկարը նոր տնտեսվարման պայմաններում: Անասնապահական մթերքների արտադրության ծավալների բարձրացումն ու դրանց ինքնարժեքի իջեցումը դիտարկելով ՀՀ սոցիալ-տնտեսական առաջնահերթ հիմնախնդիրների համատեքստում՝ կերարտադրության առաջավոր տեխնոլոգիաների համադրումներով հիմնավորվում է կերերի բրիկետավորման ներդրման կարևորությունը Հայաստանում: Այն կապվում է պետական աջակցության, խոշոր ֆերմերային տնտեսությունների ձևավորման և հատուկ մասնագիտացված արտադրամասերի ստեղծման հեռանկարի հետ:

Բանալի բառեր՝ վաշխառուական կապիտալ, վարկավորում, մթերատվություն, կոպիտ կերեր, լիառացիոն կերեր, բրիկետավորում, բրիկետավորման մամլիչ, օղակաձև մատրիցա, փոխադրիչ-ջարդիչ, շփման գործակիցներ

**О.УРУМЯН, А.МНАЦАКАНЯН
СЕЛЬСКОЕ ХОЗЯЙСТВО РА КАК ВЕДУЩЕЕ
НАПРАВЛЕНИЕ ЭКОНОМИКИ**

Анализируя краткий обзор экономической мысли Армении, представлен приоритет сельского хозяйства в контексте экономического развития, а также перспективы развития двух его ведущих отраслей в условиях нового экономического управления. Учитывая увеличение объемов производства продукции животноводства и снижение ее стоимости в контексте приоритетных социально-экономических проблем Республики Армения, возможность внедрения кормовых брикетов в Армении обоснована сочетанием передовых технологий. Это связано с поддержкой государства, развитием крупных фермерских хозяйств, созданием специальных специализированных мастерских.

Ключевые слова: заемный капитал, кредитование, производство, грубые корма, полнорационные корма, брикетирование, брикетировочный пресс, кольцевая матрица, конвейер-дробилка, коэффициенты трения.

**H.URUMYAN, A.MNASTAKANYAN
THE AGRICULTURAL SECTOR OF RA AS THE
DOMINANT FORCE OF THE ECONOMY**

Analysing the brief overview of the Armenian economic thought, the priority of agriculture in the context of economic development is presented, as well as the perspective of the development of its two leading branches in the conditions of new economic management. Considering the increase of the production volumes of livestock products and the decrease of their cost in the context of the priority socio-economic problems of the Republic of Armenia, the possibility of introducing fodder briquettes in Armenia is substantiated by the combination of advanced technologies. It is connected with the support of the state, the development of large farms, the creation of special specialized workshops.

Key words: Borrowing capital, lending, production, coarse feeds, full ration feeds, briquetting, briquetting press, ring matrix, conveyor-crusher, friction coefficients.

Վերջին տարիներին գյուղատնտեսությունը ՀՀ կառավարությունը դիտարկում է երկրի զարգացման առաջնահերթությունների համատեքստում: Հիմնախնդիրը պարզաբանելու համար ընդհանուր գծերով ներկայացնենք գյուղատնտեսության զարգացման ընթացքն ու դրան համապատասխան տնտեսագիտական մտքի ձևավորումը հայ իրականության մեջ:

Պատմականորեն Հայաստանում գյուղատնտեսական արտադրության հույժ կարևորությունը ընդգծված է դեռևս հայ մատենագիտական աղբյուրներում, առավելապես Փավստոս Բուզանդի և Վարդան Արևելցու

մոտ: Սակայն այդ գաղափարը գիտական հիմքերի վրա է դրվում 18-րդ դարում Ֆրանսիայում ձևավորվող, Ֆ.Քենեի նախաձեռնությամբ ստեղծված ֆիզիոկրատների հայացքներում: Տնտեսագիտական այս ուսմունքի առանցքում հավելյալ արժեքի հիմնախնդիրն էր: Նրանք երկրի հարստության հիմնական աղբյուրը համարում էին բնությունը, որի շնորհիվ է միայն ստեղծվում հավելյալ արդյունքը: Հավելյալ արժեքը դիտվում էր բնության պարգև, իսկ գյուղատնտեսությունը՝ միակ ճյուղը, որտեղ ստեղծվում է զուտ արդյունքը: Ֆիզիոկրատները գյուղատնտեսությամբ զբաղվածներին անվանում էին *արտադրողական դասակարգ*, արդյունաբերությունը բնորոշելով որպես անպտուղ ոլորտ, որը չի ստեղծում «զուտ արդյունք», իսկ դրանում զբաղվածներին՝ անպտուղ դասակարգ, քանի որ, ըստ նրանց, արդյունաբերության մեջ նոր հարստություն չի ստեղծվում: Ֆիզիոկրատները համարում էին, որ հավելյալ արժեքը իրի, սպառողական արժեքների /ոչ թե արժեքի/ աճն է: Նրանց է պատկանում հասարակական սեփականության, հավելյալ արժեքի ծագման հարցը շրջանառության ոլորտից գյուղատնտեսական /արտադրական/ ոլորտ փոխադրելու ծառայությունը: Ֆիզիոկրատները կապիտալը քննում էին արտադրության գործընթացում ընդունած ձևում: Ուսմունք ստեղծելով նախնական և ոչ ամենամյա կանխավճարների մասին՝ նրանք դրեցին հիմնական և շրջանառու միջոցների գիտական վերլուծության հիմքերը: Ֆիզիոկրատները տնտեսագիտության պատմության մեջ առաջինն էին, որ քննության ենթարկեցին հասարակության ամբողջական արդյունքի վերարտադրության ու բաշխման օրենքները:

Ագրարային խնդիրն ու հարաբերություններին հայ տնտեսագետների մոտ բուռն հետաքրքրություն է առաջանում 19-րդ դարի երկրորդ կեսին. մասնավորապես, Գրիգոր Արծրունին գտնում էր, որ ագրարային հարցը ամենանշանավոր խնդիրն է, երկրի տնտեսական ապագայի համար: Նա խստորեն քննադատում էր սլավոնաֆիլների այն տեսակետը, թե համայնական հողատիրությունը հատուկ է միայն սլավոնական ցեղերին: Երբ իր դարն ապրած բնատնտեսությունը իր տեղը զիջում էր ապրանքային տնտեսությանը, գյուղական համայնքը քայքայվում էր, իսկ հողատիրության համայնքային ձևը աստիճանաբար փոխարինվում էր մասնավոր հողատիրության ձևով: Արծրունու համոզմամբ, բոլոր այն երկրներում, որտեղ տեղի էր ունենում այդ զարգացումը, համայնքի հողի սեփականության ձևը կորչում էր, և նրա տեղը հետզհետե զբաղեցնում էր գյուղական մասնավոր հողատիրության ձևը: Նրա կարծիքով, հողատիրության համայնական ձևը դառնում էր գյուղատնտեսության մեջ արտադրողական ուժերի զարգացման խոչընդոտ: Ըստ Արծրունու, հողատիրության այն ձևը, որն հիմնված չէ անձնական շահագրգռվածության վրա, չի կարող նպաստել գյուղատնտեսության կատարելագործմանը: Նա հողի համայնական

սեփականությունը համարում էր միջնադարյան հաստատություն, որը եվրոպական երկրներում փոխարինվել է մասնավոր սեփականությամբ:

Մյուս կողմից, մանր հողակտորների սեփականատերերի գերակշռող մասը, տնտեսապես անգոր լինելով վարելու տնտեսությունը, ստիպված էր լինում գրավ դնել դրանք. արդյունքում հողակտորներն անցնում էին փողատեր մարդկանց՝ վաշխառուներին: Այսինքն՝ տեղի էր ունենում հողատերերի շերտավորում. գյուղարտադրողների չնչին մասն էր կարողանում հաջողությամբ վարել իր տնտեսությունը, իսկ հիմնական զանգվածը՝ ունեզրկվելով մատնվում էր աղքատության: Եվ այն, որ վաշխառուական կապիտալի ներկայացուցիչները դառնում էին հողի սեփականատեր, Արծրունին անհամատեղելի էր համարում տնտեսական առաջադիմության հետ, քանի որ հանգեցնում էր տարագնացության:

Վաշխառուական կապիտալի գործունեության ուսումնասիրությանը Կ.Մարքսը մի ամբողջ գլուխ է նվիրել «Կապիտալ»-ում: Վաշխառուական կապիտալը կլանում է գյուղացու, մանր արտադրողների ոչ միայն եկամուտը, այլ նաև ծախսերի մի մասը, որը բացառում է տնտեսական առաջընթացի որևէ հնարավորություն: Որպես վաշխառության հակադեցություն՝ Մարքսը համարում է վարկային գործի զարգացումը: Այդուհանդերձ, Արծրունին նշում է, որ ստեղծված գյուղական վարկի հաստատությունները չեն նպաստում գյուղատնտեսության մեջ արտադրողական ուժերի զարգացմանը՝ բացահայտելով հողային բանկերի տրամադրած վարկերի անարտադրողական բնույթը:

Ագրարային հարաբերություններին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ է կատարել Ավ.Արասխանյանը, որն ի տարբերություն այլ տնտեսագետների, հայ գյուղացիների տարագնացությունը դիտում էր ոչ թե որպես ազգային առանձնահատկության դրսևորում, այլ տնտեսական հանգամանքների հետևանք: Ուշագրավ է, որ նա գաղթականությունը տարբերում էր տարագնացությունից, որի հիմնական պատճառը ագրարային գերբնակչությունն է: Ինչպես երևում է, ագրարային գերբնակչության նրա վերլուծությունը կրում է Մալթուսի ազգաբնակչության օրենքի ազդեցությունը:

Ի հակադրություն լիբերալ տնտեսագետների, Գր.Վարդանյանը վիճակագրական հարուստ տվյալների հիման վրա ցույց է տալիս վարկերը և հողերը ետ գնելու պայմանով գյուղացիներին բաշխելու բացասական, քայքայիչ հետևանքները:

Հիշատակված տնտեսագետները անտեսել են տնտեսական հարաբերությունների ձևավորման ընթացքն առանց համապատասխան իրավական հարաբերությունների ստեղծման:

Դարեր շարունակ գյուղատնտեսությունը եղել է հայ ժողովրդի գլխավոր զբաղմունքը, որով նպաստել է արհեստների ու առևտրի զարգացմանը:

Հայության ուժերը ջլատում է գաղթականությունը, որը հանգրվանում էր հիմնականում Ռուսաստանում: Բնակչության նմանօրինակ տարրալուծումը խորապես անհանգստացնում էր մտավորականությանը, որը հիմնախնդրի միակ լուծումը կապում էր գյուղատնտեսության զարգացման հետ: Այդ թեմայով հայ տնտեսագիտական միտքն աշխուժացավ Մ.Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքի հրատարակվելուց հետո:

Մ.Սդիմարաճյանը զարգացնում է այն դրույթը, որ բոլոր ժամանակներում գյուղատնտեսությունը եղել է երկրի զարգացման և ժողովրդի բարեկեցության գլխավոր աղբյուրը: Նա բերում է հռոմեացիների օրինակը, որոնք քանի դեռ իրենց երկրի բարեբեր լինելու գործին էին լծված, ապրում էին բարեկեցիկ կյանքով, բայց երբ արորը զենքով փոխարինեցին, բարքերն այլանդակվեցին, մարդիկ ընկան մոլորությունների մեջ, և այդ պատկառելի ազգը ցրվեց ու մատնվեց անհայտության: Նույնը տեղի ունեցավ իսպանացիների հետ, որոնք, իրենց երկրի մշակությունը թողած, գայթակղվեցին Ամերիկայի ոսկով ու արծաթով, բայց դրանից ժողովուրդը միայն աղքատացավ: Հեղինակը հիշեցնում է Ցիցերոնի այն միտքը, որ «Հարստություն բերող արհեստներից ամենից լավը, պտղաբերը, գվարձալին ու ազնվականին վայելը երկրագործությունն է»: Այնուհետև Սդիմարաճյանն անցնում է գյուղատնտեսության զարգացման հանգամանքների քննարկմանը: Նա շեշտում է եվրոպական երկրներում ոլորտի ծաղկումը՝ այն կապելով գիտական հիմունքներով վարելու հետ, որը լավ օրինակ պետք է ծառայի: Ուստի անհրաժեշտ է երկրագործության կրթական հաստատություններ հիմնել, ուղեցույցներ հրատարակել, խրախուսական հիմնադրամներ ստեղծել և այլն: Թեև աշխատասիրությունը հայ ժողովրդի բնորոշ գծերից է, բայց այն արդյունավետ օգտագործելու պայմաններ գրեթե չկան:

Պանդխտության խնդրի առնչությամբ հանդես են եկել Մ.Պարոնիկյանը և Բյուզանդը՝ առաջարկելով մեծ քաղաքների պանդուխտներին վերադարձնել բնավեր շեներն ու անմշակ հողերը: Դրա համար միջոցներ պետք է ձեռք առնվեն՝ նրանց պարտքերը մարելու համար:

Հիշատակված հեղինակները կարևորում են գյուղատնտեսական նշանակության վարկային հաստատությունների ստեղծումը:

Մ.Նալբանդյանի ոգով է տոգորված Ություճյանը՝ արժեքավորելով գյուղատնտեսությունը, առանց որի չկա ո՛չ ճշմարիտ հարստություն, ո՛չ մարդկային կյանքի գոյություն, ո՛չ տնական ապահովվածություն: Եվ առաջարկում է մշակել օրինակելի գյուղատնտեսական ձեռնարկություններ կազմակերպելու կանոններ, ինչպես նաև մշակաբույսերի արդյունավետությունը բարձրացնող միջոցառումներ իրականացնել:

Դրան համահունչ են Ն.Տաղավարյանի հրապարակումները, որոնք գերազանցապես նվիրված են գյուղատնտեսության զարգացման

տնտեսագիտական հարցերին: Կրելով ֆիզիոկրատների ազդեցությունը և քաղաքակրթության բարձր մակարդակին հասնելու համար շեշտելով երկրագործության դերը՝ առաջնահերթություն է համարում գիտությունների վերջին նվաճումներին համապատասխան գյուղատնտեսությունը վարելու խնդիրը: Այնուհետև նա ցույց է տալիս, որ տնտեսության մյուս զխավոր ճյուղերը, առևտուրն ու դրամաշրջանառությունը հիմնված են գյուղատնտեսության վրա: Երկրագործությունը հումք և նյութեր է մատակարարում վերամշակող արդյունաբերական ճյուղերին՝ սննդի, կաշու, կոշիկեղենի արտադրատեսակները, որոնք բնակչության կենսական պահանջմունքների բավարարման առաջին անհրաժեշտության առարկաներ են: Հեղինակը եզրակացնում է, որ երկրագործությունը արհեստների մայրն է:

Ամենին չանտեսելով առևտրի կարևորությունը, Տաղավարյանը մերժում է մերկանտիլիստների այն տեսակետը, թե վաճառականությունը կարող է հարստացնել ժողովրդին: Վերջինս հիմնավորելու համար նա բերում է Անգլիայի օրինակը, որի հարստության աղբյուրը ոչ թե վաճառականությունն է, այլ գյուղատնտեսական արտադրանքը, որն Անգլիան ստանում, վերամշակում և վաճառում է: Դրան հակառակ, Թուրքիան, լինելով գյուղատնտեսական երկիր, արտահանում է չմշակված արտադրանք էժան գներով, իսկ եվրոպական արտադրանքը՝ թանկ գներով, մի բան, որ տնտեսապես անընդունելի է: Այստեղ հարկ է նշել, որ Տաղավարյանը չի նկատում, որ նման դատողություններում հարստության աղբյուրը ոչ թե գյուղատնտեսությունն է, այլ արդյունաբերությունը:

Տաղավարյանը նշանակալից է համարում պետության հոգատար վերաբերմունքը գյուղատնտեսության նկատմամբ և ժողովրդագրական գործոնի նշանակությունը:

Բերված համառոտ ակնարկը վկայում է, որ գյուղարտադրության հիմնախնդիրները, սահմանափակված լինելով ժամանակի առանձնահատկություններով, գրեթե նույն շեշտադրումներով փոխանցվել են մեր օրերը:

Բոլոր գիտական հիմքերը կան ընդունելու, որ գյուղատնտեսությունը ազգային հարստության հիմքն է: Դա պայմանավորված է նրանով, որ նախ ապահովվում է բնակչության պարենային անվտանգությունը: Բավականաչափ նշանակալից է այս ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում, աշխատանքի շուկայում մեծ է գյուղատնտեսությամբ զբաղվածների տեսակարար կշիռը և լոկոմոտիվի դեր է կատարում արդյունաբերական /առանձապես թեթև և սննդի/ ճյուղերի համար, քանի որ գյուղարտադրանքի որոշ տեսակներ, վերամշակման փուլեր անցնելով, որպես հումք են ծառայում դրանց համար: Ընդ որում, *պարենային անվտանգությունը* չի սահմանափակվում միայն բնակչությանը սննդով ապահովվածությամբ, այլ դրա բավարար որակի և վերահսկողական գործառնություններով: Լայն իմաստով

պարենային անվտանգություն ասելով պիտի հասկանալ սննդի առկայության, մատչելիության և որակի համատեղ հնարավորություն:

Այստեղ մենք առնչվում ենք տնտեսական անվտանգության հիմնախնդրին: Չի կարելի շրջանցել նաև այն փաստը, որ հանրապետության բնակավայրերի մեծամասնությունը սահմանամերձ է, որն առաջացնում է պետական անվտանգության հետ կապված մտահոգություններ:

Ետսեփականաշնորման տարիներից ի վեր պարենային անվտանգությունը հաստատուն տեղ է գրավում ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարային ծրագրերի օրակարգում: Այդ գործընթացները, որոնք ուղեկցվում էին վարելահողերի մասնատման, տոհմային հոտերի ու նախիրների տրոհման ձեռնարկումներում, նոր հիմնախնդիրներ առաջացրին թե՛ բուսաբուծության, թե՛ անասնաբուծության բնագավառներում: Հետևանքն այն եղավ, որ փոշիացան գյուղատնտեսության արդյունավետությունն ապահովող ենթակառուցվածքները, անտեսվեցին կամ երկրորդվեցին գրեթե բոլոր կարևորագույն ագրոտեխնիկական պահանջները և տոհմային սելեկցիոն աշխատանքները: Արտադրությունն ստացավ տնայնագործական բնույթ, մի բան, որ սանիտարահիգիենիկ և որակական պահանջները չբավարարելուց բացի, օժտված լինելով ցածր ապրանքայնությամբ, խթանում է գների աճը:

Անասունների մթերատվության բարձրացման պոտենցիալ հնարավորությունները մեծապես կախված են լիարժեք կերակրելուց, այնինչ հանրապետությունում գլխավորապես օգտագործվում են կոպիտ կերեր, ինչը հանգեցրել է արտադրության մակարդակների կտրուկ անկումային միտումների: Կերարտադրության ժամանակակից զարգացումները տարվում են կոպիտ կերերի տեսակարար կշռի նվազեցման և հյութալի, խտացրած, լիառացիոն հատիկավորված և բրիկետավորված կերերի արտադրության աճի ուղղություններով:

Հանրապետության գյուղատնտեսության կառուցվածքային վերափոխումների և նրա առանձին օղակների միջև փոխհարաբերությունների նորովի ձևավորման պայմաններում արտադրության առաջընթացը կապված է արտադրական գործընթացները նոր տնտեսվարման պահանջներին համապատասխան կողմնորոշելու հեռանկարի հետ, որտեղ առանձնակի են կարևորվում ռեսուրսախնայողության, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման և արտադրության գիտական կազմակերպման խնդիրները:

Անասնապահական մթերքի ինքնարժեքի հաշվեկշռում ամենամեծ տեսակարար կշիռն ունի կերերի արժեքը, ուստի ինքնարժեքի հետագա իջեցման հնարավորությունները պետք է փնտրել կերարտադրության, կերերի նախապատրաստման և աշխատատար պրոցեսների մեքենայացման մեջ: Ուսումնասիրություններով հաստատված է, որ կերերի կուտակման և

պահպանման անկատար տեխնոլոգիաների պատճառով խոտի, սիլոսի և սենածի շուրջ 30%-ն ստացվում է ցածրորակ, սննդարար նյութերի 30-40% կորստով: Խոտի պատրաստման ամենապատասխանատու փուլը հնձաշերտի արագ ջրազրկումն է՝ հասցնելով այն 18-20%-ի, որն անհրաժեշտ է կատարել 10-12 օրվա ընթացքում, քանի որ հակառակ դեպքում կանաչ զանգվածի ածխաջրալիզինային կոմպլեքսում ավելանում են ցելյուլոզայի և լիզինի քանակները և նվազում՝ պրոտեինի, հանքային և կենսաբանական ակտիվ նյութերի պարունակությունը: Հիմնականում խոտը կուտակվում է մամլմամբ-հակավորմամբ, որը ստրոն եղանակի համեմատությամբ 3-4 անգամ նվազեցնում է աշխատանքային ծախսերը, պահեստավորման համար 2-3 անգամ փոքր տարածություն է պահանջվում, դյուրացվում են հաշվառումը, տեղափոխումը և բաշխումը: Սննդարար նյութերի կորուստներից խուսափելու և խոտի չորացման ինտենսիվությունը բարձրացնելու նպատակով մինչև հակավորումը կիրառվում է խոտի ակտիվ քամահարում, ինչպես նաև 30-40% խոնավությամբ զանգվածի հատուկ սրսկիչներով մշակումը պրոպինաթթվով (1տոննա խոտին՝ 1,5-2 կգ հաշվով): Հայտնի է նաև բարձր ջերմաստիճանի տակ (70-75°C) թմբուկային չորանոցներում կանաչ զանգվածի ակնթարթային խոնավազրկման մեթոդը, որը հնարավորություն է տալիս պահպանել վիտամինները, պրոտեինը և մյուս արժեքավոր սննդանյութերը, բայց այն տևական չէ: Վեց ամիս անց խոտալյուրում կարոտինի կորուստը կազմում է 30%, շուրջ 5% են կազմում կշռային կորուստները: Վերջիններս կրճատող առաջավոր եղանակներից են խոտալյուրի հատիկավորումն ու 20-25% խոնավությամբ կանաչ զանգվածի բրիկետավորումը:

Բրիկետավորումը առանց կապող միջոցների խոտի մամլումն է 50-150 սմ³ ծավալով և 500-1100 կգ/մ³ խտությամբ: Հատիկավորվածի համեմատությամբ բրիկետավորված կերերն ունեն այն առավելությունը, որ որպես ելանյութ օգտագործվում է ոչ թե խոտալյուրը, այլ չորացած կանաչ զանգվածը, որն հնարավորություն է տալիս տեխնոլոգիական գծից դուրս մղել չորացած կանաչ զանգվածը խոտալյուրի վերածելու գործողությունը՝ հանգեցնելով մեքենաների էներգատարության 45-50% իջեցման և չորացնող ագրեգատի արտադրողականության 5-15 % բարձրացման: Սա անթափոն գյուղարտադրության կազմակերպման ճանապարհին մեծ քայլ է և հնարավորություն է ընձեռում լուծելու մեծ տեսակարար կշիռ ունեցող կերատեսակի՝ ծղոտի օգտագործման հիմնախնդիրը: Այն խոտի հետ խառնելով, սննդարար բաղադրիչներ հավելելով և բրիկետավորելով՝ ստացվում են ըստ կենդանիների պահանջի ու սննդարարության լիառացիոն, հաշվեկշռված կերեր: Բրիկետավորված կերերը լավագույնս են համապատասխանում գյուղատնտեսական կենդանիների համար պատրաստվող կերերի նկատմամբ ներկայացվող գոտտեխնիկական

պահանջներին և դրականորեն են անդրադառնում արտադրվող մթերքի թե՛ քանակական, թե՛ որակական հատկանիշների վրա: Բրիկետավորված խոտը ամբողջական կամ հակավորվածի նկատմամբ ունի անվիճելի առավելություններ, որոնցից հիմնականներն են՝ 1. մեծ խտության շնորհիվ բրիկետներն համար են տեղափոխման, պահեստավորման և բաշխման հարմար, 2. կապող նյութեր չեն պահանջում, 3. համեմատաբար փոքր ծավալում թույլ են տալիս օգտակար նյութերի բարձր կուտակում, 4. կարող են պահպանվել երկար ժամանակ՝ սննդարար նյութերի անհամեմատ քիչ կորուստներով, 5. անասունների կենդանի քաշի միավոր աճի համար պահանջվում է ավելի քիչ բրիկետավորված խոտ:

Կերերի պատրաստման առաջավոր տեխնոլոգիաների շարքին է դասվում նաև կանաչ զանգվածի պահածոյացումը: Բրիկետավորվածի համեմատությամբ կերերի պահածոյացման ներդրումը կապված է որոշակի խնդիրների հետ, որոնք արտահայտվում են ոչ միայն մշակաբույսերի տեսակների սահմանափակությամբ, այլ նաև տեխնոլոգիական գծի առանձին օղակների մեքենայացման, հատկապես տեղափոխման, պահպանման և բաշխման դժվարություններով: Հանրապետության գյուղատնտեսության ներկայիս կառուցվածքային բնույթը թույլ չի տալիս կերերի պահածոյացման տեխնոլոգիան լայնորեն կիրառել: Այս տեխնոլոգիայի ներդրումը իրական հեռանկար կարող է ունենալ խոշոր ֆերմերային տնտեսությունների ձևավորման պայմաններում:

Աղյուսակ 1-ում բերված տվյալները վկայում են բրիկետավորված կերերի առավելությունների մասին:

Աղյուսակ 1. Սննդարար նյութերի և կարոտինի կորուստները տարբեր եղանակներով կերերի պատրաստման դեպքերում, %:

		Խոտ	Սենած	Բրիկետ
1.	Չոր նյութեր	32	10	6,9
2.	Կերամիավոր	48	17	13,5
3.	Պրոտեին	41	9	13,4
4.	Ածխաջրեր	30	25	0,7
5.	Կարոտին	83	33	14

Անասնապահական մթերքի արտադրության խթանման կարևոր ուղղություններից մեկը արդյունաբերական կերարտադրությունն է, մասնավորապես՝ բարձրորակ համակցված և սպիտակավիտամինային կերախառնուրդների արտադրության ծավալների ընդլայնումը, որը ոչ միայն կերերի նախապատրաստման արդյունավետ եղանակ է, այլև հնարավորություն է տալիս կերարտադրության մեջ օգտագործել գյուղարտադրության և արդյունաբերության թափոնները՝ միաժամանակ

լուծելով նաև արտաքին միջավայրի պահպանման հիմնախնդիրները: Այդուհանդերձ, համակցված կերերի պատրաստման հիմնական հումքը հատիկային կերերն են, որի սահմանափակ ծավալն Հայաստանում թույլ չի տալիս տեղական հումքի բազայի վրա համակցված կերերի արտադրությունը հաջողությամբ զարգացնել: Այս տեսանկյունից կարող ենք ասել, որ հատիկային կերախառնուրդների և այլ բաղադրամասների հետ բրիկետավորված լիառացիոն կերերի ստացումը ժամանակակից կերարտադրության հեռանկարային ուղղություններից է:

1970-ական թվականներից պրոֆեսոր Ս.Ե.Մարգարյանի գլխավորությամբ լայնածավալ գիտափորձնական աշխատանքներ են կատարվել կերարտադրության առաջավոր տեխնոլոգիաները Հայաստանում արմատավորելու ուղղությամբ: Աշխատակցելով այդ գիտական խմբում և վերլուծելով կերերի պատրաստման տեխնոլոգիաները, բրիկետավորված կերերի արտադրության գոյություն ունեցող մեքենասարքավորումների կառուցվածքային ու շահագործական պարամետրերը՝ կատարել ենք տեսական և փորձարարական հետազոտություններ, ճշտել այն ուղիները, որոնցով կարելի է հասնել հանրապետությունում կերերի բրիկետավորման տեխնոլոգիայի ներդրմանը: Դրանք վերաբերում են ինչպես օղակաձև հորիզոնական մատրիցայով հայտնի կառուցվածքի կատարելագործմանը և հուսալիության գնահատմանը, այնպես էլ կերերի բրիկետավորման տեխնոլոգիական գծերի մշակմանը և արտադրական գործընթացների օպտիմալացմանը: Մշակվել են օղակաձև բրիկետավորման մամլիչի սկզբունքորեն նոր կառուցվածքի տեսական հիմունքները, մասնավորապես փոխադրիչ-ջարդիչի տեսությունը: Տեսական և գիտափորձնական հետազոտություններով հիմնավորել ենք դրանց առավելությունը անդրադարձիչ թիթեղիկների տեսքով հայտնի կառուցվածքի նկատմամբ, քանի որ մամլման խցիկներից դուրս եկած մամլված նյութի ժապավենը բաժանում է միևնույն երկարությամբ բրիկետների՝ առանց դրանց ամրությունը նվազեցնելու: Առաջարկվել է հեղինակային իրավունքով պաշտպանված հարմարանք, որն էապես ինտենսիվացնում և արագացնում է բրիկետների հովացման պրոցեսը՝ բարձրացնելով դրանց ամրությունը: Ճշգրտվել են ցողունավոր կերերի որոշ ֆիզիկամեխանիկական հատկությունները և դրանցից պատրաստված բրիկետների շփման գործակիցները տարբեր մակերևույթների հետ, կառուցվել են կերերի բրիկետավորման աշխատանքային գործընթացների և բաղադրամասերի օպտիմալացման տնտեսամաթեմատիկական մոդելներ: Հետազոտությունների արդյունքներն ու հաշվարկման մեթոդաբանությունն օգտագործվել են ՊԿԲ-2,0 կցովի/շարժական/ և ՊԲ-2 ստացիոնար բրիկետավորման մամլիչների նախագծման և պատրաստման համար:

Առաջինն անցել է պետական փորձարկում, և հանձնարարվել է փորձնական խմբաքանակով արտադրել, իսկ երկրորդը՝ հաջող պետական փորձարկում:

Նույն գիտական խմբի կողմից մշակվել են կերերի մանրացման ցածր էներգատարությամբ մուրճային մեքենաներ, կերախառնիչներ և աշխատանքի սկզբունքով, էներգատարությամբ և տնտեսական ցուցանիշներով գոյություն ունեցողներին գերազանցող կերախառնուրդներ պատրաստող արտադրամաս:

Սակայն ԽՍՀՄ տարածքի գիտական ոլորտում տիրող բյուրակրատական բարքերը, ինչպես նաև Հայաստանին պատուհասած հախուռն իրադարձությունները կասեցրին վերոնշյալ աշխատանքների բնականոն ընթացքը:

Փաստորեն ՀՀ-ում կերարտադրության առաջավոր տեխնոլոգիաների ներդրման համար տեսական և գիտափորձնական բավարար նախադրյալներ ստեղծվել են, և միայն պահանջվում է իրատեսական մոտեցում, կամք և պետականամետ մոտեցում հիմնախնդրին: Այստեղ ուսանելի է Եվրոպական երկրների փորձը, որտեղ գյուղատնտեսության հիմքում ընկած են ընտանեկան ֆերմերային տնտեսությունները: Մեկ ընտանեկան տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 13,9 հա վարելահող, իսկ լրիվ աշխատաժամանակի ընթացքում նրանում զբաղված է մեկ մարդ: Այստեղ բնորոշ է տեխնիկական բարձր զինվածությունը, որին հատկացվում է արտադրական ծախսերի 50-60%-ը, իսկ աշխատուժի և սարքավորումների օգտագործման խնդիրը դրված է գիտական հիմքերի վրա: Եվրոպական երկրների ֆերմերային տնտեսություններում լայնորեն տարածված է տեխնիկայի համատեղ կամ վարձակալական հիմունքներով օգտագործման սկզբունքը: Ծախսերի կրճատման նկատառումներով ստեղծվում են տարբեր բնույթի կոոպերատիվ պահեստարաններ: Այստեղ հիմնավորված է խոշոր կամ հատուկ մասնագիտացված տնտեսությունների առավելությունը փոքրերի նկատմամբ:

Հայտնի է, որ գյուղատնտեսությունը երկրի տնտեսության իրական հատվածի ամենառիսկային ոլորտն է, և հիմնախնդրի առաջնահերթությունից ելնելով կարևորվում է կերարտադրության առաջավոր տեխնոլոգիաների ներդրման գործում պետական անվերապահ և անհատույց աջակցության դերը: Հանրապետության ներկայիս պայմաններում այն պետք է կապել կերարտադրության միջֆերմերային արտադրամասերի ստեղծման հեռանկարի հետ, որոնց անխուսափելիությունը հաստատված է զարգացած գյուղարտադրությամբ բնորոշվող Եվրոպական երկրների փորձով:

Գրականություն

- 1.Թովմասյան Ն. Ռ., Հայաստանի սովետական տնտեսագիտական մտքի պատմություն, Ե., 1983 թ.:
2. Թովմասյան Ն., Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր, Ե., 1988 թ.:
- 3.Մարգարյան Ս.Ե., Հատիկավորված և բրիկետավորված կերերի արտադրության տեխնոլոգիան, Ե., 1983 թ.:
- 4.Մարգարյան Ս.Ե., Կերարտադրության և անասնապահության մեքենայացում, Ե., 1988 թ.:
- 5.Հ.Ուռումյան և ուր., Ֆերմերային տնտեսությունների համար կերերի մշակման էներգախնայողական մեքենաների ստեղծման հիմնախնդիրները, Ե., 1998 թ.:
- 6.Հ.Ուռումյան, Կերերի բրիկետավորման տեխնոլոգիական գծի մշակումը և պարամետրերի հիմնավորումը, Ե., 2002թ.:
- 7.Ուռումյան Հ.Հ., Մնացականյան Ա.Ս., Կերախառնուրդների բաղադրիչների հարաբերակցության օպտիմալացումը, Ե., 2008թ.:
- 7.Баутин В.М., Формы совместного использования фермерами с/х техники в странах западной Европы, М.,1992г.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն. Մանասերյանը:

ՀՏԴ 330(479.243)Տնտեսագիտություն**Շուշանիկ ԱՍՐՅԱՆ***տ.գ.թ., դոցենտ**ԱրԴՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոն**E-mail: sh.asryan@gmail.com***Սեդա ԱՍՐՅԱՆ***ԱրԴՀ Տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի ստպիրանտ**E-mail: asryan.seda.18@gmail.com*

ԱՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՐՈՇ ԿՈՂՄԵՐՆ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ժամանակակից պայմաններում Արցախի Հանրապետության տնտեսության զարգացման հիմնահարցերը փոխառնվում են տնտեսության ձևավորված կառուցվածքային համամասնությունների հետ: Ընդհանուր առմամբ «ԱՀ տնտեսության կառուցվածքային համամասնությունների բնորոշ կողմերը արդի պայմաններում» հոդվածը ուղղված է տնտեսության հիմնական կառուցվածքային համամասնությունների բնորոշ կողմերի բացահայտմանը: Հոդվածում դիտարկվել են ՀՆԱ-ի, զբաղվածության կառուցվածքը՝ վեր հանելով առկա հիմնահանդիսները:

Բանալի բառեր՝ տնտեսության կառուցվածք, նյութային կառուցվածք, ՀՆԱ-ի կառուցվածք, արտադրական կառուցվածք, զբաղվածության կառուցվածք, կառուցվածքային համամասնություններ

Ш.АСРЯН, С.АСРЯН ТИПИЧНЫЕ АСПЕКТЫ СТРУКТУРНЫХ ПРОПОРЦИ ЭКОНОМИКИ РА В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

В современных условиях вопросы экономического развития Республики Арцах взаимосвязаны со сложившимися структурными пропорциями экономики. В целом статья «Типичные аспекты структурных пропорций экономики РА в современных условиях» направлена на выявление типичных особенностей основных структурных пропорций экономики. В

статье исследуется структура ВВП и занятости, выделяются существующие проблемы.

Ключевые слова: структура экономики, отраслевая структура, структура ВВП, структура производства, структура занятости, структурные пропорции.

SH.ASRYAN, S.ASRYAN
TYPICAL ASPECTS OF THE STRUCTURAL
PROPORTIONS OF THE REPUBLIC OF ARTSAKH'S
ECONOMY IN MODERN CONDITIONS"

In modern conditions, the issues of economic development of the Republic of Artsakh are interrelated with the formed structural proportions of the economy. In general, "Typical aspects of the structural proportions of the Republic of Artsakh's economy in modern conditions" article is aimed at revealing the typical features of the main structural proportions of the economy. The article examines the structure of GDP and employment, highlighting the existing problems.

Key words: economy structure, sectoral structure, GDP structure, production structure, employment structure, structural proportions.

Արդի պայմաններում կառուցվածքային համամասնությունները ձևավորում են տնտեսությունների զարգացման ինչպես օրակարգը, այնպես էլ նպատակները: Կառուցվածքային համամասնությունները պայմանավորում են նաև ազգային տնտեսությունների տնտեսական զարգացման հայեցակարգերը:

Մակրոտնտեսական վերլուծություններում, այդ թվում՝ կառուցվածքային վերլուծություններում, ազգային տնտեսության գնահատման կարևորագույն ցուցանիշ է համարվում ՀՆԱ-ն, ՀՆԱ-ի դինամիկան, ՀՆԱ-ի կառուցվածքը: 2016-2020թթ. ԱՀ ՀՆԱ-ի աճը միջինում կազմել է 4,9 տոկոս :

2016թ. գրանցվել է համեմատաբար ցածր՝ 9,2% տնտեսական աճ՝ պայմանավորված քառօրյա պատերազմով, իսկ արդեն հաջորդ երեք տարիներին՝ տնտեսական աճի երկնիշ թվեր: 2020թ. Ադրբեյջանի կողմից սանձազերծված պատերազմի պատճառով ԱՀ տնտեսական աճը կտրուկ վերափոխվեց անկման՝ կազմելով է -22.4%, իսկ ՀՀ-ում՝ -7,6 %: Համեմատելով տարածաշրջանի մի քանի երկրի հետ՝ տեսնում ենք, որ

2020 թ. Ռուսաստանի ՀՆԱ-ն նվազել է -3,1 %-ով, Թուրքիայինը աճել է 1,8 %-ով, իսկ Իրանինը՝ 1,5 %-ով:¹

ԱՀ տնտեսության զարգացման արդի մակարդակի՝ ըստ կառուցվածքային համամասնությունների ձևավորված հարաբերակցությունների ուսումնասիրությունները հանգում են նրան, որ ձևախեղումներն ակնհայտ են տնտեսական և սոցիալական ոլորտի գրեթե բոլոր բնագավառներում:

Տնտեսության հատվածային կառուցվածքի վերլուծության ժամանակ ելակետ է ծառայում երեք հատվածների մասին տեսությունը, որի հիմքերը դրել է Քոլին Քլարկն իր 1940թ. հրատարակված «Տնտեսական առաջընթացի պայմանները» գրքում: Ըստ այդ տեսության, առաջ է քաշվում ժամանակակից տնտեսության եռամակարդակ մոդելը (three-sector hypothesis): Ի լրումն դրա, թերևս կարելի է նկատել, որ որոշ հեղինակներ երրորդային հատվածից առանձնացնում են չորրորդայինը՝ տեղեկատվականը (տեղեկատվական տեխնոլոգիաներ, կրթություն, գիտական հետազոտություններ, գլոբալ մարքեթինգ, բանկային, ֆինանսական և այլ ծառայություններ, որոնք կապված են ոչ թե բուն արտադրության, այլ դրա պլանավորման և կազմակերպման գործընթացի հետ)²:

Այդուսակ 1- ի տվյալներից ակնհայտ է դառնում, որ տնտեսության առաջնային հատվածը չունի վառ ընդգծված գերակշռություն: Այսպես, 2020թ. արդյունքներով գյուղատնտեսության (ներառյալ ձկնաբուծությունը) տեսակարար կշիռը համախառն ավելացված արժեքում կազմել է 9,4%, իսկ հանքարդյունաբերությանը՝ 13,5%: Բանն այն է, որ այսպիսի ընդհանուր վերլուծությունը տալիս է հատվածային կառուցվածքի միայն աղավաղված պատկերը: Հատվածային կառուցվածքի մասին ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու համար հարկ է վերլուծել կոնկրետ հատվածների կառուցվածքը:

¹ Countryeconomy.com

² Աշոտ Եղիազարյան «Հայաստանի տնտեսության կառուցվածքային վերլուծությունը», «21-րդ դար», թիվ 3 (55), 2014թ, էջ 4:

**Աղյուսակ 1. Համախառն ներքին արդյունքը ըստ տնտեսության
հատվածների (տոկոսներով) 2018-2020թթ.**

	2018	2019	2020
Համախառն ներքին արդյունք (շուկայական գներով)	100	100	100
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	6,2	4,7	4,3
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	93,8	95,3	95,7
ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ			
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	10,9	9,4	9,4
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	16,7	13,7	13,5
<i>Ընդամենը առաջնային հատված</i>	<i>27,6</i>	<i>23,1</i>	<i>22,9</i>
ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ			
Մշակող արդյունաբերություն	4,1	8,3	3,9
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	7,5	7,8	9,0
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0,2	0,2	0,2
Շինարարություն	9,6	10,7	10,4
<i>Ընդամենը երկրորդային հատված</i>	<i>21,4</i>	<i>27,0</i>	<i>23,5</i>
ԵՐՐՈՐԴԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ			
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	0,7	0,7	0,6
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	0,6	0,6	0,5
Կացության և հանրային սննդի կազմակերպում	0,3	0,3	1,0
Տեղեկատվություն և կապ	2,4	2,3	2,3
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	8,5	9,1	11,0
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	0,6	0,7	0,8
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	0,4	0,4	0,5
Վարչարարական և օժանդակ գործունեություն	0,8	0,6	0,6
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	23,3	23,3	25,2
Կրթություն	5,7	5,2	5,9
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	3,9	3,5	3,7
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	1,2	1,1	1,3
Մպասարկման այլ ծառայություններ	0,2	0,3	0,2
Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու, տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	0,3	0,3	0,3

Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ	-4,1	-3,2	-4.6
<i>Ընդամենը երրորդային հատված</i>	<i>44,8</i>	<i>45,2</i>	<i>49,3</i>

Առաջնային հատված: Առաջնային հատվածը ներկայացնող գյուղատնտեսության ճյուղի հիմնական առանձնահատկությունը ցածր արտադրողականությունը և բնական գործոններից բարձր կախվածությունն է: Այդ մասին են վկայում ճյուղի զարգացումը բնութագրող վիճակագրական ցուցանիշները, մասնավորապես, ճյուղում իրական աճի տեմպերի տարբեր տարիներին նկատվող կտրուկ տատանումները, որի արդյունքում էլ առաջնային հատվածի տեսակարար կշիռը գնալով նվազում է ¹:

Երկրորդային հատված: Աշխատանքի հասարակական բաժանման խորացման արդյունքում առաջացել են ճյուղեր, ենթաճյուղեր և արտադրության տեսակներ, որոնք իրենց համախմբությամբ կազմավորում են մշակող արդյունաբերության ճյուղային կառուցվածքը: Սակայն Արցախի մշակող արդյունաբերությունն ունի ոչ միայն թողարկման բացարձակ առումով փոքր ծավալ (2020թ. մշակող արդյունաբերական արտադրանքի արտադրության համախառն ծավալը կազմել է 26540,4 մլն դրամ կամ 25,7%-ը), այլև պարզունակ և թերզարգացած կառուցվածք: Մշակող արդյունաբերության 47,4%-ը բաժին է ընկնում սննդամթերքի, իսկ 8%-ը՝ խմիչքների (կոնյակ, գինի և այլն) արտադրությանը: Նշված արտադրությունները հիմնականում գյուղատնտեսական հումքի և բնական ռեսուրսների պարզ օգտագործման վրա հիմնված գործունեության տեսակներ են կամ, այլ կերպ ասած, գործունեության ոչ բարդ տեսակներ, որոնք ենթադրում են ընդամենը հումքի առաջնային մշակում: Արդյունաբերության մեջ բավականին մեծ է *հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում* ճյուղի մասնաբաժինը՝ 46,9 տոկոս, ինչի հաշվին արդյունաբերությունը ՀՆԱ-ում գերազանցում է մնացած ճյուղերին:

Ինչպես տեսնում ենք, երկրորդային հատվածում զգալի կշիռ ունի շինարարությունը՝ 10,4% (կամ 28280,6 մլն դրամ): Հատկանշական է, որ շինարարական աշխատանքների մեծ մասն ուղղվել է ոչ թե մշակող արտադրական հզորությունների, հանքագործական արդյունաբերության

¹ gov.am

և բացահանքերի շահագործման (21,0%) շինարարությանը: 2020թ. գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտում իրականացված շինարարության ծավալները կազմել են 509,2 մլն դրամ կամ ընդհանուր շինարարության՝ 1%-ը: Երկրորդային հատվածում բացակայում են առաջատար ճյուղերը, բարձր տեխնոլոգիաներ պահանջող արտադրությունները: Այդպիսի կառուցվածքը ցույց է տալիս ոչ միայն տնտեսական զարգացման առումով խնդիրների առկայությունը, այլև երկրի մրցունակության և, ինչպես քառօրյա պատերազմը ցույց տվեց, նաև պաշտպանության բնագավառում թերացումները:

Երրորդային հատված: Երրորդային հատվածը ներառում է ծառայությունների, այդ թվում՝ առևտրի ոլորտը: 2018-2020թթ. տվյալներով՝ 2018թ. երրորդային հատվածը կազմել է ՀՆԱ-ի 44,8%-ը, իսկ 2020թ-ին՝ 49,3%-ը: 2018թ. երրորդային հատվածի 52%-ը (կամ ՀՆԱ-ի 23,3%-ը) բաժին է ընկնում պետական կառավարման ոլորտին, ինչը 2020. կազմել է ՀՆԱ-ի 25,3%-ը: Երրորդային հատվածում երկրորդ ոլորտը ֆինանսական և ապահովագրական գործունեությունն է՝ 22,3%-ով (կամ ՀՆԱ-ի 11%-ը): Այս երկու ոլորտները, կրթությունն (ՀՆԱ-ի 5,9%) ու առողջապահությունը և բնակչության սոցիալական սպասարկումը (ՀՆԱ-ի 3,7%) միասին կազմում են երրորդային հատվածի 19,5%-ը:

Զարգացող երկրներին բնորոշ է մեծ կախվածություն գյուղատնտեսական արտադրությունից և տնտեսական՝ զարգացած երկրներից: Սովորաբար զարգացող երկրներում գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում մեծ է, քանի որ այս երկրների տնտեսությունները սովորաբար դեռևս գտնվում են ագրարային փուլում: ԱՀ-ում գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում ևս փոքր չէ՝ 9,4 %: Համեմատության համար նշենք, որ զարգացած երկրներում այն կազմում է՝ Մեծ Բրիտանիայում՝ 0,7 %, Ֆրանսիայում՝ 1,7%, Գերմանիայում՝ 0,6 %, ԱՄՆ-ում՝ 1,1 %-ը: Հետևապես, ըստ իրական հատվածի ձևավորված կառուցվածքի՝ ԱՀ տնտեսությունը հիմնականում ագրարային է:

Գրաֆիկ 1. ԱՀ համախառն ներքին արդյունքի արտադրության կառուցվածքը %-ով, 2016-2020թթ.



Գրաֆիկ 1-ից ակնհայտ է, որ 2016-2020 թթ. ՀՆԱ-ի կառուցվածքում մեծ մասնաբաժինը պատկանում է *առևտուր և ծառայություններ* ոլորտին՝ միջինում 48,2%, այնուհետև արդյունաբերությանը՝ միջինում 25,4 տոկոս, ինչը պարբերաբար աճում է, բացառությամբ 2020 թ.: Շինարարության մասնաբաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում 5 տարվա կտրվածքով միջինում կազմում է 10,4 %, իսկ գյուղատնտեսության մասնաբաժինը՝ 11 %: Ձևավորված կառուցվածքային համամասնությունները, տնտեսության ճյուղերի անկայուն դինամիկայով պայմանավորված, ՀՆԱ-ի կառուցվածքում աճում են և հետագայում նվազում կամ հակառակը:

Կառուցվածքաբանության մեթոդաբանության համաձայն, ճյուղային կառուցվածքը լայն իմաստով դիտվում է որպես զբաղվածության և ՀՆԱ-ի կառուցվածքը՝ ըստ տնտեսության երեք հատվածների՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և ծառայությունների, իսկ ՀՆԱ-ի կառուցվածքը ձևավորող հիմնական գործոնները առանձին ճյուղերի զարգացման տեմպերն են:

Ազգային տնտեսության կառուցվածքային վերլուծության համար կարևոր մակրոտնտեսական բնութագրիչ է համարվում զբաղվածությունը:

Կարևոր է ընդգծել, որ բացի երկրների և տարածաշրջանների ընդհանուր աշխատանքային ներուժից, շատ կարևոր է վերլուծել աշխատանքային բնակչության բաշխումը աշխատանքի տարբեր ոլորտներում: Նման ուսումնասիրությունը արտացոլում է ինչպես տնտեսական զարգացման ընդհանուր մակարդակը, այնպես էլ տնտեսության մասնագիտացումը: Գոյություն ունեն գործունեության դասակարգման մի քանի տարբերակներ: Նրանցից մեկը տնտեսության երեք մակրոբլոկների տեղաբաշխումն է, առաջին ոլորտը՝ գյուղատնտեսությունն ու անտառատնտեսությունը, որսորդությունը և ձկնորսությունը, երկրորդ ոլորտը՝ արդյունաբերություն, շինարարություն և կոմունալ ծառայություններ, իսկ երրորդ ոլորտը ոչ արդյունավետ գործունեությունն է: Տնտեսության երեք հիմնական ոլորտներում զբաղվածության համեմատությունը հստակ բնութագրում է երկրի կամ տարածաշրջանի տնտեսության տեսակները՝ նախաարդյունաբերական (կամ ագրարային), երբ հստակորեն գերակայում է տնտեսության առաջին հատվածը, արդյունաբերական, երբ տեղակայված է արդյունաբերության և շինարարության բլոկը և հետինդուստրիալ, երբ ոչ արտադրական ոլորտը բնակչության զբաղվածության կառուցվածքում առավելագույն մասն ունի: Ընդհանուր առմամբ, համաշխարհային տնտեսության կառուցվածքը դեռևս բնութագրվում է գյուղատնտեսության մեջ աշխատող մարդկանց մեծ մասնաբաժնով, սակայն կան խիստ հակասություններ այս երկու հիմնական խմբերի՝ տնտեսապես զարգացած և զարգացող երկրների միջև:

ԱՀ աշխատանքի շուկայի վերլուծության համար նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել քանակական այն ցուցանիշների

դինամիկան, որոնք բնութագրում են նրա ծավալը, կառուցվածքը և ներուժը:

Աղյուսակ 2. ԱՀ աշխատանքային ռեսուրսները 2017-2019թթ.

	2017	2018	2019
Աշխատանքային ռեսուրսներ, 1000 մարդ	101,5	103,3	105,6
Տնտեսապես ակտիվ բնակչություն	64,1	67,8	71,9
